

ԱՂԱԶԱՆՅԱՆ Գ., ՄԿՐՏՉՅԱՆ Վ.,  
ՀԱԿՈԲՅԱՆ Պ., ՄՈՎՍԵՍՅԱՆ Ե..

ԴՐԱԿՈՆԻՉԱԿԱՆ ՎԻՃԱԿ-ԿՈՄԱԿԱԿԱՆ  
ԿՈՄՊԼԵՔՍԸ

ՀԱՅՊԽՏԴՐԱՏ

631.4:55(7) 15923

n-72 Եռկառածութիւն

Կառպիտիւն և ապահով

բարելիք:

5n.

568

—	—	—
—	—	—
—	—	—
—	—	—

ԱՊՈՔԱՆՅԱՆ Գ., ՄԿՐՏՉՅԱՆ Վ.,  
ՀԱԿՈԲՅԱՆ Գ., ՄՈՎՍԵՍՅԱՆ Ե.

631(Կ7)

Դ-72

ԱՍՈՒԹՅՈՒՆ է 1961 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԿՈՍՏԻՉԵՎԻ—ԿՈՍՏԻՉԵՎԻ—ՎԻԼՅՈՅՈՒ  
ԿՈՄՊԼԵՔՍԸ

15.9.23

A 17701  
II



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1949


АГАДЖАНЯН Г., МКРТЧЯН В.,  
АКОПЯН П., МОВСЕСЯН Е.

Комплекс  
Докучаева—Костычева—Вильямса  
(На армянском языке)  
Прмгиз, Ереван, 1949 г.

## ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1948 թվի Էռկոտեմբերի 20-ի պատմական որոշումը՝ «ՍՍՌՄ-ի եվրոպական ֆասիաստանային և անտառատափաստանային ռայոններում քարձր ու կայուն բերք ստանալու համար դաշտապաշտպան անտառատնկումների, խոտադաշտային ցանքաշրջանառությունների ներգրման, լճակների և ջրային ավազանների կառուցման մասին» մեծ խանդավառությամբ ընդունվեց ինչպես ողջ Սովետական երկրի, այնպես էլ Հայկ. Ռեսպուբլիկայի աշխատավորների կողմից: Բնության վերափոխման Ստալինյան այդ հոյակապ պլանը, որի հիմքում դրված է առաջավոր ագրորբուզիական գիտության լավագույն ներկայացուցիչներ՝ Դոկուչաևի, Կոստիլևի, Տիմիրյազեկի, Վիլյամսի, Միշուրինի, Լիսենկոյի բեղմնավոր ուսմունքը, նախատեսնում է հարմոնիկ կերպով միմյանց հետ շաղկապված՝ կլիմայի, հողի և բույսի վրա մեր ցանկացած ուղղությամբ ազդելու բազմավիսի միջոցառումների կիրառումը: Այս ուսմունքը կոչվում է Դոկուչաևի-Կոստիլևի-Վիլյամսի կոմպլեքս կամ երկրագործության խոտագաշտային սիստեմ:

Այս կոմպլեքսի էության, նրա մեջ մտնող առանձին խումբ միջոցառումների հետ մատչելի ձևով մեր լայն աշխատավորությանը ֆանոթացնելու նպատակով էլ հրատարակվում է սույն բրոշյուրը՝ Պրոֆ. Գ. Խ. Աղաջանյանը գրել է ընդհանուր մասը և 1, 6, 7-րդ գլուխները, Վ. Մկրտչյանը գրել է 2-րդ գլուխը, դոցենտ Պ. Հակոբյանը գրել է 3-րդ և 5-րդ գլուխները և դոցենտ Ն. Մովսեսյանը գրել է 4-րդ գլուխը:



## ՀՆԴԱԱՆՈՒԹ ՄԱՍ

1548 թ. հոկտեմբերի 24-ին հրապարակվեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի «ՍՍՌՄ-ի եվրոպական մասի տափաստանային և անտառատափաստանային ռայոններում քարձը ու կայուն բերք ստանալու համար դաշտապաշտպան անտառատնկումների, խոտագաշտային ցանքաշրջանառությունների ներդրման, լճակների և ջրային ավազանների կառուցման պլանի ժամանակ 20/10-ի պատմական որոշումը, որը հոյակապ է իր ծագալով և անգերազանցելի իր խորությամբ։

Այդ որոշումը կոչված է վերջ դնելու մեր ընթաց երկրի մի շարք թերթառատ շրջաններում հաճախակի կրկնվող և մեծ ավերածություններ պատճառող երաշտին և պայքարելու հողատարման (էրողիայի) դեմ։

Հայտնի է, որ վերջին 65 տարիների ընթացքում Անդրվոլոյան այլուններում երաշտը կրկնվել է 22 անգամ, Վորոնեժի, Վորոշիլովգրադի, Ստալինգրադի մարզերում—ավելի քան 15 անգամ, Բաշկիրական, Թաթարական, Մորդովական ԱՍՍՌ-ում, Կուբակի, Խարկովի, Դնեպրոպետրովսկի, Խերսոնի, Նիկոլաևի և Ղրիմի մարզերում—ավելի քան 10 անգամ։

Երաշտի դեմ պայքարելու աշխատանքները մեծ ծավալով կատարելը հնարավոր դարձավ միայն սովետական կարգերի ժամանակ, երբ մանր գյուղացիական տնտեսությունները միավորվեցին խոշոր սոցիալիստական տիպի տնտեսություններում—կոլխոզներում։

Համաձայն հոկտեմբերի 20-ի որոշման, մինչև 1965 թիվը տեկվելու հն ութ պետական խոշոր պաշտպանական անտառաշերտեր, անտառատնկումներ խոշոր մասշտաբներով կատարվելու հն ներկ կոլխոզների և սովորական հողերի վրա։ Տնկվող և ցանկող անտառները գրավելու հն 5.709.000 հեկտար տարածություն։

1949—1955 թվերի ընթացքում ավազուտների ամբացում կա-

տարվելու է 322.000 հեկտար տարածության վրայ Այդպիսի տերիտորիա անտառապատելու համար պահանջվում է մի քանի տասնյակ միլիարդ տնկանյութ (մինչև 32 միլիարդ): Այս բոլորից բացի լրացվելու և ամրացվելու են գոյություն ունեցող անտառային տընկարանները, կազմակերպվելու են մեծ թվով նոր տնկարանների

Մինչև 1950 թիվը ՍՍՌՄ-ի տափաստանային և անտառապատափաստանային շրջանների կոլխոզներում և սովխոզներում վերջացվելու է խոտանաշտային դաշտային և կերային ցանքաշրջանառությունների կիրառումը, իսկ նրանց լրիվ իրացումը ավարտվելու է 1955 թվից ոչ ուշ:

1949—1955 թվերի ընթացքում կառուցվելու են լճակներ և ջրամբարներ՝ կոլխոզներում 41300 և սովխոզներում 2928, ընդամենը 44228 լճակ և ջրամբար:

Անտառաշերտի ստեղծման աշխատանքների մեջանիզացիան ապահովելու նպատակով կազմակերպվելու են 570 անտառապաշտպան կայաններ, որի համար պետության կողմից խոշոր գումարներ են ներդրվում: Բնական տարերքի գեմ պայքարելու այսպիսի խոշոր օպերատիվ պլան, կոլխոզներում և սովխոզներում բարձր ու կայուն բերքի ապահովման համար այսպիսի միթխարի գործ կառող է ձեռնարկել միայն սովետական իշխանությունը:

Պարտիայի և կառավարության կողմից ընդունված այս պլանը իրոք որ հոյակապ է, ուստի և պարզ ու հասկանալի է, թե ինչու սովետական ժողովուրդը մեծ խանդավառությամբ դիմավորեց այն պատմական որոշումը:

1891 թ. ծանր երաշտից տաս տարի հետո՝ 1901 թ. Ռուսաստանի Նվազապական մասի տափաստանային և անտառատափաստանային շրջաններում նորից մոլեկոնում է երաշտն իր բոլոր ծանր հետևանքներով: Վլադիմիր Իլյիշ Լենինը, խոսելով այդ երաշտի պատճառով առաջացած աղեաի մասին, նշել է, որ ոչ մենաշաբաթի մասին էլ այն համառ ու երկարատև լինի, այնպիսի ժամանական զոհեր չի խլում, որքան խլում է երաշտը:

Գիտական սոցիալիզմի հիմնադիրներից՝ Ֆ. Էնգելսը, վերլուծելով հողատարման պատճառները և այդ շարիբի ծանր հետևանքները, իր «Բնության դիալեկտիկա» աշխատության մեջ՝ հետևյալ խորիմաստ և միանգամայն ճիշտ խոսքերն է գրել՝ «Են մարդիկ, ուրոնք Միջագետքում, Հունաստանում, Փոքր-Ասիայում և ակա վագրե-

բռում արմատախիլ էին անում անտառները վարելահողեր ստանաւ և նպատակով, չէին էլ երազում, որ դրանով նրանք այդ նույն երշ կը ըների քայլքայման հիմքն են դնում, անտառների հետ միասին զրկելով նրանց ջրի հավաքման և կուտակման կենտրոններից»:

Երաշտը և անտառների ոչնչացման հետեւանքով ուժեղացած հողատարման երևությները սանձահարելու և դրանց հետեւանքները շեղոքացնելու մասին են վկայում նաև մեր պարտիայի ու կառավարության մի շարք որոշումներն ու ցուցումները։ Երաշտի գեմ պայքարելու մասին խոսվում է նաև ընկեր Ստալինի գեկուցման մեջ պարտիայի 17-րդ համադրում, որտեղ ասված է՝ «Լեռջապես՝ Անդրվոլգյան երկրում երաշտի դեմ պայքարելու հարցը։ Անտառներ և անտառապաշտպան շերտեր տնկութելը Անգրովորդյան երկրի արևելյան շրջաններում հսկայական նշանակություն ունի։ Այս աշխատանքն, ինչպես հայտնի է, արդեն կատարվում է թե թեև չի կարելի ասել, թե այն տարվում է բավարար ինտենսիվությամբ...» (Ի. Ստալին— Լենինիզմի հարցերը։ ՀԿ(Բ)Պ Պարտ-քրատ, 1937 թ. էջ 833):

Եվ այդ բոլորից հետո միանգամայն տարօրինակ և նույնիսկ վայրենի է թվում կապիտալիստական երկրներում բարձրացրած այն վայնասունը, որը հաջորդեց հոկտեմբերի 20-ի որոշմանը։ Այդ տեսակետից մեծ հուանդ է թափվում դիշատիչ երկրագործության տիպար հանդիսացող կապիտալիստական Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ ոչ մի շանք չեն խնայում ապացուցելու, որ իր թե սովորական երկիրը հոկտեմբերի 20-ի պատմական որոշումը կայացնելիս օրինակ է վերցրել ԱՄՆ-ից։ Իզո՞ւր ջանքերու Այդ սուստ և որևէ հիմքից զուրկ զրագրատություններին չի կարող հավատալ ոչ մի լրջմիտ մարդ, որը քիչ թե շատ ծանոթ է հողատարման դեմ պայքարելու ուղղությամբ ԱՄՆ-ում տարվող աշխատանքների անփառունակ վախճանին։ Ոչ մի անշառ և ազնիվ մարդ չի կարող հավատալ մանափանդ ԱՄՆ-ում տպագրվող այդ ստահոդ տեղեկություններին, որտեղ վերջին երեք տարիների ընթացքում (1946, 1947, 1948) բնության այդ տարերքի դեմ պայքարելու գործին հատկացվել է ընդամենը 25,5 միլիոն դոլար, այսինքն 10 անգամ ավելի պակաս գումար, քան այդ երկիրը յուրաքանչյուր տարի ծախսում է Հունաստանում աղատագրական շարժումը ճնշելու համար։

Պարտիայի և կառավարության կողմից մշակված ծրագիրը,

որը վերափոխելու է բնությունը 120 միլիոն հեկտար տարածության վրա, վկայում է սովորական պետության հզորության, նրա անպարտելիության և կոլխոզային կարգերի կենսունակության ժամկին:

Հայրենական Մեծ պատերազմից սովորական ժողովուրդը հազիքող և ավելի ամրացած դուրս եկալ: Պատերազմի ահեղ մարտերում հաղթանակած սովորական ժողովուրդը այժմ՝ պատրաստվում է մի այլ մեծ պայքարի, սակայն այդ պայքարը այժմ տարվում է ոչ թե ռազմադաշտերում, այլ խաղաղ շինարարական ֆրոնտում, առաջակոր ազրորդության գիտության կողմից մշակված մեթոդներով ու հղանակներով: Հոկտեմբերի 20-ի պատմական որոշման մեջ մարմնավորված են մեր ժողովուրդի մեծ առաջնորդ գիտության կորիֆի Ի. Վ. Ստալինի հանձարեղ մտահղացումները՝ քնական ամենասուկալի շարիքներ երաշտի և հողատարման դեմ պայքարելու ուղղությամբ: Այդ որոշման մեջ միաժամանակ իրենց պրակտիկ իրազործման արտահայտությունն են գտել անվանի ուսագիտական ակադեմիա, Կոստիչևի, Տիմիրյանի, Վիլյամսի աւարիներով փայտայած երազները՝ դաշտապաշտպան անտառատընկումների, խոտադաշտային ցանքաշրջանառությունների կիրառման և հողի մասն կնձկային ստրոկտուրայի վերականգնման ու հետագա լավացման, ջրամբարների և լճակների կառուցման ու ջրալին ռեսուրսների առավել ուցինուալ օգտագործման, պարագացման սխստեմի կիրառման և ընդհանրապես առաջավոր գիտության նվաճումների ներդրման վերաբերյալ: Աշխատանքը մեծ է և պահանջում է մեծ լարվածություն:

Մարդկային պատմության մեջ իր ծավալով ու խորությամբ լգերազանցված այս Ստալինյան պլանի իրականացման հետևանքները այժմ նույնիսկ դժվար է պատկերել սպառիչ կերպով: Կանցնեն տարիներ և կփոխվի մեր սոցիալիստական հայրենիքի անծայրածիր դաշտերի ողջ տեսքը: Այստեղ, ուր այժմ փշում են շիկացած քամիները և իշխում են խորշակները, պատճառելով ավերածություններ, այնտեղ, ուր այժմ լայնածավալ տարածությունների վրա սփռված են անկենդան ավագուտներն ու ամայի անապատները, պատմականորեն ամենակարճ ժամանակից հետո ծածկվելու են կանաչազարդ դաշտերով և խիտ անտառներով: Կանցնեն տասնյակ և հարյուրավոր տարիներ և մեր ապագա սերունդները մեծ երախ-

տաղիտությամբ կհիշեն ժամանակակից սերնդի կատարած պանծագի աշխատանքը և նրա փայլուն հաղթանակը բնության տարերքի դեմ:

Երաշտի դեմ ճիշտ և ժամանակին միջոցներ ձեռք առնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ նրա էությունը, պարզել նրա պատճառները: Առանց այդ պատճառները պարզելու հնարավոր մի լինի կանխորոշել երաշտի ժամանակը, պարզել նրան ենթակա շրջանները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումները:

Երաշտն առաջանում է հետեւյալ հիմնական պատճառներից՝ օդի չորությունից, մթնոլորտային տեղումների պակասից կամ երկարատև բացակայությունից՝ ամառային ամիսներին և օդի ջերմության բարձրացումից:

Երաշտը հիմնականում օդի և հողի չորությամբ է արտահայտվում: Չորությունն է, որ խոշոր վնասներ է պատճառում գյուղատնտեսությանը, չորությունն է, որ այնքան շատ շարիքներ է պատճառել և այժմ էլ շարունակում է պատճառել մեր երկրի մի շաբթ շրջաններում: Կովել օդի և հողի չորության դեմ՝ նշանակում է կը զերծ երաշտի դեմ:

Բերքի վրա ազդող երկրորդ պայմանը խոնավ օրերի թիվն է՝ գարնանացան հացահատիկների թվակալման ֆազայից սկսած մինչև նրանց հասկալելիք, որը հիմնականում տեղի է ունենում մայիս-հունիս ամիսներին: Երբ եղանակը խոնավ է, պակասում է ջրի գոլորշիացումը հողի մակերեսից, մնանաւմ է բույսերի արմատների համար մատշելի ջրի պաշարը հողում և ստացվում է բույսերի աճման ու զարգացման համար նպաստավոր միջավայր: Եթե, իհարկե, դրա հետ մեկտեղ օդի ջերմության ուժեղ անկում տեղի չի ունենում:

Երաշտը պայմանավորող երրորդ պատճառը օդի ջերմության ամենաբարձրացումն է, որը մեծ վնասներ է պատճառում հենց այն պատճառով, որ առաջ է բերում օդի և հողի չորացում: Բարձր ջերմություն ունեցող օդում միևնույն քանակի խոնավությունը առաջնաւմ է ավելի պակաս հարաբերական խոնավությունը, քան թե սառը օդում, և որքան օդի ջերմությունը բարձր է լինում, այնքան էլ պակաս է լինում օդի հարաբերական խոնավությունը, այնքան ավելի է ուժեղանում ջրի գոլորշիացումը հողի մակերեսից: Բույսերն ավելի է ուժեղանում ջրի գոլորշիացում, այնքան ավելի է պա-

կասում հողում եղած ջրի պաշարը և այդ բոլորի հետևանքով ավելի է դժվարանում բույսերի կենսական պրոցեսների նորմալ ընթացքը

Հողն ինքը օդի չորության պատճառ դառնալ չի կարող, ընդհակառակը, նա գոլորշիացնելով իր մեջ եղած ջուրը, կարող է միայն որոշ շափով մեղմացնել օդի շորությունը:

Բույսերի աճման ու զարգացման համար օդի շորությունը և անձրեների երկարատև բացակայությունը այնքան էլ սարսափելի չեն լինի, եթե հողը բավականաշափ չուր պարունակի: Օդի շորությունը ինքնըստինքյան վնասակար չի: Նա վտանգավոր է նրանով, որ բույսը չոր օդի մեջ ավելի շատ չուր է կորցնում, քան ստանում է նա հողից: Դրա հետևանքով բույսը սկսում է թառամել, թոշնել, իսկ ավելի երկարատև շորության դեպքում՝ բույրովին շորանալ:

Օդի չերմության բարձրացման և հողի շորանալու նկատմամբ կատարված բազմաթիվ փորձերից ու դիտողություններից պարզվել է, որ այդ երեսվիները տեղի են ունենում հետեւալ պայմաններում:

1. Օվկիանոսների մակերեսութից հսկայական քանակությամբ չուր է գոլորշիանում: Այդ ջուրը, բարձրանալով մինուրատի վերին շերտերը, այնտեղ ամպեր է գոյացնում: Մասնավորապես Ալլանտյան օվկիանոսի վրա տիրող արևմտյան և առավել ևս հարավարեւմտյան քամիները այդ ամպերը քշում են դեպի արևելք և հյուսիս-արևելք: Ճանապարհին այդ ամպերն իրենց են միացնում հանդիպած ջրային գոլորշիները և է՛լ ավելի հագենում խոնավությամբ, ու այդ վիճակում հասնում Եվրոպայի ափերին: Ճանապարհին խոնավ օդը աստիճանաբար սառչում է, որի հետեւանքով պակասում է նրա մեջ եղած խոնավությունը, որովհետև այդ խոնավության մի մասը խտանում, ջրային կաթիներ է կազմում, և այդ կաթիներն անձրևի ձևով թափվում են հողի վրա: Օդից ջրի նմանօրինակ անջատումը, առանձնապես ուժեղ կերպով տեղի է ունենում աշնանը, որովհետև այդ ժամանակ հողը և օդը ավելի սառն են լինում: Հենց այդ է պատճառը, որ աշնանային ամիսները տարվա ամենաանձրևոտ ամիսներն են և եղանակն անկայուն է ու խարուսիկ: Կինում են խոնավ, առատ անձրևային տարիներ և երաշտ տարիներ, երբ հողի և օդի շորությունը և շողը մեծ շափով իջեցնում են բույսերի բերքատվությունը և որոշ դեպքում էլ կատարյալ անբերրիություն են առաջացնում: Եղանակի այդպիսի խիստ փոփոխություն-

ները առաջ են գալիս նրանից, որ օդի հոսանքները, զանազան պատճառներից, երբեմն շեղվում են իրենց սովորական ուղուց:

2. Երաշտի երկրորդ պատճառ կարող են լինել հարավ-արևելքից՝ մերձկասպյան անապատներից փշող տաք և չոր քամիները՝ Հայաստանում այդպիսի քամիներ փշում են Իրանի անապատներից: Այդ անապատներում ամեն տարի երաշտ է լինում, այնտեղ օդը չոր է և խիստ տաք:

3. ՍՍՌՄ-ի հարավ-արևելյան շրջաններում երաշտը կարող է նաև այլ պատճառներից առաջանալ: Պարզվել է, որ այստեղ ժամանակ առ ժամանակ արևմտյան և հյուսիս-արևմտյան քամիների բերած խոնավության ճանապարհը պատի պես փակում է այն չոր օդը, որն այստեղ է հասնում Դաղախստանից և Սիրիից: Դրա հետևանքը լինում է այն, որ խոնավ օդը փոխում է իր ուղղությունը և սուրում է դեպի հյուսիս-արևելք, իսկ հարավ-արևելքում առաջանում է երաշտ: Երաշտի այս տեսակը ուժեղ շրացնող քամիներուն չի ուղեկցվում, սակայն իր կործանիլ ազգեցությամբ նա երաշտի նախորդ տեսակից շատ քիչ է տարբերվում:

4. Երաշտի շրբորդ պատճառը ոչ թե հարավից, այլ հյուսիսից փշող շոր օդի հոսանքներն են: Այդ հոսանքները մթնոլորտի վերին շերտերից իշնում են ցածի շերտերը և տաքանում: Սառը օդը շատ քիչ խոնավություն է պարունակում, որը և ցած իշնելով և ուժեղ տաքանալով ավելի է շրացնում և խիստ կերպով չորացնելով՝ հողը՝ վնասում ցանքերին:

Երաշտի դեմ հաջող պայքար կազմակերպելու տեսակներից շատ կարենու է ուսումնասիրել օդի հոսանքների շարժման ուղիները, նրանց ուժեղությունը: Այդ դեպքում միայն հնարավոր է նախօրոք որոշել, թե ե՞րբ և ո՞ր շրջանում պիտի տեղի ունենա երաշտ և այդ աղետի վնասները մինիմումի հասցնող միջոցներ կիրառել:

Երբ որևէ շրջանում կամ կետում հատվում են երկու կամ մի քանի հոսանքներ, այդ շրջանում երաշտը կրում է ավելի սուր, ավելի երկարատև բնույթ և նրա պատճառած վնասներն էլ լինում են ավելի մեծ:

Չոր քամիները երաշտի ուղեկիցներն են և երաշտի ժամանակ կարող են լինել: Այդ քամիներն առաջ են գալիս օդի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժերից՝ մթնոլորտային ճնշման տարբերություններից: Մեղ մոտ Հայաստանի շրջաններում երաշտ հաճախ

Հինում է առանց չոր քամիների, բայց ընդհանուր առմամբ այդ չոր քամիները համարյա միշտ ուղեկցում են երաշտին (Միկոյան, Ա. պիգբեկով, Սիսիան, Գորիս, Կոտայք, Ախտա, Նոր Բայազետ, Մարտունի, Թասարգեշար, Աշտարակ, Թալին, Աղին, Աղարսյան, Ալագյաղ, Հոկտեմբերյան և այլն): Երաշտի դեմ պայքարելու գործում սոցիալիզմին նախորդող բոլոր հասարակական ֆորմացիաները անզոր էին, և ցածր ու անկայում բերքը երկրագործության անխուռ սափելի ուղեկիցներն էին, որը իր փայլուն արտահայտությունն է գտել ոչ միայն գիտական մասնագիտական աշխատանքներում, այլև նաև գեղարվեստական գրականության մեջ: Ստորև Սալտիկով-Եշեղինից բերած մի փոքր հատված սպառիչ կերպով պատկերում է այն սոսկալի վիճակը, որ ստեղծվել էր 1891 թ. ծանր երաշտի ժամանակ ցարական Ռուսաստանում՝ «Երկինքը շիկացել էր և խորշակի ամբողջ հեղեղ էր թափում շրջապատի վրա: Օդում կարծես թրթրոց էր նկատվում և այրվածքի հոս էր փշոսմ: Գետինը ճարճքվել էր, կարծրացել և ամրացել, ինչպես քարը, այնպես որ ոչ արորով և ոչ էլ նույնիսկ բահով փորել անհնարին էր: Խոտերը և բանջարաբույսերի ծիլերը գալկացել էին, աշորան վերջացրել էր իր ծաղկումը և հասկալել էր ժամանակից շատ վաղ, սակայն այնքան նոոր էր և հատիկն այնքան նվազ, որ հույս չտնեին նույնիսկ սերմացուն հավաքելի Գարնանացանները բոլորովին չծլեցին և զաշտերը մնացին մերկ, սև, որպես ձյութ, ճնշելով մարդու վրա իրենց անհույս ժերկությամբ: Նույնիսկ թելուկը չծլեց, անասունները մննշում և իրենց այս ու այն կողմ էին նետում, դաշտում սննդու շգտնելով, նրանք վախչում էին քաղաք և լցնում փողոցները: Մարդիկ քայլում էին պիմիկոր...» և այլն: Այս պատկերը տիպիկ է եղել նախկին՝ ցարական Ռուսաստանի համար:

Երաշտի պարբերականությունը, ցածր բերքը և սովորական տառաջացրել էին անօդնականության, դատապարտվածության, պասսիվության, անվաստահության, միստիկ տրամադրության և սննդութապարտության դգացմունք: Կալվածատերերի կառավարությունից և կապիտալիստների գիտությունից օգնություն և իրենց այրող հարցերին պատասխան չտանալով, հուսալքված գյուղաքիությունը դիմում էր գերբնական ուժերի օգնության, պատարագներ և զոհաբերություններ անելով և աստծուց անձրեւ հայցելով:

Պարզ է, որ նման վիճակի հետ չեին կարող հաշտվել առաջա-

Վոր գիտության, դեմոկրատական գիտության լավագույն ներկաւացուցիչները Այդ բանն առանձնապես ուժեղ կերպով արտահայտվել է 1891 թվի երաշտից հետո, մի երաշտ, որը ամբողջապես ցնցել է ոռոսական դյուլը և ծանր աղետների պատճառ դառնել Թրանից անմիջապես հետո մի շարք առաջավոր գիտնականներ շտապել են իրենց փորձն ու գիտությունը ի սպաս դնել համաժողովրդական ազնական հետի—երաշտի դեմ պայքարելու գործին:

Իզմաիլսկին հրապարակել է իր «Ինչպես շրացավ մեր պահաստանը» աշխատությունը, որում պարզել է բնական բուսականության դերը երաշտի հետևանքները մեղմացնելու գործում: Նա գրել է, որ եթե շարունակվի հետագայում ևս տափաստանների մեր՝ կացումը բուսականությունից, ապա կարճ ժամանակամիջոցում ոռոսական հարթավայրերը կվերածվեն մերկ անապատներին:

Հոշակավոր ֆիզիոլոգ Կ. Ա. Տիմիրյազեը հրապարակել է իր «այսուհի պայքարը երաշտի դեմ» աշխատությունը, որում սպառի պարզությամբ ցույց է տվել մշակվող բուսի դերը երաշտի դեմ պայքարելու գործում և նրա այդ արժեքավոր հատկանիշների վրա ազդելու ուղիները:

Վ. Վ. Դոկուչաևը, նոր գենետիկական հողագիտության արդ ստեղծողը «Մեր տափաստանները առաջ և այժմ» իր կլասիկ աշխատության մեջ նկարագրել է Ռուսաստանի շրացին շրջանների հողագործությանը անասելի վնասներ պատճառող երաշտի պատճառները և մշակել է նրա դեմ պայքարելու միջոցառումները: Նա գրել է, որ երաշտի և էրողիայի գլխավոր պատճառը տափաստանների հարուստ բուսականության ոչնչացումը և հողի անսիստեմ մշակության հետևանքով նրա ստրուկտորագրկությունն է, որից հետո նա կորցնում է մինուլորեալին տեղումների ջուրը կլանելու ընդունակությունը: Նա միանգամայն իրավացիորեն գտել է, որ երաշտի դեմ հաջող պայքարելու գործում վճռական նշանակություն ունի այն պատճառների լիկվիդացիան, որոնք առաջացնում են այդ պահը: Ենելով իր բազմաթիվ դիտողություններից և աշխատություններից նա դետերի գարնանային վարարումները կանոնավորելու նպատակով առաջարկել է ծառապատել գետերի եղրերը, ձորերի և հեղեղատների լանջերը, կառուցել ջրամբարներ՝ վարարած գետերի ջուրը հավաքելու և հետագայում ոռոգման նպատակներով օդուագործելու համար: Նա խորշակների դեմ պայքարելու համար նա խորշակների դեմ պայքարելու համար:

առաջարկել է դաշտավաշտավան անտառաշերտեր ստեղծել այնտեղ, ուրիշը են չոր քամիները, անտառավատել ջրբաժանները, ավագուտները: Նա միաժամանակ նշել է այնպիսի ադրբությոցառումներ, որոնք նպաստում են հողի մեջ ջուր կուտակելուն և ռազիոնալ կերպով օգտագործելուն: Խոր վար կատարել, հողի խոր, լավ ստրուկտուրա ունեցող շերտը երես բարձրացնել, բույսերի հաջորդականություն սահմանել, թեք լանջերում վար չկատարել, տեղի պայմաններին հարմարված կուտուրական բույսեր մշակել և այլն): Այդ պլանը նա մշակել է կես դար սրանից առաջ, սակայն իր լիարժեքությամբ, բազմակողմանիությամբ, ծավալով և խորությամբ հիացմունք է պատճառում նաև այժմ: Իր իդեաները մասսայի սեփականություն գարձնելու համար նա կազմակերպել է դասախոսություններ, զեկուցումներ, թանգարաններ, գիտական ընկերություններ, հանդես է եկել մամուլում և այլն: Երկարատև ու համար պայքարից հետո Դոկուշակին հաջողվել է իրականացնել իր առաջարկների միայն մի մասը: Նրան հաջողվել է սահմանափակ տերիտորիայի վրա նախկին Կամեննայա Ստեղ կոչվող վայրում կազմակերպել փորձակայան, որն այժմ կոչվում է Դոկուշակի անվան Կենտրոնական սևահողային գոտու հացահատիկային տընտեսության ինստիտուտ: Այդ կայանում առաջին անգամ անձամբ Դոկուշակի տնկած անտառաշերտերը գոյություն ունեն մինչև այժմ, որոնք մեծապես փոխել են շրջակայքի բնությունը: Դոկուշակի պլիսավորած էքսպեդիցիայի շնորհիվ չոր տափաստանների անսահման տարածություններում ստեղծվել է մի կուլտուրական օջախ, որտեղ երաշտի մասին այժմ խոսում են, որպես պատմական անցյալի ժաման: 1946 թվի ծանր երաշտի ժամանակ անգամ այդտեղ ստացվել է 16—17 շ/հ: Հացահատիկի բերք, այն ժամանակ, երբ հարեան կոլխոզներում ստացվել է 3—4 անգամ պակաս ընթրք:

Մուս մյուս խոշոր գիտնական Պ. Ա. Կոստիչելը, որը հանդիսանում է երկրագործության խոտագաշտային սիստեմի աշխի ընկերող հիմնագիրներից մեկը, իր կլասիկ աշխատություններով պարզել է ստրուկտուրայի կարեռագույն նշանակությունը: Հողի բնորդության բարձրացման գործում: Նա մանրամասն ուսումնասիրել է անցյալ դարի երկրորդ կեսի երկրագործության պատմությունը ու երա վիճակը և կուլտուրական բույսերի բերքատվության ուժեղ տատանումների խոր անալիզի հիման վրա եկել այն եզրակացու-

թյան, որ այդ տատանումները համարյա լրիվ շափով կախված են եղանակի պայմաններից: Նրա սուր հայացքից չի վրիպել այն փառքը, որ խոպանները և մարգագետինները հերկելու և մշակման տակ դնելու, նաև անտառները սիստեմատիկորեն ոչնչացնելու հետևանքով վատանում է ոռուական տափաստանների կլիման, պրոդրեսիվորեն զարգանում է էրոզիան, գոյանում են ձորակներ, իջնում է գրունտի ջրերի մակերեսը և մեծանում է հողերի աղբոտվածությունը մոլախոտերով: Նա պարզել է նաև, որ տափաստանների հողի փոշիացման գլխավոր պատճառները երկարատև սխալ անսխատեմ մշակումն է ու տնտեսության ոչ ռացիոնալ վարումը: Նա նկատել է, որ այդպիսի հողերում երաշտ տարիներին բերքը կամուտատրովիկ կերպով իջնում է, այն ինչ նոր վարած ճիմուտում նույն պայմաններում բավականին բարձր բերք է ստացվում: Պ. Ա. Կոստիչեն այն առաջին գիտնականն էր, որը պարզեց բազմամյա խոտաբույսերի դերը հողի մանր կնձկային ստրովկտուրան վերականգնելու գործում: Այդ հայտնաբերումը ազգումիական գիտության պատմության մեջ կարևորագույն նշանակություն ունի: Դրանից հետո էր, որ Կոստիչեն համաշխարհային հոչակ ձեռք բերեց:

Կոստիչենից հետո մի շարք այլ ոռուառաջավոր գիտնականներ՝ Իզմաիլսկին, Բարակովը, Կլինդենը և ուրիշները ուսումնասիրել և ապացուցել են բազմամյա խոտաբույսերի խառնուրդների կարենորդերը հողի մանր կնձկային ստրովկտուրայի վերականգնման գործում:

Պ. Ա. Կոստիչենի խորաթափանց հայացքից չի վրիպել նաև անտառների գրական ազդեցությունը կլիմայի մեղմացման և երաշտի դեմ պայքարելու գործում, և նա իր աշխատություններում ընդգծել է անտառի խոշոր դերը պաշտերի վրա ձյուն պահելու և կուտակելու գործում: Նա միանգամայն իրավացիորեն հերքել է մի շարք գիտնականների այն ոչ ճիշտ կարծիքը, որ իրը թե անտառը չորացնում է հողը և, հետեւապես, տափաստաններում նա երկարժամանակ իր գոյությունը պահպանել չի կարող: Նա գրել է, որ նույնիսկ 1891 թվի ուժեղ երաշտի պայմաններում ինքը ամենուրեք, ինչպես նոր, այնպես էլ հին տնկված և բնական անտառներում տեսել է միանգամայն թարմ ու կանաչ ծառեր: Նրա վկայությամբ ոչ մի ծառ երաշտից չի տուժել, բացի այն ծառերից, որոնք ճնշվել են քոլախոտալին բուականության կողմից:

Պ. Ա. Կոստիչևը երաշտի դեմ պայքարելու գործում մեծ նշանակություն վերագրել է նաև հողի մշակման լավացմանը: Իր շարք աշխատություններում նա նկարագրել է սև ցելի մշակման կատարելագործման եղանակները, որոնք մինչև այժմ ել շեն կորցրել իրենց թարմությունը: Այսպես, նա գտել է, որ անձրևների բացակայության պայմաններում սև ցելի ամառային խոր երկակի փարից պետք է խուսափել և բավականանալ միայն վերին շրացած ջերտի երեսվարով, ձեռք շտալով ցածի խոնավ շերտերին: Այդպիսի երեսվարը, ոչնչացնելով մոլախոտային բուսականությունը, միաժամանակ կատարյալ կերպով պահպանում է հողի խոր շերտերում կոստակված խոնավությունը: Հետագայում Կոստիչևի այս դրույթն ևս ճշտվել է միանգամայն: Արդարացել է նաև Պ. Ա. Կոստիչևի այն տեսակետը, ըստ որի ցելահողամասի զրական ազդեցությունը արտահայտվում է ոչ միայն առաջին հաջորդ աշնանացան կուլտուրայի, այլև մի քանի հաջորդող գարնանացան կուլտուրաների վրա: Այս ցելի տինքնամաքրման «երևույթը դարձյալ առաջին անգամ նըկատել է» Պ. Ա. Կոստիչևը: Նա նկատել է, որ սև ցելում մոլախուտերի մատադ ծիլերը հողի և օղի ուժեղ տաքանակում շեն դիմանում և ոչնչանում են:

Երաշտի դեմ պայքարելու գործում մեծ դեր վերագրելով սև ցելին, Կոստիչևը մեծ ուշագրություն դարձրել է նաև ցրտահերկի վրա: Գարնանացանների համար հողի աշնանային վարը նա համարել է պարտադիր:

Նա մի շարք խորաթափանց մտքեր է արտահայտել նաև գարնանային նախացանքային աշխատանքների, ժամանակին ցանք կատարելու, գոմազրի պահպանման և ճիշտ օգտագործման և մի շարք այլ հարցերի մասին:

Բազմաթիվ դիտողությունների անալիզի հիման վրա Կոստիչևը եկել է այն եղրակացության, որ հողում ջրի պաշարն ավելացնելու և երաշտի դեմ պայքարելու գործում մեծ նշանակություն ունի նաև ձյուն պահելը: Նա նույնիսկ մշակել է ձյուն պահելու և դաշտերում կոստակելու եղանակները: Ազգունոմիայի պատմության մեջ Կոստիչևը առաջինն է եղել, որն առաջարկել է ձյուն պահելու նպատակով օգտագործել արևածաղկի և եղիպատացորենի ցողունները:

Ճիշտ առաջացնում նաև Պ. Ա. Կոստիչևի արժեքավոր տեսական մտքերը հողի և մթնոլորտի օղի գաղափոխանակության

պատճառների, հողի հումուսի առաջացման դրծում միկրօրգանիզմների դերի և մի շարք այլ հարցերի մասին:

Պ. Ա. Կոստիչևի հիմնական դրույթները հողի կայուն մանր կնձկային ստրոկտորայի ստեղծման, հողում օրգանական նյութի կուտակման և հողի մշակման եղանակների վերաբերյալ իրենց լրիվ արտահայտությունն են գտել երկրագործության խոտագաշտային սիստեմում, ստուգիկ են Դոկուլակի անվան Կենտրոնական սեահողային գոտու հացահատիկային տնտեսության խստիտուտի պրակտիկայում և միանգամայն արդարացրել են իրենց:

Պ. Ա. Կոստիչևի կարեոր ծառայություններից մեկն էլ այն է, որ նա, ինչպես և անտառագետներ Տիխոնովը և Տուրակին, հիմնավորեն է տափաստանային անտառատնկման տեխնիկայի հեշտացման և կատարելագործման անհրաժեշտությունը, ենելով միշտեսակային պայքարի օրենքներից տափաստաններում: Նա գրել է, որ «Անտառաներում կատարված բոլոր դիտողությունները բերում են այն եղանակացության, որ խոտային բուսականության կոնկուրենցիան տափաստաններում անտառների ծղման ու աճման միակ արգելքն է» և նա գրել է նաև, որ «Աևահողային գոտու հողերը ընդունակ են տալու տարրեր բույսեր: Այդ հողերում կարող է աճել անտառ, և եթե մի անգամ նա աճել է, ապա այլևս չի կարող դուրս վանվել այլ բույսերի կողմից: Սակայն մեծ մասամբ սևահողերն զբաղված են խոտային բուսականությամբ—տափաստանային՝ բարձրագիր մասերում և մարդագետնային՝ ավելի ցածր տեղերում: Այդ բուսականությունն ևս կայուն կերպով պահում է իր գրաված տարածությունը և առանց մարդու միջամտության հազվագյուտ դեպքերում է դուրս վանվում ժառանակին բուսականության կողմից»: Ենելով այս միանգամայն ճիշտ դրույթներից, նա անհրաժեշտ է համարել իրենց կյանքի առաջին տարիներին ծառատնկինները պաշտպաններ վայրի խոտային բուսականության մրցակցությունից: Ենելով պրոֆ. Տուրսկու ցուցմունքներից, Կոստիչևը տափաստանային անտառատնկման հետեւալ աշխատանքներն է առաջարկել՝

1. վար և փոցխում, 2. տնկում, 3. աշնանային տնկումների գարնանային լրացում, 4. խոտերի մաքրում 1-ին տարին 5 անգամ, 2-րդ տարին 3 անգամ, 3-րդ տարին 2 անգամ, 4-րդ տարին ըստ Կոստիչևի ռերիտասարդ ծառերը համակցվում են իրենց գագթներով, որից հետո նրանց համար այլևս վայրի բուսականու-

Թյան մրցակցությունը սարսափելի չէ: Անտառի գոյությունը տվյալ վայրում մշտապես ապահովված է:

Սյապիսով, վերը թվարկած մի քանի աշխատություններում արդեն նշվել և պարզվել են այն ազրոնոմիական միջոցառումների կոմպլեքսի հիմքերը, որը այժմ կոչվում է երկրագործության խոտագաշտային սիստեմ:

Սակայն սոցիալիստական գյուղատնտեսության պայմաններում չեր կարելի մեխանիկորեն կիրառել նախառևողություն ազրոնոմիայի կողմից մշտակած՝ բերքատվության բարձրացման առանձին, թեկուզ և շատ կարևոր միջոցառումները: Անհրաժեշտ էր, հենվելով կլասիկ ռուս. ազրոնոմիայի հարուստ ժառանգության վրա, մշտակել միջոցառումների մի այնպիսի սիստեմ, որը ապահովեր հողի բերրիության բարձրացումն ու բույսերի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Անհրաժեշտ էր միաժամանակ տալ իրենց—բույսերի ու կենդանիների օրդանիգմների վերափոխման և կատարելագործման նոր մեթոդներ: Դա առանձնապես կարենոր էր այն պարզ պատճառով, որ բույսերն ու կենդանիները, որոնց հետ մենք գործ ենք ունենում, դարեր շարունակ դաստիարակվել են վատ, պրիմիտիվ պայմաններում և չեն կարող տալ այնպիսի արդյունք, ինչպիսին պահանջվում է այժմ, նոր՝ սոցիալիստական երկրագործության պայմաններում:

Ահա հենց այդպիսի ազրոնոմիական տեսություն սովորական թշնամության օրոք ստեղծեցին ակադ. Վ. Ռ. Վիլյամսը, պատվավոր ակադեմիկոս Ի. Վ. Միջուրինը, ակադեմիկոս Տ. Պ. Լիսենկոն:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը շատ բարձր էր գնահատում Դոկտորականի, Կոստիչենի, Իզմաիլսկու և ուրիշների կատարած աշխատանքը: Նա այդ առթիվ գրել է, որ Պոկուչակը, Կոստիչենը, Իզմաիլսկին, Կորժինսկին, Պաշոսկին, Տանֆիլենը, Կելլերը, Վիսոցկին սուս այն հսկաներն են, որոնք հիմնովին ուսումնասիրել են տափաստանային գոտին և ռավելի քան կես գար հենել են այդ գոտու հեռավոր և մոտավոր անցյալի կանվան՝ նրա լավագույն ապագան կառուցելու համար: Եկավ նոր մարդը: Նա կվերցնի այդ գիտնականների աշխատությունները, քննադատորեն կվերլուծի նրանց և այն ամենը, ինչ ուշադրության արժանի է ու արժեքավոր, կդնի իր աշխատանքի հիմքում: Դոկուչակի և ուրիշների աշխատանքները չեն կորչեալ:

Նվ իսկապես ակադեմիկոս Վիլյամսը հողագործության պատ-  
ժության մանրակրկիտ ուսումնասիրության, ոռու ժողովրդի եր-  
կարամյա փորձի հաջլառման, Դոկուլակի, Կոստիչևի և առաջա-  
վոր գիտության այլ ներկայացուցիչների աշխատությունների ու իթ-  
երկարատև հետազոտությունների տվյալների խորը անալիզի հի-  
ման վրա մշակեց գյուղատնտեսական կուտուրաների բերքատվու-  
թյան և անասնապահության մթերատվության բարձրացման վերին  
աստիճանի արժեքավոր սիստեմ, որը նա անվանեց երկրագործու-  
թյան խոտադաշտային սիստեմ:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի կողմից մշակված այդ մատե-  
րիալստական տեսությունն այժմ իրավամբ համարվում է սովե-  
տական առաջավոր ագրորիոլոգիական գիտության պարծանքը:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսին վիճակվեց վայլում կերպով և  
վերջնականապես լուծել բաղմանյա խոտարույսերի վճռական դերը  
հողի կայուն ստրոկտուրա ստեղծելու և այդ ստրոկտուրան պահ-  
պանելու ու լավացնելու գործում: Նրան վիճակվեց հիմնավորելու  
խոտադաշտային ցանքաշրջանառությունների և այդ ցանքաշրջա-  
նառությունների դաշտերում կիրառվող ագրոտեխնիկական աշխա-  
տանքների սիստեմի վճռական դերը հողի փոշիացած ստրոկտու-  
ռան վերականգնելու և նրա բերրիությունը բարձրացնելու գործում:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի մշակած երկրագործության խո-  
տադաշտային սիստեմը բաղկացած է մի շարք ձեռնարկումներից:  
որոնք հարմոնիկ կերպով կապված են միմյանց հետ, լրացնում են  
միմյանց և կազմում են մի ամբողջություն: Ակադեմիկոս Վիլյամսը  
բազմիցս շեշտել է, որ իր սիստեմի բոլոր օղակները պարտադիր  
կերպով պետք է իրագործվեն ժամանակին, ճիշտ և անպայմանորեն  
լրիվ:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը ապացուցել է, որ երկրագործու-  
թյան ամենախոշոր խնդիրը, այն է հողի բերրիության բարձրացու-  
մը, լավագույն ստրոկտուրա ստեղծելու միջոցով հնարավոր է այն  
դեպքում միայն, եթե կիրառվեն խոտադաշտային դաշտային և  
կերային ցանքաշրջանառություններ և խոտադաշտն զբաղեցվի ըն-  
դուկտների և հացարույսերի ընտանիքներին պատկանող բազմամ-  
ության խոտարույսերի խառնուրդով: Այդ խոտարույսերի խառնուրդը  
մի քանի տարի տնտեսական օգտագործման մեջ մնալով, հողի վա-  
ռելաշերտում թողնում է մեծ քանակությամբ, օրգանական մնա-

ցարդներ և կրի միացություններ, այսինքն այն ամենը, ինչ անհրաժեշտ է կայուն մանր կնձկային ստրոկտուրա ստեղծելու համար

Համաձայն ակադեմիկոս վ. Ռ. Վիլյամսի ուսմունքի, լավ ստրոկտուրա ունեցող հողում զրի մեծ կորուստ տեղի չի ունենում, այդ կորուստը կաղմում է տարեկան տեղումների ընդհանուր բանակի մոտ 15 տոկոսը, իսկ մնացած 85 տոկոսը յուրացվում է օքտագործելի է դառնում: Միանգամայն հակառակ վիճակ զուգահեռ ունի փոշիացած, վատ ստրոկտուրա ունեցող հողում:

Ակադեմիկոս վ. Ռ. Վիլյամսի աշխատություններից պարզվել է նաև ստրոկտուրայի խոշոր դերը հողի մշակման ժամանակ լավ որակ աշխատանք կատարելու, հողի երկրորդային աղակալման և ալկալիացման երեսությների դեմ պայքարելու և ընդհանրապես հողի քերրիտության բարձր ֆոն» ստեղծելու գործում:

Երկրագործության խոտագաշտային սիստեմը կենդանի գործի վերածելու համար ակադեմիկոս վ. Ռ. Վիլյամսը կաղմել է խոտագաշտային ցանքաշրջանառությունների տիպեր ՍՍՌՄ-ի տարրեր դոտինների համար, պարզել է այն պատճառները, որոնք հողի փոշիացում են առաջացնում և նշել այդ փոշիացման բացասական հետևանքները մինիմումի հասցնելու միջոցները, ուսումնասիրել և պարզել է լավորակ սերմերի, պարարտացման, եղած շրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և իր մշակած ագրոտեխնիկական աշխատանքների ամբողջական սիստեմի կիրառման կարեոր նշանակությունը՝ բարձր ու կայուն բերք ստանալու գործում: Նա պարզել է նախագութանիկ ունեցող գութանով վար կատարելու, ցրտաճերի սիստեմի (խողանի երեսվար և ցրտավար), նախացանքային աշխատանքների սիստեմի և բույսերի խնամքի սիստեմի բարձրորակ կիրառման կարեոր նշանակությունը երկրագործության խոտագաշտային սիստեմում:

ՍՍՌՄ-ում լայն շափերով իրականացված արտադրական փորձը ցույց է տալիս, որ երկրագործության խոտագաշտային սիստեմի անթերի կիրառումը հնարավորություն է տալիս հաջողությամբ պայքարել երաշտի դեմ, լավացնել կլիման և կանոնավորել երկրի դրային ռեժիմը, ամրացնել ավազուտները և ձորերի, ձորակների ու լեռների թեք լանջերի հողատարման ենթակա հողը, ավելի ռացիոնալ օգտագործել եղած հողային տարածությունները, բարձրացնել հողի բերրիությունը և ստանալ բարձր ու կավուն բերք:

Երկրագործության խոտագաշտային սիստեմը հնարավորություն է տալիս ավելի բազմակողմանիորեն զարգացնելու տնտեսությունը և ճիշտ հարաբերակցություն ստեղծելու դաշտավարության, անասնապահության ու տնտեսության այլ ճյուղերի միջև։ Այդ սիստեմը հնարավորություն է տալիս բարձրացնելու նաև տնտեսության ապրանքայնությունը, որը խոշոր նշանակություն ունի։

Երկրագործության խոտագաշտային սիստեմին անցած տընտեսությունների ուսանելի փորձը մի անգամ ևս վկայում է այն անժխտելի ճշմարտության մասին, որ այժմս արդեն զյուղատնտեսության առաջավոր տեխնիկայով զինված և բարձր բերքի համար մզգող պայքարում հսկայական փորձ ձեռք բերած մեր կոլխոզներն ու սովորողները ի վիճակի են ամենակարև ժամանակամիջոցով մեծ շափով բարձրացնելու դաշտերի արտադրողականությունը և անասնապահության մթերատվությունը, ի վիճակի են կատարելու մի թիշք՝ երկրագործության և անասնապահության զարգացումը անհամեմատ ավելի բարձր աստիճանի հասցնելու համար։

Արտադրական փորձից պարզվել է նաև, որ երկրագործության խոտագաշտային սիստեմն աշքի է ընկնում ոչ միայն իր բարձր էֆեկտիվությամբ, այլ և իր մատչելիությամբ և լայնորեն յուրացվելու առանձնահատկությամբ։ Այդ փորձը հնարավորություն է տալիս վստահ կերպով հայտարարելու, որ այժմ արդեն, սոցիալիստական զյուղատնտեսության զարգացման ներկա պայմաններում, մեր կոլխոզներն ու սովորողները բոլոր հնարավորություններն ունեն յուրացնելու երկրագործության խոտագաշտային սիստեմը, և, անկախ եղանակի պայմաններից, ոչ միայն մեծացնելու ժշակվող կուտուրաների բերքատվությունը, այլև ստեղծելու անասնապահության զարգացման համար կերի կայուն բաղաւ։ Այդ մասին փայլուն կերպով վկայում է մեր երկրի մի շաբթ կոլխոզների և սովորողների փորձը, որոնք նույնիսկ 1946 թվի ծանր երաշտի պայմաններում, ակաղեմիկոս վ. Ռ. Վիլյամսի երկրագործության

խոտադաշտային սիստեմի կիրառման հետևանքով, կարողացել են ստանալ բարձր բերք:

Այսպիս, Դոկուլամի անվան Կենտրոնական սեաճողային գոտու հացահատիկային տնտեսության դիտահետազոտական ինստիտուտի դաշտերում, որտեղ իրականացվել է երկրագործության խոտադաշտային սիստեմը, հացահատիկային կուլտուրաների բերք կրկնապատկվել է: Խսկ 1946 թվի ուժեղ երաշտի պայմաններում այստեղ աշնանացան ցորենը տվել է հեկտարին միջին 16,5 ցենտներ, աշնանացան աշորան՝ 15 ցենտներ, գարնանացան ցորենը՝ 10,6 ցենտներ, վարսակը՝ 15,8 ցենտներ, արևածաղիկը՝ 21,2 ցենտներ, արսինը հարևան կոլխոզներից 3—4 անգամ ավելի բարձր բերք:

Ռուստովի մարզի «Գիգանտ» սովորով նույն 1946 թ. երաշտի պայմաններում խոտադաշտային ցանքաշրջանառությունների իրացման և ավելի քան 600 հեկտար տարածության վրա դաշտապաշտապան անտառատնկումներ կատարելու շնորհիվ 21.000 հեկտար տարածությունից աշնանացան ցորենի 15—17 ց/հ. միջին բերք է ստացել, խսկ 300 հեկտարից՝ ավելի քան 25 ցենտներու

Նույն Ռուստովի մարզի Սալսկու ռայոնի կոլխոզները, իրենց դաշտերում 2.600 հեկտար տարածության վրա դաշտապաշտապան անտառային շերտեր աճեցնելու, խոտադաշտային ցանքաշրջանառություններ կիրառելու և բարձր ագրոտեխնիկա գործադրելու միջոցով 1946 թ. հացահատիկային կուլտուրաներից ստացել են հեկտարին միջինը 13,6 ցենտներ բերք, առանձին կոլխոզներ ապահովել են նույնիսկ 18 ց/հ. հացահատիկի բերք:

Մոսկվայի մարզի «Պորեղա» և Խրուշչևի անվան կոլխոզները, Սվերդլովի մարզի «Կրասնայա Զարյա» և մի շաբաթ այլ կոլխոզներ, շնորհիվ երկրագործության խոտադաշտային սիստեմի կիրառման (մասնակի), արդեն մեծ նվաճումներ են ձեռք բերել ինչպես հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման, այնպես էլ անասնապահութան արտադրանքի ավելաց-

Ման գործում («Պորեղա» կոլխոզում 20 տ/հ., Խըռչշնի անվան կոլխոզում 19—20 տ/հ., «Կրասնայա Զարյա» կոլխոզում 16—17 տ/հ.):

Ստալինգրադի մարզի մի շաբթ կոլխոզներ, երկրագործության խոտադաշտային սիստեմի կիրառման և դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման շնորհիվ հացահատիկային կուլտուրաների յուրաքանչյուր հեկտարից 3—5 ցենտներ ավելի բերք են ստանում, քանի հարեան կոլխոզները, որոնք չունեն ոչ յուրացված խոտադաշտային ցանքաշրջանառություններ և ոչ էլ դաշտապաշտպան անտառաշերտեր: Այդ տեսակետից մեզ մոտ Հայկական ՍՍՌ-ում աշքի է ընկնում Ախտայի շրջանի Թանտան պյուղի Գր. Հարությունյանի անվան կոլխոզը, որը մասնակիորեն յուրացնելով խոտադաշտային 9—դաշտյա ցանքաշրջանառություն և կիրառելով հարաբերականորեն բարձր ագրոտեխնիկա, վերջին մի քանի տարիների ընթացքում դգալի հաջողություն է ձեռք բերել: Այսպիս են նաև Բասարգեշարի շրջանի Նորակերտ, Նոր Բայազետի շրջանի Հացառատ, Արտաշատի շրջանի Թարղալու պյուղերի կոլխոզները և այլն:

Ինչպես արդեն ասվել է, ուստի առաջավոր գիտնականներ իզմաիլսկու, Դոկուչաևի, Կոստիչևի, Տիմիրյազևի, Վիլյամսի երկարամյա ու բեղմնավոր աշխատություններից պարզվել է, որ երաշտի հնթակա շրջաններում այդ աղետի առաջն առնելու միջացառումները բազմաթիվ ու բազմապիսի են, սակայն դրանք ըստ իրենց բնույթի բաժանվում են վեց խմբերի:

Առաջին խոմքը. պաշտպանական անտառաշերտերի տնկառմք ջրամաններում, ցանքաշրջանառությունների դաշտերի սահմաններում, ձորակների և հեղեղատների լանջերում, դետերի և լքների եղբերին, ջրամբարների և լճակների շուրջը, նաև ավազութերի անտառապատումը և ամրացումը:

Երկրորդ խոմքը. տերիտորիայի ճիշտ կազմակերպումը՝ բնատադաշտային դաշտային և կերային ցանքաշրջանառություններ

արմատավորելու և բոլոր հողատեսքերը սացիոնալ օգտագործեցու  
միջոցով:

Երրորդ խոմբ. Հողի ճիշտ մշակման և ցանքերի խնամքի  
սիստեմը, առաջին հերթին սև ցեղերի, ցրտահերկի և խոզանի ե-  
րեսվարի լայն կիրառումը:

Չորրորդ խոմբ. օրգանական և հանքային պարարտանյութե-  
րի ճիշտ սիստեմի կիրառումը:

Ճինչերորդ խոմբ. տեղի պայմաններին հարմարված, բարձր  
բերք տվող սորտերի ընտրված սերմով ցանք կատարելը:

Եվ վերջապես, վեցերորդ խոմբ. ոռոգման պարփացումը տե-  
ղի ջրային ռեսուրսների լայն օգտագործման բավարար լճակ-  
ներ և ջրամբարներ կառուցելու միջոցով:

Այժմ անցնենք այդ առանձին խոմբ միջոցառումների քննաթե-  
մանը և կոմպլեքսի մեջ նրանց հարաբերական արժեքի պարզա-  
բանմանը:

## ԳԼՈՒԽ ԱԹԱԶԻՆ

ՊԱՇՏՈԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՋԵՐՏԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ ԶԲԲԱԺԱՆՆԵ-  
ՔՈՒՄ, ՑԱՍՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՏԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵ-  
ՔՈՒՄ, ՀՈՐԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԵՂԱՏԵՐԻ ԼԱՆՁԵՐՈՒՄ, ԳԵՏԵՐԻ  
ԵՎ ԼՃԵՐԻ ԵԶՐԵՐԻՆ, ԶՐԱՍԲԱՐՆԵՐԻ ԵՎ ԼՃԱԿՆԵՐԻ ՇՈՒՔՉԸ,  
ՆԱԵՎ ԱՎԱԶՈՒՏՆԵՐԻ ԱՆՏԱՌԱՊԱՏՈՒՄԸ ԵՎ ՍՄՐԱՑՈՒՄԸ

### 1. ԽՈՇՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՇԵՐՏԵՐԻ ՍԻՍՏԵՄ ՍՏԵՂԾԵԼԸ

Խորշակների կործանարար ազդեցությունը մշակվող կուկասու-  
րաների բերքի վրա հաղթահարելու, հողատարման դեմ պայքա-  
րնելու, ջրային ռեժիմը և կիրմայական պայմանները լավացնելու  
նպատակով, տափաստանային և անտառատափաստանային շըր-  
շաններում, 1950—1965 թվերի ընթացքում, հոկտեմբերի 20-ի  
պատմական որոշման համաձայն, ստեղծվելու հն ոլթ խոշոր պե-  
տական պաշտպանական անտառային շերտեր, որոնք ոմնենալու  
են հետեւյալ ուղղություններ՝

1. Պենզա—Եկատերինովկա—Վեշենսկայա—Կամենսկ—Խոպ-  
րա, Մեգլեդիցա, Կալիտվա և Բերեզովյա գետերի ջրամանների  
վրա, բաղկացած երեք շերտից, յուրաքանչյուրը 60 մետր լայնու-  
թյամբ, 600 կիլոմետր երկարությամբ և մեկը մյուսից 300 մետր  
հեռավորությամբ:

2. Կամիշին—Ստալինգրադ—Վոլգա և Բովլյա գետերի ջրա-  
մանների վրա, բաղկացած երեք շերտից, յուրաքանչյուրը 60 մետր  
այնությամբ, 170 կիլոմետր ընդհանուր երկարությամբ և մեկը  
ժյուսից 300 մետր հեռավորությամբ:

Այս երկու պետական պաշտպանական անտառային շերտերը

ունենալու են մեծ նշանակություն անտառահիգրոլոգիական տեսակետից։ Պարզված է, որ 60 մետր լայնությամբ և 300 մետր միջիքտային աղատ տարածությամբ 3 շերտից բաղկացած անտառատնկումները մեծ չափով նպաստում են ջուր պահելուն։ Ենթերի այսպիսի դասավորությունը ստեղծում է յուրահատուկ անտառանկարային ջրային ռեժիմ, որն աշխի է ընկնում նրանով, որ նախ ձյուն շատ է կուտակվում և երկրորդը, որ այդ ձյունը հալչում է դանդաղ, ծծվում է հողի մեջ և մեծացնում կուտակված ջրի պաշարը։

Անտառը հողի ջրային ռեժիմը կանոնավորով կարևորագույն ֆակտորներից մեկն է. այդ է պատճառը, որ ակադեմիկոս Վ. Բ. Վիլյամսը անտառի գոյությունը պարապիր է համարում բոլոր երկրամասերի, բոլոր շրջանների համար, անկախ կլիմայական և հողային պայմաններից։ Տիմիրյավելի անվան Գյուղատնտեսական Սկագեմիայի անտառաբուծության ամբիոնի տառ տարվա ուսումնասիրություններից պարզվել է, որ անտառային բացուտներում ձմռան վերջում ձյան ծածկոցն ունեցել է միջինը 53 սմ բարձրություն, իսկ անտառից աղատ դաշտերում՝ 20% պակաս Ձյան ջրի միջին պաշտամբ բացուտներում կազմել է 131 մմ, իսկ բաց դաշտերում՝ 107 մմ։

Անտառը նպաստում է նաև ստորերկրյա ջրերի բարձրացմանը, որը գյուղատնտեսության մեջ ունի խոշոր արտադրական նշանակություն։ Նախկին «Կամեննայա Ստելա» կողմանը վայրում կատարված գիտողությունները ցուց են տվել, որ դարնանը ստորերկրյա ջրերի բարձրացումը կազմում է բաց դաշտում 70 սմ, դաշտապաշտպան անտառաշերտերի միջև գտնվող հողում մինչեւ 100 սմ, իսկ անտառաշերտի տակի հողում — մինչեւ 160 սմ։ Պարզվել է նաև, որ անտառաշերտի տակ գտնվող հողի ջուրը աստիճանաբար սննում է շերտերի միջև ընկած հողերի գրուման ջրերը, որը և մեծ շափով արտահայտվել է 1940—1946 թ. թ. 1946 թվի ուժին երաշտի պայմաններում դաշտապաշտպան անտառաշերտերի միջև գտնվող հողերի ստորերկրյա ջրերը ամբողջ երկու ամիս սնվել են այն ջրի հաշվին, որը գտնվել է անտառաշերտերի տակի հողում, իսկ 1940 թվին այդ երևույթը տեսել է նույնիսկ մինչեւ 4 ամիս։

Հողի ժակերեսից հոսող մինուլորտային տեղումների մի թասք

Հասնում է գետերի ափերին։ Գյուղատնտեսական արտադրության տեսակետից շատ կարևոր է, որպեսզի մակերեսային հոսի փոխարեն չուրը թափանցի հողի մեջ, դանդաղորեն թեք լանջերով տեղաշարժվի գեղի սելեֆի ցածրադիր մասերը և որքան կարնի է ուշ թափի գետերի մեջ։ Այդ նպատակին, ըստ ակադեմիկոս Վ. Բ. Վիլյամսի ուսմունքի, ծառայում է գետերի ափամերձ շերտերի անտառապատռմբ։ Խոշոր պետական պաշտպանական անտառամբին շերտերի սիստեմում այս նպատակին ծառայելու են հետեւաչերտերը։

3. Սարատով—Աստրախան, Վոլգա գետի երկու ափերի ուղղությամբ, յուրաքանչյուրը 100 մետր լայնությամբ և 900 կիլոմետր երկարությամբ։

4. Վիշնյովյաց լեռ—Զկալով—Ուրալսկ—Կասպից ծով, Ուրալ գետի երկու ափերի ուղղությամբ, վեց շերտից բաղկացած (երեք ազ ափին, երեքը ձախ), յուրաքանչյուրը 60 մետր լայնությամբ, 1080 կիլոմետր ընդհանուր երկարությամբ և մեկը մյուսից 100—200 մետր հեռավորությամբ։

Ուրալ գետի անտառազուրկ հովիտը անմիջականորեն կից է Ղաղախստանին, առաջինն իր վրա է ընդունելու Միջին Ասիական անտառաների տաք շունչը, հետևապես այստեղ ջրի մակերեսացքին հոսի մորիլիզացիան բացառիկ կարեոր նշանակություն ունի։ Այդ է պատճառը, որ Ուրալո-Կասպիական պետական անտառատըն-կումները բաղկացած են լինելու 6 շերտից, իսկ շերտամեջյան տարածությունը տատանվելու է 100—200 մետրի միջև։

5. Խոնավացման համեմատարար ավելի լավ պայմանների մեջ է գտնվում Դոն գետի հովիտը, և հենց այդ է պատճառը, որ Դոնով-Դոն ափամերձ պետական պաշտպանական անտառաշերտը, որը տնկվելու է Դոն գետի երկու ափերի ուղղությամբ, բաղկացած է լինելու 60 մետր լայնություն (յուրաքանչյուր ափին) աւնեցող միայն մեկ շերտից։ Այս շերտի երկարությունը կազմում է 920 կիլոմետր։

6. Խոնավացման է՛լ ավելի լավ պայմանների մեջ է գտնվում Դոն գետի վտակ Հյուսիսային Դոնեցի ավագանը։ Դրանով էլ բացարկում է այն, որ Հյուսիսային Դոնեցի երկու ափերի ուղղությամբ, թելգորոդ քաղաքից մինչև Դոն գետը տնկվող պետական անտառային պաշտպանական շերտերից յուրաքանչյուրը ունենալ-

լու է միայն 20 մետր լայնություն, իսկ երկարությունը հասնելու է 300 կիլոմետրի:

Այսպիսով, Վոլգա, Դոն և Ուրալ գետերի հովտներում, երկարածան և չորս ամփամերձ խոշոր պետական պաշտպանական անտառային շերտերի միջոցով, որոնց ընդհանուր երկարությունը կազմելու է 4170 կիլոմետր, հիմնովին փոխվելու են կլիմայական պայմանները և հողի խոնավացման ու մթնոլորտային տեղումների հոսի առանձնահատկությունները:

7. Մնացած երկու խոշոր պետական պաշտպանական անտառային շերտերը պետք է հղոր արգելը հանդիսանան չոր և տաշ հարավ-արևելյան քամիների առաջը փակելու տեսակետից: Դրանցից մեկը քամու առաջը փակելու է Անդրկոլդյան ուայոններում և գտնվելու է Ուրալ և Վոլգա գետերի միջև՝ Չապաևսկ-Վլադիմիրովկայի ուղղությամբ, բաղկացած չորս շերտից, յուրաքանչյուրը 60 մետր լայնությամբ, 580 կիլոմետր ընդհանուր երկարությամբ և մեկը մյուսից 300 մետր հեռավորությամբ:

8. Երկրորդ շերտը նույն դերը կատարելու է Սալսկի, Ստավրովուի և Կրասնոդարի տափաստանների համար: Սա ունենալու է Ստալինգրադ—Ստենայայա—Զերկեսկ ուղղություն, բաղկացած է լինելու չորս շերտից, յուրաքանչյուրը 60 մետր լայնությամբ, 570 կիլոմետր երկարությամբ և մեկը մյուսից 300 մետր հեռավորությամբ:

Գերը թվարկած անտառատնկումները գրավելու են 117,9 հազար հեկտար տարածություն և ունենալու են 5.320 կիլոմետր ընդհանուր երկարություն: Այս անտառատնկումների շնորհիվ հիմնովին փոխվելու են տափաստանային և անտառատափաստանային շրջանների ջրային ռեժիմը և կլիմայական պայմանները:

Տարրեր հողերում և տարրեր ջրահավաքներում գլխավոր, օճանդակ և թփային տեսակները որոշ շափով տարրերվելու են միմյանցից: Սակայն մանրամասնությունների մեջ շմտնելու համար սուրբ բերում ենք ծառային և թփային տեսակների ընդհանուր ցուցակը:

Գլխավոր տեսակներից հանձնարարվում են՝ կաղնին, կեշին, հոցենին (կանաչ և սովորական), բարդենին, թեղին, մանրատերե թեղին, խեժածառը (սիրիրական), սպիտակ ակացիան, գլեղիկան, սովորական սոճին (ավաղային հողերի պայմաններում):

Օժանդակ տեսակներից հանձնարարվում են՝ թեղին (սովորական և մանրատերե), թղկին (սրատերե, դաշտային և թաթարական), խնձորենին, տանձենին, ծիրանենին, բալենին, սալորենին, ուսենին, սրահացենին, լորենին (նաև մանրատերե), թթենին:

Թփային տեսակներից հանձնարարվում են՝ ակացիան (զիղին), ցաքակեռասը (թաթարական), մասրենին, ուռենին, միջատենին (նեղատերե), լլզունը, նարնջափայտենին, տիսիլը, բալենին (տափաստանային), շիշանը, հաղարջենին (ոսկեգույն և սի), բերեսկլետը, սրնգենին, ամորֆան, հոնը:

Տափաստանային և անտառատափաստանային շրջաններում գոյություն ունեցող բոլոր արժեքավոր անտառային մասսիվներում աշճմանվելու է հատումների խիստ ռեժիմ, անհրաժեշտ միջոցառումներ՝ են կիրառվելու այդ անտառները հետագա ոչնչացումներից պահպանելու և նրանց հետագա լավացումն ապահովելու համար:

## 2. ԳԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՏԱՆԱԴԻՄՆԵՐԻ ԶԱՐԻՑՅՈՒԹԵՐԸ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԵՎ ՍԲՎԽՈԶՆԵՐԻ ՀԱՂԵՐԻ ՎՐԱ

Խոշոր մասշտարներով պաշտպանական անտառատնկումներ կատարվելու են նաև կոլխոզների և սովորողների հողերի վրա: Անտառապատվելու են բոլոր ռեսպուբլիկաներում, մարզերում և երկրամասերում հղած ձորերը, ձորակները, հեղեղատները, ջրային ավաղանները, գետերի ջրբաժանները, ավազուտները:

1949—1950 թ. թ. ընթացքում վերականգնվելու են այն բոլոր վնասված պաշտպանական անտառատնկումները, որոնք գտնվում են կոլխոզների և սովորողների հողերի վրա:

Երիտասարդ հասակից էֆեկտ ավող երկարակյաց և կայուն պաշտպանական անտառատնկումներ ստեղծելու նպատակով, տնկումների մեջ մտցվելու են ինչպես երկարակյաց, այնպես էլ արագ աճող ծառատեսակներ, ընտրելով տեղի հողակլիմայական պայմաններին ամենից համապատասխան տեսակները: Այդ տեսակեատից խոշոր ուշադրություն դարձվելու է կաղնու վրա, որը տափաստանային շրջաններում աշքի է ընկնում իր երկարակիցությամբ և բարձրարժեքությամբ: Պաշտպանական անտառատնկումների մեջ 10—15%-ը կազմելու են պտղատու ծառերը և թփերը կոլխոզային և սովորողային հողերի վրա կրասնողարի մաքուլխոզային և սովորողային հողերի վրա կրասնողարի մաք-

զում, Ղրիմի երկրամասում և Ռուբախնական ՍՍՌ-ի հարավային  
երկրամասերի այն բոլոր վայրերում, որտեղ բարենպաստ պայ-  
մաններ կան, այլ ծառատեսակների հետ միասին ջրային ավա-  
զանների ու լճակների շուրջը, ոռոգող ջրանցքների ափերին և  
գաշտապաշտպան անտառային շերտերում տնկվելու է նաև  
տարձրաթերթեր էվկալիպտը:

Մեկնֆի խիստ մասնատված պայմաններում հանձնարարվում  
է նեղ շերտերով գաշտապաշտպան անտառատնկումներից խուսա-  
փել, որովհետև նեղ անտառաշերտերը, այդպիսի պայմաններում,  
հողը էրոզիայից պաշտպանել չեն կարող: Պաշտպանական անտա-  
ռաշերտեր հիմնադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն կարևոր  
հանգամանքը, որ ստեղծվող դաշտապաշտպան, ձորամերձ կամ  
սրեմ այլ անտառատնկման սխստիմը պետք է համապատասխանի  
տեղի բնական պայմաններին և այն դերին, որի համար նա  
ստեղծվում է:

Ենեկով այդ հիմնական դրույթներից, հանձնարարվում է  
կոլխոզներում և սովորողներում անտառատնկումները կատարել՝

1. Դաշտերը խորշակներից պաշտպանելու նպատակով հար-  
թավայրային պայմաններում՝ 10—20 մետր լայնությամբ:

2. Էրոզիայի դեմ պայքարելու համար լանջերի հակառակ  
սպզությամբ՝ 20—60 մետր լայնությամբ:

3. Ջորերի և ձորակների շուրջը՝ 20—50 մետր լայնությամբ:

4. Ջրային ավազանների շուրջը՝ 10—20 մետր լայնությամբ:

Կոլխոզներում և սովորողներում հիմնական դաշտապաշտպան  
անտառաշերտերը տնկվելու են ցանքաշրջանառությունների դաշ-  
տերի սահմաններում, իսկ երբ դաշտերը խիստ մեծ են՝ նաև բրի-  
գադային հողամասերի սահմաններում: Այս դեպքերում շերտերի  
լայնությունը պակաս է լինելու:

Որոշման մեջ նշվում է նաև այն կարենք հանգամանքը, որ  
շրջաններում, կոլխոզներում և սովորողներում պյուղատնտեսական  
աշխատանքները կատարված են համարվում այն վեպքում միայն,  
երբ կատարված է լինում պաշտպանական անտառատնկման,  
ինամբ է տնկարաններում տնկանյութի աձեցման պլանը:

Որոշման մեջ խոշոր տեղ է հատկացվում նաև ՄՏ կայանի  
աշխատանքին, կադրերի պատրաստման ու կոմայլեկտավորմանը,  
աշխատանքի ճիշտ կազմակերպմանը, լրացուցիչ վարձատրմանը:

նոր անտառային տնտեսություններ ստեղծելուն և այլ հարցերին, որոնցից մեծ շափով կախված է դաշտապաշտպան անտառատքների հաջողությունը և նրանց հետադա խնամքի ու պահպանման բախտը:

Գիտական և փորձնական հիմնարկների դաշտերում, նաև անտառային տնտեսություններում հանձնարարվում է բնացին եղակով անտառային շերտերի փորձնական ցանք կատարել:

### 3. ԱՎԱԶՈՒՏՆԵՐԻ ԱՄՐԱՅՈՒՄՆ ՈՒ ԱՆՏԱՌԱՊԱՏՈՒՄԸ

Ավազների շարժումը գեղի տափաստանային և անտառատքափաստանային շրջանների բերրի հողերը արգելելու նպատակով, Հոկտեմբերի 20-ի որոշմամբ, 1949—1955 թվերին ավազուտների ամրացում և անտառապատում կատարվելու է 322 հազար հեկտար տարածության վրա: Այդ ավազուտներն անտառապատելու համար հանձնարարվում են հետևյալ ծառատեսակները և թփերը՝ սովորական սոճի, զրիմի սոճի, կեշի, կաղնի, բարդի, գեղին ակացիա, սպիտակ ակացիա, թաթարական ցաքակեռաս, ուսենի, ծիրանների, թթենի, նարնջափայտենի, վշշատենի (նեղատերե), ամորֆա, թեղի (մանրատերե), իլղուն:

Շարժուն ավազները ավելի արագորեն ամրացնելու նպատակով հանձնարարվում է այդ ավազուտներում լայնորեն կիրառել, սորոշության սորոշության հիբրիդի, անապատային ժիտնյակի և այլ խոտարուկսերի ցանքը այն հաշվով, որպեսզի այդ տարածությունները վերածվեն արոտատեղային և խոտհարքային հողատեսքերի:

### 4. ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՄԱՍԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Հոկտեմբերի 20-ի որոշումը պարտավորեցնում է պետական, կոլխոզային և սովորական անտառային տնկարաններում աճեցնել ծառատեսակների, թփերի և պտղատու տեսակների սուագրտ տնկանյութ այնպիսի քանակությամբ, որպեսզի հնարավոր լինի ամբողջապես ապահովել պետական, կոլխոզային և սովորակային պաշտպանական անտառաշերտերի ստեղծումը, ձորերի, ձորակների, լճակների և գետերի ափերի անտառապատումը՝ տափաստանային և անտառատափաստանային շրջաններում:

Այդ նպատակով 1949 թ. անտառատնկման պլան ունեցող յուրաքանչյուր 5—10 կոլխոզներում կազմակերպվելու է մեկից ոչ

պակաս տնկարանու Տնկարանների համար հատկացվելու են ամենից հից հարմար հողամասերը, որոնց ամրացվելու են հատուկ օդակեներու Անհրաժեշտ քանակովյամբ տնկարաններ կազմակերպվելու են նաև սովորված:

Համաձայն այդ որոշման, կոլխազներում անտառային տնկարաններով զբաղված տարածությունները՝ 1949 թ. սկսած աղաւարվելու են պետական պարտավորություններից: Դրանից բացի պետական անտառային տնկարանները ապահովվելու են անհրաժեշտ տիպային գործիքներով, մեքենաներով և այլ սարքավորմամբ:

Կատարված բազմաթիվ դիտողություններից պարզվել է, որ Հայկական ՍՍՌ-ում երաշտ առաջացնում են հաճախ հարավից միշտ տաք և չոր քամիները, որից մեծ չափով տուժում են ոչ միայն հացահատիկային բույսերը, այլև տեխնիկական կուլտուրաները: Երաշտի կործանարար ազդեցությունը մեր ռեսպուբլիկայի մի շաբթ շրջաններում առանձնապես ուժեղ արտահայտվում է այն պատճառով, որ այդ չոր ու տաք քամիները փշում են հացահատիկային կուլտուրաների հասունացման կաթնային ժամանակաշրջանում, երբ հատիկը գեռ լրիվ չի կազմակերպվել: Դրա հետևանքը լինում է այն, որ սուսացվում են փոքր, շմշկված, նվազ և թիրարժեք հատիկներ:

Ապացուցված է, որ չոր ու տաք քամիների առկայության պայմաններում, նույնիսկ մեր լեռնային շրջաններում, մեծ չափով իշխում է օդի հարաբերական խոնավությունը և մեծանում է բույսի կողմից գոլորշիացող ջրի քանակը: Իսկ երբ այդ երևույթը երկարատեղ է լինում, տալու բույսի վերերկրյա մասերը անհամեմատ ավելի շատ ջուր են կորցնում, քան կարող են ստանալ իրենց արմատների միջոցով, որի հետևանքով և տուժում են: Ռասունասիրված և պարզված են այս երևույթի ներքին պատճառները և նրա դեմք պայքարելու ուղիները: Այդ ռասունասիրություններից պարզվել է, որ օդի և հողի բարձր ջերմության (հետևապես օդից ցածր հարաբերական խոնավության) պայմաններում բույսերի վրա եղած բազմաթիվ հերձանցքները, որոնք արտաքին միջավայրի նորմայ պայմաններում օրիվ շոգ ժամերին փակվում և բույսին պաշտպանում են ավելորդ ջուր գոլորշիացնելուց, կորցնում են հազարամյակների գոյության կոմի ընթացքում ձեռք բերած իրենց արդ վերին ռաստիճանի կարևոր հատկությունը: Դրա հետևանքը լին-

նում է այն, որ բույսն անընդհատ և մեծ քանակությամբ ջուր է գուղքիացնում տաք և շոր օդի մեջ, որից և մեծապես տուժում են նաև հացարուսերի հասկերը և ապա նոր մնացած մասերը:

Համաձայն ոռու առաջավոր գիտնականներ Դոկտորականի, Կոստիչնի, Վիլյամսի ուսումնասիրությունների, այս աճեղ բնական իրեւոյթի գեր պայքարելու լավագույն միջոցը երկրագործության խոտագաշտային սիստեմին անցնելն ու նրա լրիվ և անթերի իրականացումն է մեր լայնածավալ երկրի բոլոր ռեսպուբլիկաներում, մարդկում, երկրամասերում:

Մեր ռեսպուբլիկայի կոլխոզներում գդալի աշխատանք է տարվել երկրագործության խոտագաշտային սիստեմի առանձին օղակների ներդրման և յուրացման ուղղությամբ: Անսպուրլիկայի կունողներում արդեն ներդրվել են խոտագաշտային ցանքաշրջանառություններ, որոնք աստիճանաբար յուրացվում են: Բազմաթիվ կոլխոզներում արդեն ցանքում են բարձրորակ և տեղի պայմաններին հարմարված տեսակավոր սերմեր: Աստիճանաբար մեծանում են սև ցելին հատկացված տարածությունները, լայնորեն օգտագործվում են նաև հանքային և օրդանական պարարտանյութերը: Սակայն մինչև 1949 թիվը մեր ռեսպուբլիկայում շատ քիչ բան է արվել Դոկտորականի—Կոստիչնի—Վիլյամսի կոմպլեքսի (կամ երկրագործության խոտագաշտային սիստեմի) մեջ մտնող և նրա անբաժան մասը կազմող դաշտապաշտպան անտառատնկումների սիստեմ կիրառելու ուղղությամբ: Հարկ եղած ուշադրության շեն արժանացել այն աշխատանքները, որոնք վերաբերում են պաշտպանական անտառաշերտերի տնկմանը՝ ջրամաքանակությամբ, ցանքաշրջանառությունների դաշտերի սահմաններում, ձորակների և հեղղաների լանջերում, գետերի և լճերի եղբերին, ջրային պահանների և լճակների շուրջը: Աշխատանքներ շեն տարվել նաև ուղաղուաների անտառապատման ու ամբացման ուղղությամբ, մինչդեռ հայտնի է, որ դաշտապաշտպան անտառաշերտերի գոյության պայմաններում թուլանում է շոր քամիների ուժը, մեծանում է օդի հարաբերական խոնավությունը, փոքրանում ջրի գուրուշիացումը, գեշտանում հողի մեջ մթնոլորտային տեղումներից առաջացած ջրի կոտակումը և այդ բոլորի հետևանքով խորշակները մեծ վնաս հասցնել շեն կարողանում:

Դրան հակառակ մեր ռեսպուբլիկայի համարյա բոլոր ան-

տառապուրեկ շրջաններում ձմռան քամիները ձյունը քշում և մոտակա ձորերն ու ձորակներն են լցնում, իսկ դաշտերը մերկանում են խոշոր նշանակություն ունեցող ձյան շերտից: Դրանից բացի գարնանը ձնհաւքից գոյացած չուրը չի թափանցում հողի մեջ, հոսում է ունեֆի ցածրազիր մասերը, հաճախ առաջացնելով գետերի վարարումներ, հեղեղներ, իրենց ծանր հետևանքներով: Զյան շերտից զրկված հողի մակերեսը գարնանը սկսում է շորանալ մեծ արագությամբ, որին հաջորդում է այն ջրի գոլորշիացումը, որը թափանցել էր հողի խոր շերտերը և որը այժմ մազական անցքերով բարձրանում է վեր և գոլորշիանում: Կարճ ժամանակից հետո այդպիսի անտառազուրկ հողերն այնքան ջուր են կորցնում, որ ցանվող բույսերի սերմերը մինչև անձրև տեղալը նույնիսկ չեն ծլում:

Հայաստանի Կ(բ)Պ 14-րդ համագումարում իր տված զեկուցման մեջ ընկ. Գ. Հարովթյունյանը խնդիր դրեց՝ լրիվ կիրառել ուստի առաջավոր զիտնականներ Դոկուլակի—Կոստիչեկի—Վիլյամսի կողմից մշակված երկրագործության խոտագաշտային սիստեմը և երա մեջ մտնող բոլոր աշխատանքները, որը անհրաժեշտ է բարձր ու կայուն բերք ստանալու համար:

Ելնելով ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և Համեկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի հոկտեմբերի 20-ի պատմական որոշումից, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը 1948 թ. որոշում ընդունեց՝ մոտակա չորս տարիների ընթացքում, սկսած 1949 թվից, կոլխոզներում 10.700 հեկտար տարածության վրա դաշտապաշտպան անտառաշերտեր տնկելու վերաբերյալ: Այդ տարածությունը ստանդարտ և բարձրորակ տնկանյութով ապահովելու համար, այժմ տարի մեր ուսուպուրիկայի տարրեր կոլխոզներում հիմնադրվելու են տնկարաններ 700 հեկտար տարածության վրա, որի համար պահանջվում է 140 տոննա ծառատեսակների և թփուտների սերմ և 14 միլիոն կտրոն: Պարզ է, որ այդպիսի խոշոր աշխատանք կատարելու համար իրենց ուժերը պետք է լարեն ոչ միայն կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները, այլ և մեր երկրի գյուղատնտեսության ֆրոնտի ողջ ինտելիգենցիան, զիտական աշխատողները, մասնակիտները, մեր երիտասարդությունը:

Այս կոմմալեքսի իրականացումը համաժողովրդական գործ է,

Հետեապես այդ գործին պետք է մասնակցի մեր ամբողջ հասա-  
ռակությունը:

Մեր արևավառ երկրի ծաղկում դաշտերն ու այգիները Արա-  
բիայի և Իրանի անապատներից փշող խորշակների կողծանարար  
ազդեցությունից պաշտպանելու նպատակով մի շարք անտառա-  
գործկ շրջաններում ստեղծվելու են նաև պետական անտառային  
դաշտապաշտպան շեմուեր մոտ 1500 հեկտար տարածությամբ և  
112 կիլոմետր ընդհանուր երկարությամբ:

Առանձին շրջանների, յուրաքանչյուր վայրի համար մշակվել  
են նախատեսվել են ինչպես զլիսավոր, այնպես էլ օժանդակ ծառե-  
րի և թփերի տեսակները, որով և տեղերում այժմ առաջնորդվում  
են անտառաշերտեր տնկելիս: Այսպես, մեր ոեսպուրիկայի ցած-  
րագիր շրջանների համար հանձնարարվում է՝ փշատենի, ընկու-  
գենի, խնձորենի, տանձենի, կեռասենի, թթենի, գեղին ակացիա;  
բարդենի և այլն, նախալեռնային ու լեռնային գոտիներում տընկ-  
վելու են արևելյան կաղնի, սովորական հացենի, ակացիա, ամե-  
րիկյան թղկի, սովորական սոճի, բեկուենի (մամիկ), վայրի տան-  
ձենի և այլն:

Հայաստանի պայմաններում անտառաշերտերում տնկվելիք  
ծառերի մեջ պտղատու ծառերը (զլիսավորապես ընկուցենին, խըն-  
ձորենին, տանձենին, փշատենին) կազմելու են առնվազը 30%-ը:

Անտառատնկման գործի հաջողությունը ամենից շատ կախ-  
ված է տնկանյութի անխափան մատակարարումից, այդ է պատ-  
ճառը, որ այնքան մեծ ուշադրություն է դարձվում տնկարանային  
տնտեսության վրա: Համաձայն դիրեկտիվ օրդանների որոշման,  
1949 թ. Անտառային անտեսության մինիստրության գծով, մեծ  
տարածություններով, Հայաստանի շատ շրջաններում հիմնադրվե-  
լու են նոր պետական տնկարաններ:

Միանգամայն պարզ ու հասկանալի է, որ անտառային տըն-  
կարանին պետք է հատկացնել պարարտ, հարթ մակերես ունեցող  
հողամաս, կամ այդպիսի հողամաս չինելու դեպքում մինչև 3°  
թեքություն ունեցող լանջերը: Հարավային և հարավ-արևելյան  
լանջերում տնկարաններ հիմնադրելուց պետք է խուսափել, որով-  
հետև այդպիսի տեղերում ցանած սերմերը արագ են ծլում և հեշ-  
տությամբ տուժում ուշ գարնանային ցրտահարություններից, իսկ  
հետագայում էլ խորշակներից: Տնկարանի համար պիտանի չեն

նաև ցածր, լանջերի ստորին մասներում գտնվող հողամասերը, որտեղ սովորաբար կուտակվում են օդի սարը և ծանր մասսաները: Պիտանի շեն այդ նպատակի համար նաև գարնանը հեղեղումների ժամանակ ողողվող և հողի մակերեսին մոտ գտնվող զբումակ չընթանացնուի:

Անտառային տնկարանների համար ամենից լավ է հատկացնել սեահողանման ավագակալայիշին և կավագաղային, նաև աղակալումից աղատ մուգ շագանակագույն հողերը: Պիտանի շեն ալկալի, փոշիացած, հեշտ կեղևակալող, նաև ավագային և չուր չպահող, մննդանյութերից աղքատ հողերը:

Տնկարանը պետք է ջրացին ավագանին մոտ գտնվի, որպեսզի հնարավոր լինի կարիքի դիպքում ոռոգել: Ցանկալի է, որպեսզի տնկարանը գյուղին մոտ գտնվի և ստահովված լինի լայն և բարեկարգ վիճակում գտնվող հանապարհներով: Շատ կարեռ է նաև տնկարանի համար ընտրել անտառային լինասատուններից և հիվանդություններից աղատ հողամասեր:

Տնկարանի մեծությունը պետք է որոշվի տնկանյութի պահանջվով: 100 հեկտար անտառապատելու համար սովորաբար պահանջվում է ծառատեսակների և թփերի մոտ մեկ միլիոն տնկի: Այդ քանակով տնկանյութ ստանալու համար անհրաժեշտ է տնկարանի տակ դնել 2,5—3,0 հ. տարածություն, նկատի ունենալով այն, որ յուրաքանչյուր հեկտարից հնարավոր է ստանալ տնկելու համար միանգամայն պիտանի մոտ 400—500 հազար տնկի:

Տնկարանն ինքը պետք է շրջապատված լինի 2—3 շարքից բաղկացած պաշտպանական անտառացին շերտով՝ չոր քամիններից պաշտպանվելու և ձյունը լավ կուտակելու ու պահելու համար: Այդ շարքերում պետք է տնկել արագ աճող ծառատեսակներ միայն (լավ է բարդի): Դրանից բացի տնկարանը անասուններից պաշտպանելու համար պետք է շրջապատել փշալարով կամ որևէ այլ ձևով:

Տնկարանի հողը պետք է վարել աշնանը նախագնիթանիկ ունեցող գութանով՝ 25—30 սմ խորությամբ: Վաղ գարնանը պետք է հողը քարշակել, իսկ դրանից մեկ-երկու օր հետո կուտիլատորներով միմրեցնել՝ այն խորությամբ, ինչ խորությամբ հողի մեջ թաղվելու են ցանվող սերմերը: Մանր հողերում կուտիլացիան պետք է կատարել մի փոքր ավելի խոր (մոտ 8—10 սմ):

Ապացուցված է, որ ծտուատեսակների սերմերը աշնանը ցանկիս ավելի բարձր արդյունք են տալիս, քան զարնանը ցանկիս։ Սակայն եթե որևէ պատճառով սերմերը աշնանը չեն ցանվել, ապա դրանց ցանքը պետք է կատարել գարնանը՝ նախապես ստրատիֆիկացիա կատարելուց հետո ջանքից առաջ այդպիսի սերմերը մաղերի միջոցով պետք է մաքրել ավազից, տորֆից և խոկույն ցանել։ Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, որ ստրատիֆիկացիայի ենթարկված սերմերը ցանքից առաջ չորանան։ Դրա հետեւանքը կլինի այն, որ ծլել սկսող սերմերի մեծ մասը կոչնչանա և կստացվի ոչ լրիվ հեկտար։

Ստրատիֆիկացիայի չենթարկվող սերմերը ևս գարնանը, ցանքի նախօրյակին պետք է ենթարկել որոշ մշակման։

Այսպիս, սոճու սերմերը սենյակի ջերմություն ունեցող ջրի մեջ պետք է պահել 8 ժամ, սիրիբական խեժածառի սերմերը՝ 24 ժամ, սոլորական թեղու սերմերը՝ 2—4 ժամ։ Կեշու սերմերը պարկերի մեջ պետք է մի օր պահել ջրում, ապա 3—4 օր թողնել տաք շենքում՝ օրը երկու անգամ խառնելով։

Գարնանային ցանքը պետք է կատարել որքան կարելի է շուտ, վաղ դարնանային հացահատիկների հետ միաժամանակ, և վերջացնել 1—2 օրում։ Թեղու սերմերը պետք է ցանել մայիսի վերջին կամ հունիսի սկզբի օրերը, նրանց հաւաքից անմիջապես հետո։

Մշակման աշխատանքները մեխանիզացիայի ենթարկելու նըւպտակով ցանքը պետք է կատարել ուղիղ շարքերով և երկու կամ քառակժանի ժապավեններով, ըստ որում գծերի մեջ եղած տարածությունը պետք է լինի 20—25 սմ, իսկ միջժապավենային տարածությունը՝ 40—50 սմ։ Կեշու սերմերը պետք է ցանել շաղացան։

Սերմերի վարածածկման խորությունը կախված է հողի հատկություններից, սերմերի մեծությունից, ցանքի ժամանակից և ձեռվից, Չոր տափաստանային պայմաններում ցանքն ավելի խոր պետք է կատարել։ Ամառային կտղնու սերմերի ցանքի խորությունը պետք է լինի 6—8 սմ, ամերիկյան հացենու, որատերև թղկու, վեղիշայի, բալենու, միջատենու սերմերինը՝ 3—4 սմ, ծիրանենու, սալորենու, տխիլի սերմերինը՝ 5 սմ, դեղին և սպիտակ ակացիայի,

տանձենու, խնձորենու, մանրատերել լորինու սերմերինը՝ 2—3 սմ, սոճու, սիրիրական խեժածառի սերմերինը՝ 0,5—2,0 սմ, թիզու, թաթարական ցաքակեռասի, սպիտակ թթենու սերմերինը՝ 0,5—1,0 սմ, կեշու սերմերը բոլորովին կրեսանց պետք է ցանել:

Հողի վերին շերտը չորանալուց և կեղեակալելուց պետք է պաշտպանել ճյուղերից պատրաստած վահանների միջոցով: Վահանները պետք է տեղավորել միջապավեննային տարածություններում 45° թեքությամբ և հեռացնել այն ժամանակ միայն, եթե շոգերը անցել և ծիլերը լրիվ ամրացել են: Անձրեների բացակայության դեպքում տնկարանները մինչեւ սերմերի ծլելը ջրի փոքր քանակությամբ պետք է ջրի 2—3 օրը մեկ անգամ: Դա անհրաժեշտ է հողի վերին 10 սմ շերտը խոնավ վիճակում պետք է ջրել ավելի սահավ, բայց ավելի մեծ ջրման նորմաններով և այն հաշվով, որպեսզի խոնավանա հողի 30 սմ շերտը: Բացառություն կաղմում է կեշին, որի ծիլերը երկալուց հետո ևս հողը պետք է խոնավացնել ամեն օր:

Եթե հողը ցանքից առաջ խիստ չորացել է, անհրաժեշտ է ջրել նախ քան ցանելը:

Տնկարաններում ցանք կատարելու և ոլանտացիաններուն կտրոններ տնկելու հետ միասին, պետք է առանց ձգձգումների տնտեսությունում եղած պատրաստի տնկանյութը դաշտ փոխադրել և սկսել տնկման աշխատանքները պաշտպանական անտառային շերտերում: Այս աշխատանքը վաղ պիտի կատարել, որպեսզի հողում եղած խոնավությունը ավելի ռացիոնալ կերպով օդտագործվի: Պետք է հետեւ, որպեսզի տնկելու ժամանակ բույսերի արմատները չոլորվեն կամ չծովին, ոյլ տղատ տեղավորվեն փոսում:

Տնկումը պետք է կատարել արմատային վզիկի խորությամբ, այսինքն այն մասի խորությամբ, որտեղ վերջանում է ցողունը և սկսվում են արմատները: Տնկելուց հետո հողը պետք է պնդացնի փոսի եղբերից:

Վերը թվարկած աշխատանքների հետ միասին Հայկական ՍՍՌ-ում լուրջ աշխատանք է տարվել նոր կազմակերպվող և ընդուրածակվող տնկարաններում և պլանտացիաններում աճեցվելիք

տնկանյութի քանակը ըստ տարիների որոշելու, ծառատեսակների կազմը առանձին վայրերի համար ճշտելու, ոռոգման աշխատանքների մեխանիզացիայի և մի շարք այլ կազմակերպական հարցերը պարզելու և լուծելու ուղղությամբ:

Կասկածից վեր է, որ անտառային տնկարանների բարդ և մեծ կարեորություն ներկայացնող գործը ճիշտ կազմակերպելու և մշակման աշխատանքները ժամանակին ու բարձրորակ կատարելու գեղքում մեզ կհաջողվի մոտակա 2—3 տարում ստանալ այնքան տնկանյութ, որը կբավարարի մեր ուսապուրչիկայի պահանջը թե՛ քանակի և թե՛ որակի տեսակեաից:

Քանի որ այս պետական անտառաշերտերը տնկվելու հետ այն կոլխոզների կոլխոզներկների միջոցով, որոնց շրջանում իրականացնելու է անտառատնկումը, ուստի խոշոր նշանակություն ունի այդ կոլխոզներիներից անտառատնկման գործին տիրապետող և տնկարաններում մշտական աշխատող որակյալ կազմեր պատրաստելու խնդիրը: Այդ ուղղությամբ ևս տարվել է անհրաժեշտ աշխատանքը:

Այս աշխատանքների հետ միասին տնկանյութի պակառը լըսացնելու նպատակով, դիրեկտիվ օրգանների որոշմամբ, վաղուց արդեն մեծ աշխատանք է ծավալվել բարդենու, փշատենու, շինարի, եղնու և այլ տեսակների կարոններ պատրաստելու ուղղությամբ, որը և լայն շափով իրականացվում է ուսապուրչիկայի բոլոր սովորություններում և այն կոլխոզներում ու կոլխոզներիների տնտեսություններում, որտեղ դրա համար կան հնարավորություններ (ժամեր, թիեր):

Մեքենատրակտորացին կայաններն իրենց աշխատանքների պլաններում նախատեսել են անտառաշերտերին և տնկարաններին հատկացված հողերի վարի և մշակման աշխատանքները:

Կոլխոզներում և սովորություններ հատուկ որոշումներ են կաւացվել անտառները, անտառաշերտերը, տնկարանները և պլանացիաները փշացումներից, անստուններից, հիվանդություններից և վնասատուններից պաշտպանելու և բարձրորակ խնամքն ապահովելու ուղղությամբ, առանձնացվել են հատուկ օղակներ, որոնք գրավվելու են միայն անտառատնկման և խնամքի աշխատանքներով:

Ծնորհիվ ձեռք առած եռանդուն միջոցների Հայաստանի Անտառային անտառաբյան մինիստրությունն այժմ արգելն ձեռք է բերել և բաց է թողնելու Շմիլիոն տնկի բարդենու, պլատանի, փշատենու և ծառատեսակների կտրոն՝ մոտ 20 միլիոն և տարբեր ծառատեսակների ու թիմերի սերմ՝ ավելի քան 200 տաննա:

Մեր ռեսպուբլիկայի կողխողներում տնկարաններ և պլանտացիաներ հիմնադրելուց բացի, եսուն աշխատանք է ծավալվել զաշտապաշտպան անտառաշերտեր ստեղծելու ուղղությամբ: Այդ շերտերում տնկիների (2 տարիկան) նորմալ աճն ապահովելու համար հողը պետք է վարել 30—35 սմ խորությամբ, իսկ եթի որևէ պատճառով այդպիսի վար կատարելը հնարավոր չի, առա պետք է փոսերի խորությունը հասցնել 40—45 սմ-ի:

Շերտերի միջև գոտիների միկրոլիմայում զվալի փոփոխություններ առաջ բերելու նպատակսիվ, Արարատյան Հարթավայրի պայմաններում զվարավոր շերտերը պետք է տնկել 7—12 մետր և օժանդակ շերտերը 6—7,5 մետր լայնությամբ, լեռնային շրջաններում այդ լայնությունը լինելու է 10—15 մետր:

Յուրաքանչյուր շերտում տնկվող ծառատեսակների և թիմերի շարժերը պետք է միմյանցից 1,5—2,3 մետր հեռու լինեն, իսկ տնկիներինը՝ 0,8—1,0 մետր:

Գլխավոր, այսինքն շոր քամիներին ուղղահայաց ուղղությամբ տնկվող զաշտապաշտպան անտառային շերտերը պետք է ավելի լայն լինեն, քան օժանդակ շերտերը, որոնք տնկվում են այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ փշում են քամիները: Պարզ է միանգամայն, որ նախ քան շերտերի ուղղությունը որոշելը պետք է որոշել փշող շոր քամիների ուղղությունը:

Հայկական ՍՍՌ-ի ցածրադիր և նախալեռնային շրջանների մեծ մասը և լեռնային շրջանների որոշ մասը տուժում է Հարավից փշող շոր քամիներից, հետևապես զաշտապաշտպան անտառային զվարավոր շերտերը հիմնականում պետք է տնկվեն արևելքից արևմուտք ուղղությամբ, իսկ օժանդակ շերտերի ուղղությունը լինելու է Հարավից հյուսիս:

Շերտերի հեռավորությունը մեկը մյուսից կախված է տնկվող ծառատեսակների կազմից, նրանց բարձրությունից, փշող քամի-

ների ուժից և արտաքին միջավայրի պայմաններից։ Սովորաբար այդ հեռավորությունը հավասար է լինում։ ծառատեսակների բարձրության և 20-ի արտադրյալին։ Մեր ուսպուրլիկացի պայմաններում այդ հեռավորությունը կոչվողներում տատանվելու է՝ պիտակոր շերտերի միջև 200—500 մետրի և օժանդակ շերտերի միջև՝ 1000—1500 մետրի սահմաններում։

Տնկումները պետք է կատարել առաջին հերթին որևէ պատճառով գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողերում, ապա ճանապարհների եղբերին, առաների և շրանցքների ափերին, ցանքաշրջանառության դաշտերի սահմանների վրա։

Եարբում պետք է տնկել մեկ զվարակոր տեսակ, որը սակայն չողային պայմանների կամ ունիֆի փոփոխության դեպքում կարող է փոփարինվել մի այլ զվարակոր տեսակով։

Տնկման համար պետք է օգտագործել երկու տարեկան արներին Արագ աճող տեսակների տնկիները թույլատրելի է օգտագործել նաև մեկ տարեկան հասակում։ Երեք տարեկան տնկիները հնարավոր է օգտագործել այն դեպքերում միայն, եթե նրանք առաջին երկու տարիներում տնկարաններում թույլ են աճել։ Դրանց ավելի մեծ հասակ ունեցող տնկիները անշրջի պայմաններում անտառապատման նպատակներով չեն կարելի օգտագործել։ Դրանց օգտագործումը հնարավոր է միայն արհեստական ոսողման պայմաններում։

## 5. ՄԻԿՈՒՅՆԵՐԻ ԴԵՐԸ

Թվարկուծ բոլոր աշխատանքներից բացի, անհրաժեշտ է կապել նաև մի այլ կարելոր գործ, որը դեռևս շատերի համար նոր է։ Դա տնկվող ծառատեսակների ապահովումն է միկորիզներով, որոնք հատուկ են ծառաբույսերին։

Միկորիզները սնկերի հիմքեր են, որոնցով «վարակվում» են բույսերի արմատները։ Այդ հիմքերը պատում են բույսերի կարճ արմատային վերջավորությունները և յուրահատուկ թելապատրան կազմում։ Պատյանի արտաքին թելերը, թափանցելով հողի մեջ, փոխարինում են մազարմատներին, որոնք սովորաբար միկորիզային պատյան ունեցող արմատային վերջավորությունների վրա բացակայում են։ Թելապատրանի ներքին թելերը թափանցում են ծառաբույսերի միջնջային տարածությունները և արմատակեղելի

արտաքին բջիջների մեջ և այդպիսով հաղորդակցությունն ստեղծում այդ բուժ այդ բուժսերի կենանակ հյուսվածքների հետ: Միկորիզներ հայտնաբերված են ծառաբույսերի ճնշող մեծամասնության արժատների վրա, չեն հայտնաբերվել միայն պտղատու ծառների, չիմշիրի, դեղին և սպիտակ ակացիայի արմատների վրա:

Միկորիզը այնքան ամուր է պատում բույսերի արժատային վերջավորությունները, որ հողում եղած ջուրը և սննդանյութերը արժատի մեջ թափանցել առանց սնկի օդության չեն կարող:

Միկորիզի և անտառաբույսերի համակեցության երեսություն 1881 թվին գիտության մեջ առաջին անգամ նկատել է նկարագրել է Յգեասյի համալարանի պրոֆեսոր Ֆ. Մ. Կամենսկին: Նա նկատել է, որ միկորիզային սնկի հիֆերը նպաստում են սննդանյութերի և ջրի թափանցմանը հողից բույսերի արժատների մեջ: Միկորիզներով պվարակված անտառաբույսերի տնկինները հաճախ իրենց կյանքի առաջին տարվա վերջում մոտերկու անգամ ավելի բարձր են լինում, քան միկորիզներից գուրք տնկինները: Դրան համապատասխան նրանց կուտակած ազոտի, կալիումի, կալցիումի և առանձնապես ֆոսֆորի քանակը ևս մոտերկու և նույնիսկ մինչև շորս անգամ ավելի շատ է լինում:

Պարզված է, որ սովորական անտառային ծառատեսակների և թփերի արժատների վրա միկորիզները տարածված են շատ ուժեղ և ամենուրեք, ամեն տեսակի պայմաններում: Այսպիս միկորիզներ հայտնաբերվել են տարբեր տիպի անտառներում, սեածողերում, տարբեր աստիճանի լուղղղղացած, տորֆային, լեռնատանտառային և այլ տիպի հողերում, տարբեր բարձրության գոտիներում, այսինքն այդ բույսերի համար սննդասության միկորիզը տիպը նորմալ է:

Միկորիզների բարերար ազդեցությունը բացատրվում է նրանով, որ նրանց առկայությունը նպաստում է նոր կողարմատների գոյացմանը, ուժեղացնում է ծառաբույսերի արժատների մեջ ջրի, հանքային նյութերի, ածխաջրերի, վիտամինների, էնզիմների թափանցությունը: Տիպիկ միկորիզի բույսերի համար միկորիզների մեծ դերը բացատրվում է նաև նրանով, որ այդ բույսերը սովորաբար ունենում են խիստ թույլ զարգացած արժատային սիստեմ, ուստի և մեծ կարիք ունեն իրենց հիփերով հողի մեջ լայնորեն թափանցող և խոշոր մակերես կազմով միկորիզների օգ-

նության։ Ապացուցված է նաև, որ միկորիզների առկայությամբ շեղոքանում է ծառաբույսերի համար հողում գտնվող թունավոք օրդանական նյութերի ազդեցությունը Դեռ ավելին, սնկերի հիփերը ընդունակ են սնվելու պատրաստի օրդանական նյութերով, որին ընդունակ չեն սովորական կանաչ բույսերի արմատները։ Այսպիսով, միկորիզներով օժտված տնկիները, ունենալով իրենց արմատների վրա օգտակար համակեցողներ, գտնվում են ավելի լավ պայմանների մեջ, քան միկորիզներից զրկված տնկիները։

Միկորիզային սնկերը որոշ դեպքերում նկատելի են նույնինքն հասարակ աշխատ, սակայն նրանց առկայության բացակայության հարցը անսխալ որոշելու համար անհրաժեշտ է դիմել ուժեղ խոշորացուցի կամ մանրազիտակի օգնության։ Միկորիզների առկայությունը արմատների վրա պետք է ուսումնասուիրել ուշ դարնանից սկսած մինչև աշնան սկիզբը, որովհետեւ վաղ գարնանը և ուշ աշնանը տեղի է ունենում ծառաբույսերի կողարմատների վերցավորությունների ուժիղ աճ, որի հետեանքով միկորիզների աճը ճնշվում է։ Տարբեր ծառատեսակներ տարբեր կերպով են վերաբերվում իրենց արմատների վրա եղած միկորիզների առկայությանը։ Կազմին, սոճին, խեժածառը, եղինին միկորիզների բացակայության դեպքում տալիս են անկայուն, թույլ զարգացած, անբարենպաստ պայմաններին շղմացող և նույնինքն ամբողջապես ոչնչանալու ննիթակա բույսեր։ Պակաս չի նաև այն ծառատեսակների քանակը, որոնք թույլ են արձագանքում միկորիզների բացակայությանը։

Ուստի հայտնի գլւտնական Գ. Ն. Վիսոցկին, որը Դոկուզանի էքսպերիմենտայի մասնակիցներից մեկն էր և մեծ քանակությամբ անտառատնկումներ է կատարել տափաստաններում, դեռ կես դար սրանից առաջ նկատել է, որ կազմու և սոճու տնկիները տընկարանից փոխազրելիս բարձր տոկոսի կավաղանակությունն են տալիս և լավ են զարգանում այն դեպքում միայն, երբ նրանց օրմատների վրա միկորիզներ են լինում։ Այժմ արդեն վերջնականապես սպարզված է, որ շատ ծառատեսակների, առանձնապես սոճու, կազմու, եղինու, խեժածառի միկորիզներից զրկված տնկիները վատ զարգացած արմատացին սիստեմ են ունենում, իրենց մշշատական տեղը փոխադրվելուց հետո վատ են կաշում և մեծ մասմբ շորանում ու ոչնչանում են մնակերկու տարվա ընթացքում։

Կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ ծառաբնաշխների և թփերի արմատների վրա միկորիզների հաջող զարգացման համար պահանջվում է հողում զգալի քանակությամբ օքքանական ազոտի և մատչելի ֆոսֆորաթթվային միացությունների առկայություն։ Ոյնդ, փոշիացած, ստրոմլատուբաղուրի հոգերում ծառաբնաշխների արմատների վրա միկորիզները շատ թույլ են զարգանաւամ։

Տնկարանում տնկիների արմատների վրա միկորիզների լավ զարգացումն ապահովելու համար, անհրաժեշտ է մեկ հ. հողին տալ 40—50 տոննա գոմաղը, 50—60 տոննա կոմպոստ կամ 70—80 տոննա մարգագետնային տորֆ և վարածածկել քսան սանտիմետրից ոչ պակաս խորությամբ։ Մարգագետնային տորֆով պարարտացնելու գեղագում միաժամանակ պետք է հեկտարին տալ ազուր 30—40 կիլոգրամ, ֆոսֆորական թթու 60—80 կդ և կալիումի օքսիդ 30—40 կիլոգրամ։

Անտառի տակից աղատված հողում տնկարան հիմնադրիչին միկորիզներով հողը արհեստականորեն վարակելը պվելորդ է գանում։ Դրան հակառակ, եթե հողը երկար ժամանակ գտնվել է գաղտային կուլառությունների տակ, միկորիզային սնկերի սպորերը և հիմքերը կարող են բացակայել, հետևապես այն բոլոր դեպքերում, եթե տնկարանը հիմնադրվում է այդպիսի հողում, միկորիզներով արհեստականորեն վարակում կատարելը անհրաժեշտ է։ Այդ նպատակով հողը պետք է վերցնել կաղնու, սոճու և խեժածառի այն անտառներից, որտեղից հավաքվել են սերմերը տնկարանի համար, անտառի տարրեր մասնաւում, 10—12 մմ խորությամբ, որտեղ սովորաբար միկորիզային սնկի ամենից շատ սպորերը և հիմքերը են գտնվում։ Այդ հողը պետք է լցնել հատակը և կողերը անտառային սփոռոցով (տերևներով) ծածկված արկղների մեջ և վերելց նորից ծածկել տերևներով։ Մեկ հեկտար տնկարանի համար պահանջվում է 30—35 կդ անտառային հող։

Տնկարաններում այդ հողը տերևների հետ միասին պետք է լավ խառնել գոմաղը կամ լավ քայլայլած կոմպոստի հետ, կույտ անել և այդպիս պահել մինչեւ հողի մեջ մտցնելը։ Կույտը չորանալուց պահպանելու համար ժամանակը առ ժամանակ պետք է խոնավացնել։ Ցանք կատարելուց առաջ նկարագրած ձևով պատճենահած խառնուրդը հավասարապես պետք է ցրել հողի հ-

թեսին և վարածածկել 20 մմ-ից ոչ պակաս խորությամբ։ Եթե անկարանի հողը նախօրոք գոմաղբով չի պարարտացվել, ապա միկորիզային խառնովովի հետ պիտք է տալ նաև օրգանական պարարտանցութիւնը անտառային հողը ստացվի այն ժամանակ։ Եթե արդեն անկարանի հողը գոմաղբով պարարտացվել և վարիֆեր է, ապա միկորիզային հողը պիտք է ցրել հողի երեսին և վարածածկել ռանդալներով։

Միկորիզը հողի մեջ մտցնելու ավելի պարզ եղանակ ևս պարություն ունի, որը սակայն պակաս է ջեկատ է տալիս։ Այդ եղանակի հությունը կայանում է նրանում, որ ծառատեսակների սերմերը ցանելուց առաջ լավ խառնում են խոնավ միկորիզային հողի հետ։ Այս դեպքում միկորիզը գտնվում է սերմերի մոտ շրջապատում և հողում ավելի գանգաղ է տարածվում, քան համատարած «վարակման» դեպքում։

Եթե որևէ պատճառով հնարավոր չէ միկորիզային հող ստանալ այն անտառից, որտեղից հավաքվել են սերմերը, ապա անհրաժեշտ է հող վերցնել նույն ծառատեսակներով զրազված և նույն տիպի անտառից, ինչ ծառատեսակների սերմերը ցանվում են անկարանում։

Եթե տնկիները փոխադրվում են իրենց մշտական տեղերը, ապա հողը պիտք է պարարտացնել այն դողաներով, ինչ դոգաներով պարարտացվում է տնկարանի հողը։ Համատարած պարարտացման հնարավորության բացակայության դեպքում պարարտացնել կարելի է տնկման համար պատրաստած փոսերը։ Այդ դեպքում, լորագանցուր փոսի համար վերցնում են 500—1000 գրամ օրդանական պարարտանյութ, 1,5—2 գրամ աղոտի, 2—4 գրամ ֆունֆորական թթուի և 1,5—2 գրամ կալիումի օքսիդի հաշվով պարարտանյութ, լավ խառնում տասնապատիկ քանակությամբ վերցրած հողի հետ և լցնում փոսի մեջ։

Երբ իրենց մշտական տեղը փոխադրվող տնկիների արմատները միկորիզներ են պարունակում, ապա փոսերի մեջ միկորիզային հող մտցնելու կարիքը վերանում է։

Նման գեղքերում պետք է հետևել միայն, որպեսզի ար-  
ժատներին կալած հողը փոխադրության ժամանակ շրավիլի և  
չի լսու չըրանա: Հակառակ գեղքում, փոսերի մեջ պետք է լըց-  
նել նաև միկորիզային հող: Դրա համար միկորիզային հողը և  
պարարտանյութերը պետք է խառնել փոսից դուրս բերված հողի  
մասի հետ և այդ խառնուրդով ծածկել փոսի մեջ դրված տղն-  
կիների փնջարմատները: Փոսի վերին մասը, որտեղ գտնվում են  
անկիների կմախքային արմատները, ծածկվում է մաքուր հողով:  
Եթե տնկումը կատարվում է շարքերով, յուրաքանչյուր բույսին  
պետք է տալ մեկ բուռ միկորիզային հող:

ՏԵՐԵՑՈՐԻԱՅԻ ՑԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՈՄԸ՝ ԽՈՏԱԴԱՇՏԱՅԻՆ  
ԴԱՇՏԱՅԻՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ-  
ԱՐՄԱՆԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԲՈԼՈՐ ՀՈՂԱՏԵՍՄԵՐԸ ՌԱՑԻՈՆԱԼ  
ՕԴՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԻԶՈՑՈՎ

1. ՅԱԶՄԱՄՅՅԱ. ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ԴԵՐԸ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ՄԻՍՏԵՄՈՒՄ

Ակադեմիկոս վ. Ռ. Վիլյամսը ելնում է սկզբունքային այն գրույթից, որ հողի բերրիությունը, այսինքն բույսի աճման ու զարգացման ամբողջ ժամանակաշրջանում նրան միաժամանակ չըռկ և սննդանյութերով առատորեն ու անընդհատ մատակարարելու անակությունը միայն հատուկ է կայուն մանր կնձկային ստրոկ-տուփա ունեցող հողերին, որտեղ մշակվող կուկտուրաները բարձր են կայուն բերք են տալիս: Դրան հակառակ, փոշիացած հողերում վյուղատնտեսական կուկտուրաների բերքատվությունը շափազանց անհայում ու ցածր է լինում:

Այդ իսկ պատճառով, հողի կնձկային կայուն ստրոկտուրա-ի ստեղծումը, վերականգնումը և պահպանումը պյուղատնտեսական արտադրության կարևորագույն և առանցքային խնդիրն է հանդիսանում: Միջոցառումների ու ձեռնարկումների այն կոմպլեքսը, որը ուղղված է կայուն ստրոկտուրայի ստեղծմանը, վերականգնմանն ու պահպանմանը, դեռևս վաղ ժամանակներից գրավել էր ոռուական մի շարք ականավոր գիտնականների, այդ թվում Կոստիչևի, Դոկտուրակի, Վիլյամսի և նրանց արժանի աշակերտների ուղագրությունը:

Ակադեմիկոս վ. Ռ. Վիլյամսի կենդարյա բեկմավոր հետագությունները և առաջավոր կոլխոզների ու սովխոզների հա-

բուստ փորձը սրոշակիորեն հանգեցրել են այն և զրակացության, որ հողի ստրովկտորայի վերականգնումը հնարավոր է միայն երկրագործության խոտադաշտային սիստեմում՝ ճիշտ ցանքաշըրջանառությունների սիստեմի կիրաւմամբ ու իրացմամբ, նըրանցում անպայմանորեն թիթեանձաղկավոր և հազարդի բարձամյա խոտաբույսերի խառնուրդ մտցնելով։

Հողի ստրովկտորան վերականգնելու համար ելանուց է հանգիստանում հոմանուր, որը գոյանում է օրգանական նյութերի անաերորդ քայլքայման հետևանքով։ Ուստի, հողի մեջ հոմանուրի պաշարի ավելացումը առաջնահերթ խնդիր է։

Հողում հոմանուրութ թողնելու տեսակետից պատվատնտեսական կուլտուրաների հատկությունները միանգամայն տարրեր են, օրինակ միամյա կուլտուրաները, այդ թվում նաև միամյա խոտերը, չնայած բերքահավաքից հետո զգալի քանակությամբ օրգանական մնացորդներ են թողնում հողում, սակայն դրանց հաշվին փաստորեն դործոն հոմուս չի կուտակվում։ Մինչդեռ բազմամյա խոտաբույսերը համապատասխան ազդութեանիկայի պայմաններում, բացասիկ դեր են խաղում հողում հումուս կուտակելու գործում։

Հետեապես, միամյա խոտաբույսերը երկրագործության խուսափաշտային սիստեմի խոտադաշտի կազմի մեջ մտնել և բարձամյա խոտաբույսերին փոխարինել չեն կարուտ։

Բազմամյա խոտաբույսերի հաշվին հողում հոմուսի կուտակումը և զբա հետեանքով ստրովկտորայի վերականգնումը տեղի է ունենում հետևյալ կերպ. բազմամյա խոտաբույսերի պտղաբերող ցողունների մնացորդների և արմատների մահացումը տեղի է ունենում միայն վարելուց հետո։ Հաջույթ առնելով բազմամյա խոտաբույսերի բիոլոգիական այդ առանձնահատկությունը, հիմնական վարը՝ ցրտահերկը կատարվում է ուշ աշնանը, երբ հողի շերմաստիճանը ցածր է, խոնավությունը բարձր և օդի թափանցումը հողի մեջ համեմատաբար դժվար։ Այդ ժամանակ՝ ձմռան սկզբին օրգանական մնացորդների քայլքայումը տեղի է ունենում անաերորդ պայմաններում, դանդաղորեն և աստիճանաբար կանդ է առնում։ Հաջորդ տարվա գարնանը դիւնես նույն անաերորդ պայմաններն են տիրում՝ հողում մեծ քանակությամբ կուտակված ջուր և լինում են օդը դժվար է թափանցում նրա մեջ, ուստի օրգանական

մնացորդների քայլայումը ևս շարունակվում է ամսաերոբիոզիսի կանոններով և շուտով բոլորովին դադարում է: Հետագայում, եթե հետզհետե բարձրանում է հողի ջերմաստիճանը, վերին ջերտի ջուրն սկսում է գոլորշիանալ և հողի մեջ օդ թափանցել, միայն այդ ջերտում սկսվում է աերոր բակտերիաների գործունեությունը, իսկ ստորին ջերտում կուտակված օրդանական մնացորդները՝ դարձաւ առ մնում են անաերոր պայմաններում: Բազմամյա խոտով ըստ բաղված դաշտում այդ նույն պրոցեսը հետագա տարում կըրկա նրվում է ավելի ուժեղ շափով, որի հետևանքով տարեց-տարի առ վելանում է հումուսի կուտակումը:

Ստրոկատորայի ստեղծման գործում բազմամյա հացազգի և թիթեռնածաղկավոր խոտաբույսերի դերը նույնակա տարեր է: Որը գլխավորապես բխում է նրանց արմատական սիստեմի առ ունձնահատկություններից:

Բազմամյա հացազգի խոտաբույսերը գլխավոր-առանցքավին արմատ չունեն: Նրանց արմատները փնչեր են, կամ կոճղարաժատներ և այդ հիման վրա էլ նրանց դասում են երեք խմբի:

ա) Կանդարձատավորներ: Սրանցից են սողացող սեղախոտը, անքիստ ցորնուկը, արվանդակը և այլն: Սրանց արմատները կարճ են և հողում մեծ մասսա չեն առաջացնում: Բացի այդ, կոճղարաժատները վարակում են դաշտը և նրանց դեմ պայլքարելը խիստ դժվարանում է:

բ) Ցանցառարուփի հացազգիներ: Տիմոֆեյի խոտը, ոզնախոտը, մարգագետնային ցյուղախոտը, լայնահասկ ժիտնյակը, բարձր և բազմահար սայգրամաները և այլն: Սրանց արմատները շատ ճյուղավորումներ ու մաղարմատներ են առաջացնում, որոնց հիմահական մասսան թափանցում է ամբողջ վարելաշերտը:

գ) Խիտ բիայիններ: Մարգագետնուկը, սպիտակաբեխիկը, բարակոտիկը, փետրախոտը և այլն: Սրանց արմատները ևս կարճ են և համարյա թե բոլորովին չեն ճյուղավորվում: Բացի այդ, լավ աճում են միայն օրդանական նյութերով առատ հողերում:

Հաշվի առնելով վերոհիշյալ առանձնահատկությունները, դաշտային ցանքաշրջանառությունների մեջ թիթեռնածաղկավորների հետ, որպես խոտախառնուրդ, պետք է օգտագործել ցանցառաթուփի հացազգի խոտաբույսերը, որոնք հողում հումուս կուտակելու գործում բացառիկ դեր են խաղում, խորապես փոփոխե-

լով Հողի ֆիզիկո-քիմիական հասկությունները, որը տեղի է ունեցնած հետեւյալ կերպ.

Կենդանի արմատներն իրենց զարգացման ընթացքում խիտ ցանցով թափանցում են հողի վերին շերտի ամբողջ մասսայի մեջ և արմատներից յուրաքանչյուրը ճնշում է դործադրում հողի անստրուկտուր զանգվածի վրա, նրա մասնիկները անջատում է միմյանցից ու խտացնում իր ամբողջ երկարությամբ։ Հետագարում, բակտերիաների ներգործությամբ այդ արմատները քայլայվում են, հողի մեջ թողնելով դատարկ տարածությունների մի խիտ ցանց, որի հետևանքով նվազում է հողի կապակցականությունը, ավելանում է հողի մեջ ջրի և օդի թափանցելիությունը և այդպիսի հողը դյուրին է վարվում։

Բացի այդ, բուսական մնացորդների քայլայումից առաջացած հումուսը փոշիացած մասնիկները միացնում է միմյանց և վերածում է կնձիկների։

Բաղմամյա խոտերի քայլայման հաշվին մեծ քանակությամբ օրդանական նյութ է կուտակվում, որը բարձրացնում է հողի ջրունակությունը։ Հողը հագենալով ջրով, նրա օրդանական մնացորդներն ուժուում են, ավելացնելով իրենց ծավալը։ Թե՛ հողի և թե՛ ներծծված ջրի շերմաստիճանի հետագա տառանումները առաջանանում են հողի ծավալի զգալի փոփոխություն և նրա կապակցված զանգվածը բաժանվում է 1-ից 10 միլիմետր տրամադիծ ունեցող կնձիկների։

Այդպիսով, կենդանի արմատների տարածման, հումուսի կուտակման և հողի ծավալի փոփոխման համատեղ ներգործության շնորհիվ ստրուկտուրայից զրկված անջատ մասնիկային հողը վեր է ածվում կնձկային ստրուկտուրա ունեցող հողի։

Սակայն այդ կնձիկները կայունություն չեն ունենում։ Նրանք թիթեակի հարվածից դարձյալ փոշիանում են։

Հացազգի բաղմամյա խոտաբույսերի այդ պարկասը լրացնում են բաղմամյա թիթեննածաղկավոր խոտաբույսերը, որոնք չնայած փոփող արմատներ քիչ ունեն և հողում հումուս կուտակելու գործում հացազգիների համեմատությամբ ավելի քիչ են խաղում, սակայն, զրա փոխարեն նրանք օժտված են խոր թափանցող գլխավոր-առանցքային արմատով, որը ստրուկտուր շերտերից մեծ

Քանակությամբ կալցիում է բարձրացնում դեպի վարելաշերտը՝ թացի այդ, թիթեռնածաղկավոր բազմամյա խոտարուցերն իրենց արմատների վերին մասում՝ զլխավորապես արմատավզիկի մեջ կուտակում են մեծ քանակությամբ սննդանյութեր, այդ թվում նաև սպիտակուցները։ Դրանց քայլքայման հետեանքով առաջանում են աղոտային և ծծմբային թթվուտների կալցիումի աղեր, որոնք կլանվում են հացաղզի բազմամյա խոտարուցերի հաշվին կուտակված հումուսի կողմից։ Ահա այդպիսի հումուսի կողմից «ցեմենտված» ստրոկտուրային կնծիկներն օժավում են ջրում պուծվելու հատկությամբ, զրանով իսկ լուծելով հողը կայուն կնծկավոր ստրոկտուրային դարձնելու խնդիրը։ Այդ է պատճառը, որ երկրագործության խոտագաշտային սիստեմը պահանջում է, որպեսզի խոտադաշտի խոտակաղմը անպայմանորեն բաղկացած մնի բազմամյա հացաղզի և բազմամյա բիբեռնածաղկավոր խոտաբայսերի խառնուրդից։

Բազմամյա խոտարուցերի մշակությունն ազրուեխնիկական և տնտեսական մի շարք առավելություններ են ունի, որոնցից առանձնապես ուշադրության արժանի են հետևյալները՝

1. Թիթեռնածաղկավոր բազմամյա խոտարուցերը բակուսիրանների շնորհիվ «կապում են» օդի ազատ ազոտը, (որը օդի մասմեկ հինգերորդ մասն է կազմում) և հողի մշակման ճիշտ սիստեմ կիրառելու գեպրում մեր պայմաններում մեկ հեկտար հողում ֆիշին հաշվով 150-ից 200 կիլոգրամ ազոտ են կուտակում։ Կուտակվող ազոտի քանակը կախված է բազմամյա թիթեռնածաղկավոր խոտարուցերի տեսակներից, սորտերից, խոտախտառնուրդից, ոսոգումից, օդտագործման տևողությունից, կիրառվող ազրուեկանիկայի, և պարարտացման սիստեմից և այլ պայմաններից։

2. Բազմամյա հացաղզի խոտերի աճը, ի տարրերություն թիթեռնածաղկավորների, տեսլի է ունենում ամբողջ ցողունի յուրաքանչյուր միջհանգուցային տարածության ստորին մասում։ Դրա հետևանքով սննդանյութերը հավասար կերպով բաշխվում են ամբողջ բույսի մեջ, ըստ որում, ցողուններն իրենց կերպութեան շնորհում տերեններից։ Այս բոլոր հատկանիշներն են հակաղիք են թիթեռնածաղկավոր բազմամյա խոտարուցերին։ Վերջիններիս մոտ անդանյութերի խոշոր մասը կուտակվում է ցողունի վերից ծայրում և տերենների մեջ, որոնք բերքա-

Հավաքի ժամանակ երբեմն շորանում և թափված են, մնալով  
փայտացած-սնամեջ ցողուններ: Բազմամյա խոտաբուզների հա-  
մատեղ ցանքը փոխադարձարար լրացնում է նրանց թերություն-  
ները՝ հացազգիները թիթեռնածաղկավորներին կայունաթյուն են  
տալիս, ծառայելով նրանց համար հենարան. կայունացնում են գո-  
րանց բերքը, հեշտացնում են հնձլած խոտի շորացնելը և վերջա-  
պես լրացնում խոտի կերպելեքը:

Սյապիսով, խոտագաշտային ցանքաշրջանառությունների  
սիստեմում հացազգի և թիթեռնածաղկավոր բազմամյա խոտա-  
բուզների համատեղ ցանքը բնության վերտափոխման յուրահատուկ  
միջոցառում է հանգիսանում, որը չպետք է շփոթել սովորական  
խոտացանության հետ, որի նպատակը միայն անասնակեր ստա-  
նալն է:

Բազմամյա խոտաբուզներն իրենց բոլոր առավելությունները  
կարող են ի հայտ բերել միայն այն դեպքում, եթե ապահովվում  
են նրանց մշակման պահանջները, մասնավորապես՝ ցանքի եղա-  
նակը և ժամկետը, հետագա խնամքը, խոտհնձի ճիշտ ժամկետ-  
ների պահպանումը, խոտագաշտը որպես արոտ օգտագործելը,  
նրա ճմուտի վարելու ժամկետները, եղանակը և այլն:

Հաշվի առնելով այդ հարցերի խիստ կարևորությունը, հա-  
մառոտակիորեն կանգ առնենք դրանցից յուրաքանչյուրի վրա ա-  
ռանձին-առանձին:

#### Ա. ԹՍԶՄԱՄՑԱՆ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՉԻ ԵՊԱՆՍԻՔ ԵՎ ԺԱՄԱՆՍԻՔ

Անջրդի պայմաններում կատարված հացազգի բազմամյա  
խոտաբուզների առաջին տարվա ցանքը կանոնավոր բերք չի տա-  
լիս, որովհետեւ բազմամյա խոտաբուզների թիթակալումը, ի տար-  
բերություն միաժամների, ոչ թե սկսում է աճեցողության սկզբի  
օրերից՝ գարնանից, այլ միայն նրանց ծաղկումից հետո, շրույ-  
նակվելով այն մինչև ուշ աշուն, ուստի, հողի ավելի ուացիոնալ  
օգտագործման նպատակով, բազմամյա հացազգի խոտաբուզները  
ցանվում են աշնանացան հացահատիկային կուտափաների հետ՝  
հնիցանքի կարգով: Ցանքը կատարվում է ոչ թե սերմերը միա-  
սին խառնված վիճակում, այլ առանձին-առանձին, որովհետեւ  
հացազգի խոտաբուզների սերմերն անհամեմատ մանր են և ավելի՝  
փոքր խորությամբ պետք է թաղվեն ցողում:

Թիթեռնածաղկալոր բազմամյա խոտաբույսերից՝ առվույտի  
և երեքնուկի սերմերը աշնանացանի վրա ցանվում են հաջորդ  
տարվա պարնանը, բայտ որում, շարքացանով ցանելիս՝ աշնանա-  
ցանի պարնանացին սննդումից և փոցխումից հետո, իսկ շապտ-  
ցանի պահպանման սննդումից ու փոցխումից անմիջապես առաջ

Ինչ վերաբերվում է կորնդանի հնիքացանքին, ոտ նույնպիս կատարվում է դարնանը: Սակայն հաշվի առնելով, որ կորնդանը շրապիմացկոմ կուպուրա է և մշակվում է ամենասակավ խոնավության դոսու հողերում ու իր զարգացման առաջին շրջանում շափականց դանդաղ է աճում, որով հնիքաբերվում է մոլախոտերի հնչող ավղեցությանը, ուստի ենիկով ՀՍՍՌ-ի տարրեր շրջանների պայմաններում մեծ տարածություններով կատարված ցանքերի տվյալներից, պետք է միանգամայն նպատակահարմար համարել նաև նրա աշնան հնիքացանքը, հացազդի խոտարույսերի հետ միասին:

Ա. ԱՐԴՅՈՒՆԵԱՆ ԽՈՏԱԲՈՒՅԵՄԵՐՈՎ, ԶԻՍԴՎԱՆ ԴԱՇՏԻ ԽՆԱՄՔՆ

1. Ենքացանքի դաշտում ծածկող կովտուրայի՝ հայահատիկի բերքահավաքից հետո զեղեր կամ խրձերի կույտ, ինչպես նաև կոմբայնով կատարված բերքահավաքի մնացորդներ՝ ծղութ, մղեղ և այլն լցելոք է լողնելու դրանց հավաքը և դաշտից փոխադրումը ոկետք է առաջին հերթին կատարվի ենթացանքի դաշտից, որովհետո դրանց տակ մնացած մատղաշ ծիլերը լուսի պակասությունից դպրկանում և տուժում են:

Նախալեռնալին և յածրադիր շրջանների ոռոգելի հողերով կատարված ենթացանքից 1—2 հար խոտի բերք ստանալու նպատակով անհրաժեշտ է այդպիսի դաշտը ոռոգել, ըստ որում առաջին ջուրք պետք է տալ ծածկող կուպուրայի բերքահավաքից մի քանի օր առաջ, այն հաջվով, որպեսզի մինչև ծածկող կուպուրայի բերքահավաքի ավարտումը ենթացանձայնամայն բաղմամյա խոտաբույսերի մատղաշ ծիւերը չըրանան նույն կերպ պետք է վարվել նաև հաջորդ բերքահավաքի ժամանակ, այսինքն, խոտի բերքահավաքից 1—2 օր առաջ կատարել ուժաւէ հարի վերջին ջրումը և հնձված խոտը հնարավորին շափոված հարի վերջին ջրումը և դնձված խոտը հնարավորին շուտ շրացնելու դաշտից փոխադրելու Այս միջոցառումը առաջին շրացնելու համապատասխան է թվում, սակայն դրա հաշարացից միանգամայն տարրական է թվում,

կառակ պրակտիկան դեռևս գոյություն ունի մեր աբուազրության պայմաններում, որն իշեցնում է բազմամյա խոտարօւյսերի դաշտի լիարժեքությունը և խոտի բերքատվությունը: Մինչդեռ, ՀՍՍՌ Տեխնիկական կուզառը անհրաժեշտագուտական ինստիտուտի եղբայրնի բազայում այդ միջոցառման կիրառմամբ ապացուցված է, որ առվույտի դաշտը յուրաքանչյուր տարի կարելի է հարել 5 անգամ և յուրաքանչյուր հեկտարից ստանալ մինչեւ 15 տոննա խոտի բերք:

2. Երկարատև տաք աշուն լինելու դեպքում ենթացանքի դաշտի բազմամյա խոտերը երբեմն դերածում են այնքան, որ այդ վիճակում ձյան տակ անցնելիս տուժում են: Այդ վտանգը կանխելու նպատակով ուշ աշնանը պետք է հնձել դերանձած խոտերը:

3. Ենթացանքի դաշտը նույն տարվա հացահատիկի բերքահավաքից հետո չպետք է փոցիսել:

4. Երբեք չի կարելի փոցիսել բազմամյա խոտերի դաշտը նաև հետագա տարիների դարբանը, որը բխում է բազմամյա խոտարույսերի թփակալման առանձնահատկություններից:

Փոշիացած հողերի վրա բազմամյա խոտարույսեր ցանելու դեպքում հաճախ առաջին ձմեռումից հետո՝ դարբանը հողը ուժիկ շափով հնատում է», որի հետևանքով բազմամյա թիթեռնածաղկավոր՝ խոտարույսերի արմատավզիկը և հացազգի խոտարույսերի թփակալման հանգույցը մերկանում, հողից գուրս է ցցվում, կամ մնում է ուղղակի վարելաշերափի մակերեսին: Այդպիսի դեպքում թփակալման հանգույցները և արմատավզիկները հաճախ ոչնչանում են դարբան ցրտահարությունից, դաշտում նորանում է կուլտուրական խոտախառնուրդը, որին փոխարինում են փարթամբաններն աճող մոլախսուերը:

Այդ անցանկալի հետևանքներից խուսափելու համար, վազ դարբանը, նորացած տարածությունների, այսպես կոչված վերանորոգումներից հետո, կատարվում է դաշտի հղկումը՝ ծանր գլանների միջոցով: Գլանը թփակալման հանգույցներն ու արմատավզիկները սեղմում է հողի մեջ, դրանով իսկ վերականգնելով նըրանց հետագա նորմալ դարդացումը:

Որպես անխախտ կանոն, բազմամյա խոտաբույսերի դաշտը խոտի համար պետք է հնձել մինչև խոտաբույսերի ծաղկելը՝ կոկանակալման ժամանակաշրջանում, հետեւալ պատճառներով.

ա) Ծաղկումը, որպես բույսերի սեռական բազմացման ֆազա, ծախսում է բոլոր շարժական սպիտակուցների կեսը և լուծվող հարագերի ու ածխաջրատների զգալի մասը, որի հետևանքով ծաղկած խոտաբույսերի ցողուններում նվազում է այդ մննդանութիւնը պաշարը և դրա փոխարեն ավելանում է անժարսկի թաղանթանյութը։ Այդ է պատճառը, որ ծաղկման շրջանում և ծաղկումից հետո հնձած խոտերը դասվում են կոտիտ կերերի շարքը, մինչդեռ, օրինակ, սեղախոտը մինչ ծաղկելը հնձելիս, իր կերարաժերով հավասարվում է վարսակի հատիկին, այն ժամանակի, երբ այդ նույն սեղախոտը ծաղկման ժամանակաշրջանում հնձելիս հավասարվում է աշնան ցորենի ծղոտի որակին։

բ) Մինչ ծաղկելը հնձելու դեպքում, մննդանյութերը մնալով ցողունների և տերենների մեջ, բարձրացնում են խոտի կերաբժեցքի

գ) Բազմամյա խոտաբույսերի դաշտի վաղ հունձը հնարավորություն է տալիս, տափաստանացին և անտառատափաստանացին գոտու անջրդի հողերում տարեկան երկու հար կատարել, համապատասխանորեն ավելացնելով ստացվող բերքի թե քանակը և թիրակը։

դ) Վաղ հունձը հնարավորություն է տալիս խոտի լրացուցիչ բերքի հետ միասին մի շաբաթ շրջաններում մշակվող խոտաբույսերի առաջին հարը կատարել խոտ ստանալու, իսկ երկրորդը՝ սերմացու ստանալու համար։

ե) Սերմացուի համար միակ՝ ուշ հարի թողնված խոտաբույսերը ուժեղ կերպով վարակվում են վնասատուներով, և չնշին քանակությամբ սերմի բերք են տալիս։

Եզրափակելով բազմամյա խոտաբույսերի դաշտի վաղ հընձաման վերոհիշյալ առավելությունները, ակներեւ է դառնում զրանց ազդութեանիկան հետևանքները՝ հողի մեջ ավելի շատ օրգան նական մնացորդներ թողնելու և հումուսի պաշարը ավելացնելու տեսակետից։

Խոտադաշտի տնտեսական օգտագործման տեսզությունը կախված է ցանքաշրջանառության բնույթից, ըստ որում, կերպային ցանքաշրջանառություններում խոտադաշտը կարող է օգտագործվել մինչև 4-ից 7 տարի, որովհետեւ կերային ցանքաշրջանառություններում խոտախառնուրդ ցանելու հիմնական նպատակն անսանակեր ստանալն է: Դրան հակառակ, դաշտային, այդ թվում նաև հատումկ ցանքաշրջանառություններում բազմամյա խոտախառնուրդի հիմնական դերը ազրոտեխնիկան է, այսինքն՝ հողով համուս կոտակելու, զրա միջոցով հողի կայուն ստրոմկտուրան վերականգնելու կամ պահպանելու և հողի բերրիությունը բարձրացնելու համար: Բացի այդ, բազմամյա խոտարույսերի խառնուրդի ցանքը այդ ցանքաշրջանառություններում միաժամանակ տնտեսակերի լրացուցիչ աղբյուր է հանդիսանում:

Ակագեմիկոս վ. Ռ. Վիլյամսն իր բազմամյա փորձերի ու հետազոտությունների հիման վրա եկել է այն եզրակացության, որ գաղտային ցանքաշրջանառություններում, որտեղ բազմամյա խոտախառնուրդի դաշտին հաջորդում են միամյա կուտուրանների Յ—7 տարվա ցանքերը, բազմամյա խոտարույսերի խառնուրդի ցանքի տնտեսական երկու տարվա օգտագործումը միանգամայն բավական է, որպեսզի հողի կնձկային ստրոմկտուրան վերականգնվի: Եթե ստրոմկտուրան վերականգնվել է, նա այլևս կրկնակի վերականգնվելու կարիք չի զգում, այլ միայն պետք է պահպանվի, որի համար միանգամայն բավական է բազմամյա խոտախառնուրդի տնտեսական օգտադործման մեկ տարին, սակայն այն պայմանով, որ տվյալ տարվա ընթացքում երկու հար կատարվի: Ըստ վ. Ռ. Վիլյամսի, ստրոմկտուրային հողերի վրա, այդ թվում նաև այն ցանքաշրջանառություններում, որտեղ առաջին կամ երկրորդ ռոտացիայի ընթացքում բազմամյա խոտախառնուրդը թողնվել է տնտեսական օգտագործման մեջ երկու տարի, հաջորդ ռոտացիաների ընթացքում կարելի է օգտագործել միայն մեկ տարի, այսինքն նման հողերի վրա ցանքաշրջանառության մեջ բազմամյա խոտարույսերին կարելի է հատկացնել մեկ դաշտ:

Սակայն դաշտային ցանքաշրջանառությունների հետ միասին յուրաքանչյուր կոլխոզում պետք է կիրառվեն կերային, այդ թվում

նաև մարդագետնա-արոտալին ցանքաշրջանառություններ, ուր ֆազմամյա խոտերը պետք է օդագործվեն մինչև 6—7 տարի, այն հաշվով, որ անասնապահությունը լրիվ շափով ապահովվի անասնակերպով:

#### Ա. ԽՈՏԱԴԱՇՏԸ ՈՐՊԵՍ Ա.ՐՈՏԱՎԱՅՐ ՕՀՏԱԳՈՒՄՆԵԼՈՒ ԳԱՀԱՆՁՆԵԲԸ

Անհրաժեշտ է հիշել, որ բոլոր տեսակի անասունների, այդ թվում նաև մանր եղջերավորների սմբակների ճնշման տակ ուժին կերպով պնդանում է հողի վարելաշերտը, միաժամանակ քայլքայ-վելով նրա ստրուկտորան: Մինչդեռ խոտագաշտի տնտեսական օգտագործման երկրորդ տարվա վերջում, նրա վերնաշերտում խիտ ճիմուտ է գոյանում, որն իր առաձգականության շնորհիվ նվազեցնում է վերոհիշյալ բացասական հետեանքները: Քանի որ դաշտային ցանքաշրջանառություններում բազմամյա խոտաբույ-սերի անտեսական օգտագործումը հիմնականում երկու տարուց ավելի: Հի տեսքում, ուստի ակներեւ է դառնում, որ այդ ցանքաշրջա-նառությունների խոտագաշտի, ինչպիս նաև մյուս դաշտերի վրա անառուններ արածացնել չի թույլատրվում: Որպես կանոն, խոտա-դաշտն իրբեք արոտավայր օգտագործվում է միայն կերպային՝ մարդագետնա-արոտալին ցանքաշրջանառություններում, այն էլ խոտագաշտի մարդագետնային շրջանի երկրորդ տարվա վերջից ոչ զուտ, թացի: այդ, վաղ գարնանը և ուշ աշնանը, երբ խոտա-դաշտի հողը բավականաշատ խոնավ է, այդ դեպքում նույնպես վ կարելի անառունները թողնել արոտի, որովհետեւ բացի ստրուկ-տորայի քայլքայումից, խանգարվում է նաև խոտակազմի նորմա-սրեցաղությունը:

#### Բ. ԽՈՏԱԴԱՇՏԸ ՎԱՐԻ ԺԱՄՄԱՆԱԿԻ ԵՎ ՃՄԱՇԵՐՏԻ ԿՈՒՏՈՒՄՆԵԲԸ

Դաշտալին և հատուկ ցանքաշրջանառությունների մեջ խո-տագաշտի զվարավոր և հիմնական խոնգիրը հողում հնարավորին չափ միծ քանակությամբ օրդանական նյութ կոտուակելը և գրա-հաշվին՝ անտերոր քայլքայմամբ հումուսի գոյացումն է: Այստեղից է միանգամայն ակներեւ է դառնում, որ խոտագաշտի ամուսն գամ վաղ աշնանային վարը միանգամայն անթույլատրելի է, ո-րովհետեւ ամուսն չոր եղանակին, երբ օդի ու հողի խոնավությունը

խիստ ցածր է և չերմությունը բարձր, օրդանական մնացորդների քայլքայսմբ կընթանա տերոր պայմաններում և մեծ ինտենսիվությամբ, որի հետեւանքով հումուս չի կուտակվի: Օրդանական նյութը լրիվ կերպով կքայլքայի, վեր ածվելով հանքային պարզ տարրերի, այն պահին, երբ գենես գաշտը որևէ կուպուրայով չի զբաղված նշանակում է, ստեղծված սննդանյութերի և առաջին հերթին աղոտի այդ առաստ պաշարը աշնանային ու գարնանային աելուսմների աղղիցության տակ կորուստի կենթարկիվի, իսկ մնացած մասը կօգտագործվի մոլախոտերի կողմից, կրկնակի վնաս հասցնելով տնտեսությանը:

Ահա այդ պատճառով՝ թե սարսկտուրայի ստեղծման և թե կուտակված սննդանյութերի սացիոնալ օգտագործման նպատակով, բարձրամյա խոտերի ճմուտը պետք է վարել բացառապես ուշ աշնանը, բայց որում, նախքան երկարատե անձրեների կամ սառնամանիքների սկսվելու:

Ճմաշերտի վրա գարնանը ցանկող հիմնական կուպուրաներն են կտավատը և գարնանացան հացահատիկները, առաջին հերթին պարնանացան ցորենը: Հետեւաղեն ճմաշերտի վրա աշնանացան հացահատիկներ ցանելը պետք է համարել անթուլատրելի: Հենց այն պարզ պատճառով, որ ճմաշերտի նախացանքային մըշշակությունն այդ գեղքում պետք է կատարվի ցանքից շատ ավելի առաջ՝ ամռանը, իսկ այդ նշանակում է աերոր քայլքայման միջոցով ամբողջությամբ կորուստի հնթարկել կուտակված օրդանական մնացորդները— հումուսի ելանցութքը Բայց այդ, աղոտի աղղիցուկի պայմաններում աշնանացան հացահատիկների ցողուները խիստ ձգվում են, մեծ շափով տերեւային մասսա են գոյացնում ստվերապատելով ցողունների ստորին (Երկրորդ) միջնադուցային հատվածը, որի բջիջները երկարաձգվում են, առաջացնելով թույլ, անկայուն պատեր: Այդպիսի ցողունները շուտ են հնթարկվում հիվանդությունների, առաջին հարվածից շարդվում են, առաջացնելով ցանքի այսպիս կոչված պակուս:

Դրանց հակառակ՝ ցրտահերկ արված ճմաշերտի վրա առաջին տարում գարնանացան հացահատիկներ կամ կտավատ մշակելու գեղքում, հողում նորմալ կերպով շարսնակվում է հումուսի կուտակման և ստրոմկտուրային կնծիկների ամրացման պրոցեսը, զգալի կերպով կարգավորվում է սննդանյութերի կազմը

Հողամասը հավասարապես հարթվում — կարգավորվում է հետագա կուլտուրայի համար, լավագույն նախալայմաններ ստեղծելով շարքահերկ կուլտուրաների մշակության համար:

Առանձնահատուկ բնույթ է կրում կերպին՝ մասնավորապես մարդագետնա-արոտային ցանքաշրջանառությունների ճմաշերտը Այսուհեղ օրգանական մնացորդների ավելի մեծ պաշար է կուտակվում, քանի որ բազմամյա խոտարույսները զբաղեցնում են 4—7 տարի, իսկ մնացած դաշտային կուլտուրաներին հատկացվում է Ծնդամենը 2—3 դաշտ: Հետևակես, մարդագետնա-արոտային ցանքաշրջանառությունների ճմաշերտի նկատմամբ նույնալիսէ պահանջ չի կարող լինել, ինչ որ առաջազրվում է դաշտային ցանքաշրջանառություններին, որովհետև վերջիններիս մեջ ընդհակառակը՝ խոտադաշտը հիմնականում գորավում է 1—2 տարի, իսկ դաշտային մյուս կուլտուրաները՝ հացահատիկը, շարքահերկ կուլտուրաները և յելլը զբաղեցնում են 5—7 և երեսմն 8 տարի, առաջացնելով ստեղծված ստրուկտուրայի պարբերական քայլաւում:

Ահա այդ պատճեառով մարդագետնա-արոտային ցանքաշրջանառությունների ճմաշերտի վրա դաշտային կուլտուրաներ տեղադրելու հարցը վճռելիս, ենում են կուտակված աննդանյութների հընարավորին շափ լրիվ և նպատակահարմար օգտագործելու պահանջից: Հետևակես հակասություն չի լինի, եթե մարդագետնա-արոտային ցանքաշրջանառության ճմաշերտը հատկացվի շարքահերկ ացնալիսի կուլտուրայի, որի համար տաճելի է ազդուի ավելցուելը: Այդ կուլտուրաների շարպամ կարելի է նշել կերի արմատապալվածները, սիլոսային կուլտուրաները, կերի համար մշակվող կարտոֆիլը, բոստանային կուլտուրաները և այլն:

## 2. ՃԻՇՏ ՑԱՆՔԱՇՐՋԱՆՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՃԻՄՆԱԽԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ճիշտ ցանքաշրջանառությունների կիրառման պահանջների մասին միանդամայն հստակ դրույթներ շարադրված են կառավարության ու պարտիայի մի շարք որոշումներում:

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և Համեկ(ը)Պ Կենտկոմի 1948 թ. հոկտեմբերի 20-ի պատմական որոշման մեջ առված է, որ կունդներում ցանքաշրջանառությունները կիրառել Միութինական

կառավարության 1945 թվի հունիսի 21-ի «Կոլխոզներում ցանքա-  
շը քանառություններ կիրառելու և իրացնելու գործը բարելավե-  
լու միջոցառումների մասին» որոշմանը համապատասխան, ան-  
պայմանորդին մայնելով բազմամյա խոտարուցմարի (թիթենա-  
ծաղկավոր և հացազդի խոտախառնուրդի) ցանք և մաքար (սև)  
ցեղեր, ըստ որում հողի առավել լրիվ օգտագործման նպատակով  
բավարար խոնավություն ունեցող շրջաններում մոլախոտերից հե-  
տքզնետե մաքրվող դաշտերի հաշվին պիտք է նախատեսել զբա-  
ղցված ցեղերի տարածության ընդարձակումը:

Այն հիմնական պահանջները, որոնք առաջադրվում են ճիշտ  
ցանքաշրջանառությունների կիրառմանը, մանրամանորդին շա-  
րագրված են վերոհիշյալ՝ 1945 թվի հունիսի 21-ի որոշման մեջ,  
որունդ առված է՝

«... Սահմանել, որ կոլխոզներում ցանքաշրջանառությունները  
պետք է կառուցված լինեն, ենելով մարդկարի ու շրջանների պյու-  
ղատնտեսության հետագա դարպացման խնդիրներից, ինչպես  
նաև յուրաքանչյուր կոլխոզի անտեսական ու բնական կոնկրետ  
պայմաններից»: Այսուհետեւ «... Սահմանել, որ կոլխոզներում  
ճիշտ ցանքաշրջանառությունները պետք է ապահովեն».

ա) պյուղատնտեսության դարպացման պետական պլանների  
կառարումը, պյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության  
հետագա բարձրացումը, անասնապահության դարպացումը և նրա  
ժիշերատվության բարձրացումը, ինչպես նաև մյուս ճյուղերի (ագ-  
դեկործության, բանչարարության և այլն) դարպացումը և դր-  
անց ճիշտ հարաբերակցումը.

բ) մերամշակող արդյունարերությանը մատակարարել պյու-  
ղատնտեսական հումքով մոտակա կոլխոզներից, վերացնելով մե-  
ծածավալ մթերքների (կարտոֆիլ, շաքարի ճակնդեղ, բանջարե-  
ղեն և այլն) հեռավոր փոխադրությունները:

Երգունարերական կենտրոնների և խոշոր քաղաքների շրջա-  
կագրում կարառվիլ-բանջարային և կաթնա-անասնապահական  
բազաների ստեղծումը՝ դաշտային ցանքաշրջանառություն-  
ներում բազմամյա խոտարուցմարի ցանքաշրջանառության լայնաց-

դ) կոլխոզային ամբողջ հողերի ճիշտ օգտագործումը, հողի  
բերքիսության բարձրացումը, անասնապահության համար կերի  
կայուն բազայի ստեղծումը՝ դաշտային ցանքաշրջանառություն-  
ներում բազմամյա խոտարուցմարի ցանքաշրջանառության լայնաց-

ժան, կերային ցանքաշրջանառությունների կիրառման և մարդագետների ու արոտների օգտագործումը կազմակերպելու միջոցով.

Դ) կողևողի հանբային հողերի խիստ սահմանագատումը տնամերձ հողամասերից, պտղատու և խաղողի աշտիների, թթաստանների ու բաղմամյա այլ տունկերի տարածության հետագա չափացումը և դաշտապաշտպան անտառաշերտերի ճիշտ տեղադրումը.

Ե) տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների օգտագործման համար լավագույն պայմանների ստեղծումը՝ ցանքաշրջանառության դաշտերը ճիշտ դասավորելու և դրանց ստեղծաները սովոր հատելու միջոցով:

Վերոհիշյալ հիմնական գրությունների հետ միասին, ճիշտ ցանքաշրջանառությունների կարեռագույն պահանջների թվին հնագատուկանում՝

1. Տեխնիկական կուպուրանների և կերաբույսերի ցանքատարածությունների ընդարձակումը՝ նոր հողերի յուրացման, ճահճների չորացման, միջնակների, քարակուլտերի ու մացառությունների վերացման միջոցով:

2. Ոռոգման աղբյուրների ուսցիոնալ օգտագործումը՝ դաշտերի ճիշտ դասավորման, ջրաշրջանառության և պլանային շրագադրություն սահմանելու միջոցով, անհրաժեշտության դեպքում նախատեսելով ոռոգման ցանցի վերակառուցում, ինչպես նաև նոր ջրանցքի, ջրամբարների, կամ լճակների կառուցում:

3. Աշխատավոր ձեռքերի (բանուժի) և քաշող ուժի գովառարաշատի ծանրաբենումը ամբողջ տարվա ընթացքում՝ բրիգադաներին հավասարամեծ տարածության և միևնույն հեռավորության վրա կոմպակտ մասնիկներ հատկացնելու միջոցով, ապահովելով միանման աշխատընկալություն ունեցող կուպուրանների տմբացումը բոլոր բրիգադաներին:

4. Փոխադրական միջոցների ուսցիոնալ օգտագործումը և բերքի անկորուստ փոխադրումը՝ ցանքաշրջանառության դաշտերի ու բրիգադային հողավանդակների ճիշտ նախագծման, դաշտամիջյան, իսկ անհրաժեշտության դեպքում նաև միջկոլխողային հանապարհային ցանցի կարգավորման կամ վերակառուցման միջոցով:

8. ՀՍՍՌ ԿՈՂԱՌՋՆԵՐՈՒՄ ՅԱՆՔԱՉՐՋԱՆԱՊՈՎՑՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՌՈՒՏ ԲՆԱԿԻԹԱԴՐՈՒՄԸ

ՀԱՄԱՌ կողմովներում յանքաշրջանառությունների կիրառումը սկիզբ է առել գեռես 1933—1934 թվերին, սակայն հիմնական թափը ստացել է 1944—45 թվականներից սկսած, ըստ որում, մինչև 1944 թվի կիրառված յանքաշրջանառություններից մինչեւ օրս իրենց ուժի մեջ են մնացել 144 կողմովում կիրառվող յանքաշրջանառություններ 1944 թվին վերականգնելով՝ նախկինում կիրառված յանքաշրջանառությունները, միաժամանակ նոր յանքաշրջանառություններ են կիրառվել ևս 16 կողմովում, իսկ այնուհետև՝ 1945 թվին կիրառվել է ևս 272 կողմովում, 1946 թվականին՝ 227 կողմովում, 1947 թ. 245 կողմովում, իսկ 1948 թվին՝ 81 կողմովում։

Այսպիսով Ռեսպուբլիկայի կողմովներում հիմնականում ավարտվել է յանքաշրջանառությունների կիրառումը, բայցի Զափիանի և Վեդու (նախկին Զարաբաղլարի) շրջանի մի քանի կուտանքներից, որտեղ այդ աշխատանքներն ավարտվելու են 1949 թվին։ Ցանքաշրջանառություններ չեն կիրառվել փոքրիշատե մասնիվներով վարելահող և կայուն դաշտավարություն չունեցող մի քանի կողմովներում ևս, ինչպես օրինակ՝ Բերիայի անվան շրջանում այդեղործական 12 կողմովում և Մեղրիի շրջկենտրոնի այդպործական կողմովում։

Կիրառված յանքաշրջանառություններն ըստ իրենց բնույթի հետևյալ պատկերն են ներկայացնում։ — 985 կողմովում կիրառվել է դաշտային 1045 և կերային՝ մարգագետնա-արոտային 105 յանքաշրջանառություն։ Բացի այդ, նույն կողմովներից 200-ում կիրառվել է նաև հատուկ նշանակության 205 յանքաշրջանառություն, որոնք զլիավորապես տեղադրված են ջրովի, կամ խոնավությամբ ապահով վարելահողերի վրա։ Այդ յանքաշրջանառությունները բազմամյա խոտարույսների հետ միասին ընդորկում են նաև տեխնիկական կուտարաններ, բանջարեղենն, կարտոֆիլ և հյութառատ կերաբույսեր (սիլոս, ճակնդեղ), Ըստ իրենց տեսակաբար կշռի, հացահատիկներն այս յանքաշրջանառությունների մեջ փաստորեն ուղեկցող գեր են խաղում։ Այս համառոտ նկարագրից ակներն են զառնում, որ հյութառատ կերերի հայթայինումը տեղի է ունենալու այդ՝ հատուկ կոշված յանքաշրջանառություններում,

որոնք իրենցից ներկայացնում են ֆերմայամերձ ցանքաշրջանառություններ, սակայն միաժամանակ գերհագեցված են շարքահերկ—ոչ կերպային կուլտուրաներով։ Առանց տերիտորիալ և կազմակերպական վերափոխումների, այդ ցանքաշրջանառություններում հնարավոր է լուծել նաև կանաչ կոնվեյերի, ինչպես նաև հյութառատ կերարույսների տարածության ընդլայնումը, որը բացառապես կախված է համապատասխան պլանային առաջադրանքից։

Ռեսպուբլիկայի կոլխոզներում կիրառված ցանքաշրջանառություններն ըստ իրենց դաշտերի թվի, կուլտուրաների հաջորդականության և նրանց տեսակարար կշռի, չափաղանց տարրեր են և հասնում են մինչև 120 սխեմային Բատ հողակլիմայական գոտիների և մշակվող կուլտուրաների, կիրառված ցանքաշրջանառությունների համառոտակի բնութագրման համար ստորև բերում ենք հետևյալ հիմնական ցուցանիշները։

ա) Բամբակացան կոլխոզներում (Արարատյան գաշտավայր) կիրառված են դաշտային և հատուկ հետևյալ ցանքաշրջանառությունները.

Ցանքաշրջանառության հատուկ հետևյալ գործություններ	Այլ գոտուն գանձարանի մասնակիցներ	Կուլտուրաների տեսակաբար կշիռը %-%-ով			
		Բազմամյա խոտարույ- սներ	Բամբակենի	Բանջարեղեն բուսան	Հացահա- տիկներ
8	29	25	50	3	22
10	16,6	20	56,7	3,3	20
6	15,6	16,7	59,3	7,4	16,6
9	14	22,2	48,8	6,8	22,2
5/10	17	20	55,0	5,0	20,0
4,8	2	25	50	12,5	12,5
այլ	7	մինչև 20	մինչև 55	մինչև 10	մինչև 15

բ) ճակնդեղացան գոտում (Շիրակի բարձրավանդակ) կիրառված է նն դաշտային և հատուկ հետեւյալ ցանքաշրջանառությունները.

Դաշտային թիվ	Վաղ մայիսի մը 0/0-ն է ընդգրկված	Կուլտուրաների մը կ2Ըուը 9/0/0-ով	Կուլտուրաների մը կ2Ըուը 9/0/0-ով	Հաղանական մը կ2Ըուը 9/0/0-ով	Ցանքաշրջանառության մը կ2Ըուը 9/0/0-ով	Հաղանական մը օրինական մը կ2Ըուը 9/0/0-ով
--------------	------------------------------------	-------------------------------------	-------------------------------------	---------------------------------	--	--

Մանություն

Զբովի հողերի վրա

9	61,3	22,2	33,3	4,5	—	—
8	18,5	25,0	37,5	37,5	—	—
7	5,2	28,5	28,5	43,0	—	—
6	7,0	16,7	50,0	33,3	—	—
5/10	8	20	40	20	—	—

Անջրդի հողերի վրա

7	72,4	28,5	—	57,2	14,3	—
10	24,2	20	—	60	20	—
9	3,0	22,2	—	55,6	22,2	—
5/10	0,4	20	—	60	10	—

դ) Բացի բամբակացան և ճակնդեղացան շրջաններից, սեպատկիկայի մնացած շրջաններում կիրառվել են դաշտային և հատուկ հետեւյալ ցանքաշրջանառությունները.

Դաշտային թիվ	Վաղ մայիսի մը 0/0-ն է ընդգրկված	Կուլտուրաների մը կ2Ըուը 9/0/0-ով	Կուլտուրաների մը կ2Ըուը 9/0/0-ով	Հաղանական մը օրինական մը կ2Ըուը 9/0/0-ով	Ցանքաշրջանառության մը օրինական մը կ2Ըուը 9/0/0-ով	Հաղանական մը կ2Ըուը 9/0/0-ով
--------------	------------------------------------	-------------------------------------	-------------------------------------	--	---	---------------------------------

Մանություն

Զբովի հողերի վրա

8	32	25,0	22,0	50,0	3,0	—
9	24	22,2	22,2	44,4	11,1	—
7	17	28,5	26,0	43,0	2,5	—
10	20	20,40	25,0	50,0	5,0	—
6 և այլ	7	16,7-ից 33	30-ից 50	16,7-ից 33,3	—	—

Անջրդի հողերի վրա

7	40	28,5	—	57,2	14,3	—
9	23	22,2	—	55,6	22,2	—
10	23	20	—	60	20	—
6	9	37,5	—	50	12,5	—
6 և այլ	5	16,7-ից 33	—	50	16,7	—

«Զբովի հողերում» խմբա-  
վորված են նաև խոնավու-  
թյամբ առատ զոտու՝ Ստե-  
փանավանի և Կիրովականի  
շրջանի կոլխոզների անջրդի  
հողերի գուալի մասը»

Յանքաշրջանառությունների մասսայական իրացումը փաստորեն սկսվել է 1944—1945 թվականներից, ըստ որում, լրիվ կերպով իրացվել էին՝ այսինքն համապատասխան կուլտուրաներով և ցեղերով զբաղեցվել էին ցանքաշրջանառությամբ նախատեսված բոլոր դաշտերը—1946 թվին՝ 54 կոլխոզում, 1947 թվին՝ 138 կոլխոզում, 1948 թվին՝ 141 կոլխոզում, իսկ 1949 թվին՝ 220 կոլխոզում։ Մնացած բոլոր կոլխոզներում ցանքաշրջանառությունները լրիվ կերպով իրացվելու են 1953—54 թվականներին։

Խնձորես բերված թվերն են ցույց տալիս, կիրառված ցանքաշրջանառությունների իրացումը չափազանց դանդաղ է ընթանում, որի հիմնական պատճառը բազմամյա խոտաբուզսերի սերմարուծության անբավարար վիճակն է։

Ցնայած մի շաբթ շրջաններում ու կոլխոզներում (Կոտայք, Աշտարակ, Թալին և այլն) կորնգանի յուրաքանչյուր հեկապրից հավաքում են մինչև 8-ից 10 և ավելի ցենտներ սերմացու, սաշայն մնացած շրջանների զգալի մասում այդ կուզուրայի սերմացուի բերքը գեռնս տատանվում է 1-ից 3 ցենտների սահմաններում։

Յանքաշրջանառությունների իրացմանն արգելակող այդ հիմնական խոշնութը պետք է ամենաշատապ կարգով վերացնել, հեկտարից 6—8 ցենտներ կորնգանի և 1,5—2 ցենտներ առվույտի ու երեքնուկի սերմացու ստանալը միանգամայն մատչելի է յուրաքանչյուր կոլխոզի համար, իսկ այդպիսի բերքատվությունը մեզ հնարավորություն կտա 1—2 տարում լրիվ կերպով զբաղեցնել հատկացվող դաշտերը, միաժամանակ միաժամանակ կատարելով բնական խոտհարքների և արոտների բարելավագան միշոցառումներից կարերագույնը՝ լրացուցիչ հնթացանքը։

Առավել անբավարար վիճակում է գտնվում հացազգի բազմամյա խոտաբուզսերի սերմարուծության գործը։ Մինչև 1948 թվվերջը ՀՍՍՌ-ի կոլխոզներում հացազգի խոտաբուզսերով զբաղված տարածությունը չի գերազանցում 600—700 հեկտարից, այն դեպքում, եթե բազմամյա թիթեռնածաղկավոր խոտաբուզսերի հնձվուածուածությունը արդեն կազմում է 68 հազար հեկտար և առաջիկա 2—3 տարում կրկնապատկվելու է այն։

Այսպիսով բազմամյա խոտաբուզսերի՝ առավել ևս հացազգիների սերմարուծության զարգացման աստիճանը պայմանավորե-

լու է կիրառված ցանքաշրջանառությունների իրացման վլիճակը, հետևապես և հողի բերրիության վերականգնման ու պյուղատրնուեական կուլտուրաների բերքատվության բարձրացման վլիճակը Ահա թե ինչու բազմամյա խոտարույսերի սերմաբուծության հարցի դրական և արագ լուծումը հիմնական օղակ է հանդիսանուածության սիստեմի արմատավորման գործում։

Բազմամյա խոտարույսերի տարածության ընդարձակումը միանգամայն անխղելիորեն կապված է անասնակերի կայուն բազա ստեղծելու հետ, այդ պատճառով էլ անասնապահության զարգացման եռամբ՝ 1949—1951 թվականների պլանով ՀՍՍՌ կողխոզների համար սահմանված է բազմամյա խոտարույսերի հնթացանքի պլան՝ 1949 թվին՝ 35 հազար հեկտար, 1950 թվին՝ 50 հազար հեկտար և 1951 թվին՝ 60 հազար հեկտար։ Դրան համապատասխան, հնձվող տարածությունները 1949 թվի 68 հազար հեկտարի դիմաց հասնելու են— 1950 թվին՝ 75 հազար հեկտարի, 1951 թվականին՝ 95 հազար հեկտար, իսկ 1953 թվականին՝ պահակաս, քան 140 հազար հեկտարի։

#### 4. ԿԻՐԱԾՎԱԾ ՑԱՆՔԱՇԲՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒՄԸ ՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ. ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ցանքաշրջանառությունների կիրառումը լուրջ և պատասխանատու ձեռնարկում է, կամ ավելի ճիշտ, ձեռնարկելումների ողջ կոմպլեքս է։ Ցանքաշրջանառությունը ճիշտ լինելու համար, նախ և առաջ պետք է ապահովված լինեն պետական պլանային առաջադրանքների կատարումը և նա համապատասխան լինի տվյալ տնտեսության հողակլիմայական պայմաններին, միաժամանակ, հանդիսանալով նրա վերափոխման գործոնը, որպես երկրագործության խոտադաշտային սիստեմի՝ Պոկուչակ—Կոստիչև—Վիլամսի կոմպլեքսի կարևորագույն օղակ։

Այդ նշանակում է կիրառված ցանքաշրջանառությունը պետք է ապահովի հողի բերրիության բարձրացումը, պետության կողմից սահմանված առաջադրանքների կատարումը՝ պյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակման ու բերքատվության բարձրացման, այգեգործության ու պտղաբուծության զարգացման, անասունների գլխաքանակի ավելացման

ու մթերատվովյան բարձրացման, արդյունաբերությանը հռամուք և բնակչությանը առատորին կենսամթերք մատակարարելու ասպարիզում և այլն Բացի այդ, ինչպես Հայոտնի է, աշխատանքի արդյունքը շափուած է ստացված արտադրանքով։ Այդ նշանակում է, որպեսզի աշխատանքի արտադրողականությունը բարձր լինի, իսկ սոցիալիստական տնտեսաձևում դա ամենակարևոր պահանջն է։ Ցանքաշրջանառության տերիտորիան պետք է ճիշտ կազմակերպված լինի, որպեսզի ռացիոնալ կերպով օգտագործվեն հողը, ջուրը, պյուլատնտեսական գործիքներն ու մեքենաները, փոխադրական միջոցները, մարդկային ուժը, լծկանը և արտադրական ժյոււս միջոցները

Եթե այս տեսանկյունով վերլուծենք ռեսպոնզիվիայի կոլխոզներում կիրաված ցանքաշրջանառությունները, ապա նախօրոք պետք է ասել, որ զբանցից շատերը չեն համապատասխանում հիշում ցանքաշրջանառություններին առաջադրվող բոլոր պահանջներին։ Ամենից առաջ այն պարզ պատճառով, որ անասնապատճենյան գլխաքանակի ու արտադրողականության նկատմամբ ԱՍԹՄ Մինիստրների Սովետի և Համեր(բ)Պ կենտկոմի կողմից 1949 թ. ապրիլի 18-ի որոշումով սահմանված նոր ցուցանիշները զգալի չափով գերազանցում են 1939 թվի դրույթները՝ առանձնապես անասունների մինիմում գլխաքանակի նորմաների նկատմամբ, որոնց հիման վրա կառուցվել էին մինչ օրս ունեցած ցանքաշրջանառությունները։ Այդ կապակցությամբ խնդիր է դրվում ցանքաշրջանառությունների լայն շափով կիրավարակությունների ցանքատարագույնությունը, լայն շափով կիրառելով կիրային՝ մարդագետնառությունները, արտադրին և ֆիրմայակերծ ցանքաշրջանառությունները։

կուլտուրաներով և բանշարագուստանային ցանքերով՝ համաձայն առաջադրվող պլանի:

Բացի սրանցից, որպես նորագույն ձեռնարկում, ՍՍՌՄ Կառավարության հատուկ որոշմամբ՝ 1950—55 թվականների ընթացքում ՀՍՍՌ նախալեռնային և ցածրադիր շրջանների կոլխոզներում հիմնվելու են մերձարևադարձային կուլտուրաների պլանացցիաներ առնվազն 7.500 հեկտար տարածության վրա:

Եթե այս բոլորին ավելացնենք նաև այն հանգամանքը, որ կիրառված ցանքաշրջանառություններում կոլխոզային գաշտապաշտապան անտառաշերտերի հիմնմանը՝ չնշին տեղ էր տրված, ինեւ պետական-պաշտպանական անտառաշերտեր բոլորովին չէին նախատեսված, որոնց համար ևս անհրաժեշտ է որոշ տարածություններ գուրս թողնել ցանքաշրջանառություններից, ապա ակներև ևն դառնում այն պատճառները, որոնց կապակցությամբ պահանջվում է համատարած կերպով ստուգել եղած ցանքաշրջանառությունները և անհրաժեշտության դեպքում վերակազմել դրանքրիամ լրացուցիչ կարգով կերպել նաև կերային ցանքաշրջանառությունները:

ՀՍՍՌ կոլխոզներում փաստորեն ավարտվել է ցանքաշրջանառություններ արմատավորելու առաջին փուլը՝ նրանց կիրառումը, ուստի մենք կարենոր ենք համարում այստեղ համառոտակիորեն կանգ առնել հետագա այն աշխատանքների վրա, որոնք անհրաժեշտ են շակելու համար եղած թիրությունները՝ մասնավորապես անասնակերի կայուն բազայի ապահովման և ցանքաշրջանառությունների լրիվ իրացումն արմատավորելու բնագավառներում:

#### Ա. ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ԱԳԱՀՅՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Անասնակերի ապահովման տեսանկյունով ցանքաշրջանառությունները պետք է ստուգեն և համապատասխան միջոցառումներ նախագծվեն, զրա համար ելակետ ունենալով հետեւյալ նախապայմանները.

ա) կոլխոզի կողմից նախատեսնվող անասնագլխաքանակի և անաստունների արտադրողականության հեռանկարային ցուցանիշները, որոնք պակաս չպետք է լինեն, քան անասնապահության գարգացման եռամբա պլանի հիման վրա որպես մինիմում, տվյալ

Գողյուղի նկատմամբ 1953 թվի համար սահմանված ցուցանիշները:

թ) պետք է լրիվ կերպով հաշվի առնվեն անասնակերի բոլոր աղբյուրները, նկատի ունենալով դրանց արտադրողականության հետագա բարձրացումը՝ ի հաշիվ արոտների ու բնական մարդագետինների բարելավման ու ռացիոնալ օգտագործման և այլ միջոցառումների:

Բնական բոլոր աղբյուրներից սպասվող անասնակերի քանակը դուրս գտնվում է նուանկարային անասնագլխաքանակի համար պահանջվելիք անասնակերի քանակից, պարզվում է դաշտային կերպայիթման ծավալը՝ կոպիտ, արոտային հյութառատ և խտացրած կերիրի նկատմամբ:

Զերքի տակ ունենալով այդ հաշվառումները, ինչպես նաև պրանային առաջադրանքը՝ մշակվող հիմնական կուտուրանների և քաղաքամյա տնկումների մասին, դժվար չի լինի համեմատել այն գոյությունը ունեցող ցանքաշրջանառությունների տվյալների հետ և համապատասխան շահում մտցնել դրանց մեջ, անհրաժեշտության դեպքում առաջազրելով նոր նախագիծ, եթե ավյալ կոլխոզում բացակայում է դաշտային և կերային ցանքաշրջանառությունների սիստեմը:

Կերային ցանքաշրջանառությունների այն խումբը, որոնց անվանում էն մարդագետնապրոտային ցանքաշրջանառություններ, խնդիրն է՝ ապահովել անասունները մեծածավալ և արոտային կեցրով։ Դրա համար նման ցանքաշրջանառություններում բազմամյա խոսարույսներին հատկացվում է 4-ից մինչև 6 դաշտ, մինչդեռ ֆերմայամերձ ցանքաշրջանառություններում, որոնց հիմնական խնդիրն է հյութառատ և կանաչ կերերի արտադրությունը, դրան համապատասխան, այդ ցանքաշրջանառություններում բազմամյա խոտարույսների առկայությունը բխում է ազրոտեխնիկական պահանջներից։

Կերային ցանքաշրջանառություններ նախագծելիս, անհրաժեշտ է հաշվի առնել այն առանձնահատկությունը, որ մեր ՌԽԱՊՈՒՀիկայի նախալեռնային և ցածրադիր գոտու յուրաքանչյուր կոլխոզի գաշտավարժության ասպարեզում եղած բրիգադաների թիվը անհամեմատ շատ է, քան լեռնային գոտու կոլխոզներինը, և ամ ՍՍՌՄՀի այլ մարգերի ու երկրամասերի կոլխոզներից յուրա-

քանչյուրինը: Այդ կատակցությամբ, ցածրադիր և նախալեռնայիշ գոտու կովազներում յուրաքանչյուր բրիգադային ամրացված վարելահողի տարածությունը երբեմն 20—30 հեկտարից չի գերազանցում, որովհետեւ գրանց զգալի մասը հագեցված է տեխնիկական, բանջարաբուտանային և շարքահերկ այլ կովազներով: Բացի այդ, գաշտավարական նույն բրիգադաներին միաժամանակ ամրացված են խաղողի կամ պտղատու այգիների զգալի տարածություններ, որը բխում է թե՛ աշխատանքի և թե՛ տերիտորիայի ծիշտ կազմակերպման պահանջներից, որովհետեւ այդ այգիների մեծ մասը անմիջականորեն կից են վարեկահողերին, իսկ առանձին դեպքերում, վարեկահողերը ուղղակի ցրված են այգիների մեջ (Արտաշատի, Զանգիբարարի, Վեդիի, Եղեանի, Շամշադինի և այլ շրջաններում): Որպես կանոն, այդ կովազների մեծ մասում արդեն իսկ կիրառված են երկուական և ավելի ցանքաշրջանառություններ՝ անջրդի հողերի վրա դաշտային, իսկ ջրովի հողերի վրա հատուկ ցանքաշրջանառություն (հյութառատ կերերը տեղադրելով հատուկ ցանքաշրջանառություններում), որի հետեանքով դաշտավարական յուրաքանչյուր բրիգադային արտադրական վանդակներ են հատկացվել միշտ հաշվով 15-ից մինչև 18 հատվածում, ըստ որում, հատուկ ցանքաշրջանառություններում, երբեմն այդ վանդակների տարածությունը իշնում է մինչև 2—3 հեկտարի, որի աշխատանքների մեքենայացումը լուրջ դժվարությունների առաջ է կանգնեցնում:

Ենելով թվարկված և մի շարք այլ առանձնահատկություններից, նախալեռնային և ցածրադիր գոտու կովազներում ցանքաշրջանառություններ կիրառելիս, ֆերմայամերձ ցանքաշրջանառության խընդիրները՝ հյութառատ կերերի հայթայիման տեսակետից, միացվել են այսպիս կոչված հատուկ ցանքաշրջանառություններին, որոնց հիմնական խնդիրն է՝ տեխնիկական և բանջարաբուտանային կովազարանների տեղադրումը: Հատուկ ցանքաշրջանառություններում հյութառատ կերեր մշակելը ոչ միայն չի հակասում այդ ցանքաշրջանառություններից որևէ մեկի ադրուելսնիկական և կազմակերպչական պահանջներին, այլ և նպաստում է մշակվող կովազարանների բերքատվության բարձրացմանը և աշխատանքի ու տերիտորիայի ծիշտ կազմակերպմանը, հետեապիս և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Այստեղ ամբողջ հար-

ցը նրանումն է, թի ո՞րքանով է ապահովվում հյութառատ կե-  
րերի պահանջը: Այս հարցն արդին ոչ թե կախված է ցանքաշրջա-  
նառությունների միացումից, այլ ցանքային տարածությունների ու  
անասնապահության դարձացման պլանային առաջադրանքների  
կողոգինացումից:

Հետևապես, այնտեղ որտեղ կիրառվի են նաև հատուկ ցանքա-  
շը բանապություններ, հյութառատ կերերի արտադրություն կազմա-  
կերպելու համար երրորդ՝ ֆերմայամերձ ցանքաշը առաջանակառության  
կիրառման անհրաժեշտություն շի ղգացվի: Այս հանձնարարականը  
իհարկե շի վերաբերյալ այն կոլխոզներին, որոնց ֆերմաները մը շ-  
տապես գտնվում են հատուկ ցանքաշը առաջանակառության տերիտորիա-  
լից ղգալի հետափորության վրա: Նման ղեպքերում անհրաժեշտ  
կլինի հյութառատ կերերի արտադրությունն անպայմանորեն կազ-  
մակերպել անմիջականորեն ֆերմային կից հողերի վրա, եթե հողա-  
կլիմայական սրայմանների բերումով հնավոր է դրանց վրա հյութա-  
շատ կերի մշակությունը: Ի դեպ, անհրաժեշտ է նշել, որ հյութա-  
ռատ կերերի մշակությունը պետք է մոտեցնել ոչ թե անասունների  
ճամբարային (յայլաղային) կայաններին, այլ այն անասունպոմե-  
րին և խողանոցներին, որտեղ ձմեռելու են անասունները:

Ինչ վերաբերվում է մարդագետնաարոտային ցանքաշրջանառություններին, ապա սրանց չի կարելի կոմպենսացնել կամ համատեղել այլ ցանքաշրջանառությունների հետ։ Որպես կանոն, յուրաքանչյուր կոլխոզ պետք է ունենա արոտամարդագետնային ցանքաշրջանառություն, կիրառելով այն առաջին հերթին ցածր բերքատու խոտհարքների և արոտների վրա, ինարկե այնպիսի տարածություններում, որտեղ հողային ծածկութիւն վարելաշերտի հզորության և ենթավարելաշերտի կազմովթյան, ինչպես նաև հողամասի ռելիֆի տեսակետից հնարավոր կլինի վարել և բազմամյա խոտարույսերից զատ գաշտային որևէ կուտուրա (հացահատիկի, կտակատ և այլն) մշակել։ Ի տարբերություն ֆերմայամերձ ցանքաշրջանառությունների, մարդագետնաարոտային ցանքաշրջանառությունները առաջին հերթին կիրառվում են ամառային արոտների (պետական ակտով կոլխոզին ամրացված) վրա, կամ դրանց կից այլ հողատեսքների վրա, անլիախ այն բանից, թե ձմեռային անասնագոմերը որտեղ են դտնվում։

Անհրաժեշտ ենք համարում պարզաբանել, որ բամբակացան-

գուտու կոլխոզներում հազիվ թե հնաբավոր լինի կիրառել մարդարկադիմանարուտային ցանքաշրջանառություններ, քանի որ այդ գոտու հողերի վրա դյուլատնտեսական կուլտուրաների մշակությունը պայմանավորված է ուսումնական հետ, իսկ ոռոգելի հողերը օգտագործում են տեխնիկական ավելի ինտենսիվ կուլտուրաների՝ բամբակի և խորդենու տակ:

#### Ա. ԿԻՐԱՌՈՎԱՆ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԸ

Կիրառված բոլոր ցանքաշրջանառությունների լրիվ իրացման համար ՍՍՌՄ Կառավարությունը որոշակի ժամկետ է սահմանել, որի հիման վրա ՀՍՍՌ Մինիստրների Սովետի 1949 թվի մայիսի 4-ի որոշմամբ Ռեսպուբլիկայի կոլխոզների նկատմամբ սահմանվել է ցանքաշրջանառությունների լրիվ իրացման հետևյալ ժամկետները՝ (աճող թվերով).

220 կոլխոզում իրացվելու են 1949 թվին	400	»	»	1950	»
	600	»	»	1951	»
	850	»	»	1952	»
	1000	»	»	1953	»
	1030	»	»	1954	»

Ցանքաշրջանառությունների իրացման գործում զգալի աշխատանք են կատարել Ստեփանավանի, Արթիկի, Թալինի, Աղինի և Ախուրյանի շրջանների կոլխոզները, որոնք 1949—1950 թվականներին ավարտում են կիրառված բոլոր ցանքաշրջանառությունների լրիվ իրացումը: Դրանցից հետ չեն մնում նաև Ախտայի, Կոտայքի, Ալավերդու և մի շաբթ այլ շրջանների կոլխոզները, որոնք նույնպես լուծել են բազմամյա թիթեռնածաղկավոր խոտաբուլսերի սերմացուի սեփական բազա ստեղծելու խնդիրը և արդեն ձեռնարկել են հացազգի խոտաբուլսերի սերմացուի արտադրությանը: Սակայն դժողով կողքին Բասարեցարի, Մարտունիի, Վեդիի, Մինիանի, Կրասնոսելսկի և մի քանի այլ շրջանների կոլխոզներում շափաղանց անբավարար է ընթանում ցանքաշրջանառությունների իրացման գործը: Իհարկե, ցանքաշրջանառությունների ի-

բացման խնդրում առաջնակարգ նշանակություն ունի բազմամյա խոտարույսերի սերմացուի ապահովածությունը, սակայն դա միակ պատճառը չէ, որ այդ շրջանների կոլխոզներում մինչ օրս անհերելի կերպով ձգձգվում է ցանքաշրջանառությունների իրացումը, այլ այն, որ նշված շրջանների գյուղատնտեսական բաժիններն ու ՄՏԿ-ները և առաջին հերթին նրանց ագրոնոմիական անձնակաղմը ընդուռալ չեն մոտեցել այդ գործին։ Դեռ ավելին, հաճախ ոչ ճիշտ պլանավորման հետևանքով նրանք խախտում են եղած ցանքաշրջանառությունները։

ՍՍՌՄ-ի Կոռավարության 1945 թվի Հունիսի 21-ի որոշման մեջ ասված է «...Հաճախ իրենք՝ տեղական օրգաններն են խախտել ցանքաշրջանառությունները, առանձին շրջանների և կոլխոզների ցանքատարածությունների սիրալ պլանավորման հետևանքով...»։ Այնուհետև՝ «Երջառվետների Գործկոմների նախագահների, գյուղատնտեսական բաժինների վարիչների ու գլխավոր ագրոնոմների, ՄՏԿ-ների գրեթե կոռոնների ու ավագ ագրոնոմների և կուխոզների նախագահների վրա զնել ցանքաշրջանառությունների վիրականուման ու կիրառման տարիկան պլանների, կիրաված ցանքաշրջանառությունները ճշորեն իրացնելու, ինչպես նաև ցանքաշրջանառությունները ցանքաշրջանառության դաշտերում ցանքաշին առաջադրանքները ցանքաշրջանառությունը։ Արգելել ճիշտ տեղադրելու անմիջական պատասխանատվությունը։ Արգելել ցանքաշրջանառությունների իրացման (փոխանցման) պլանների մեջ փոփոխություններ կատարելը, առանց գյուղամքնի գլխավոր ագրոնոմի թույլտվության»։

Ցանքաշրջանառություններն ամենաարագ կերպով իրացնելու այդ հիման վրա գյուղատնտեսական կուլտուրաների բերքատըն այդ հիման վրա գյուղատնտեսական կայուն բազա ստեղծելու վորոշումը բարձրացնելու և անասնակերի կայուն բազա ստեղծելու հայտակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները։

Գյուղատնտեսական աշխատանքների պլանը մշակելիս, հաֆեմատել այն ցուրաքանչյուր կոլխոզի ցանքաշրջանառության փոխանցման պլանի հետ և ցանքի, ցեղերի, պարարտացման ու ագրոտեխնիկական միջոցառումների պլանները սահմանել, սերտորեն կապակցելով կիրաված ցանքաշրջանառությունների ու գրանց փոխանցման պլանների հետ։

Անհրաժեշտ է մեկընդիշտ վերջ տալ երբեմն կրկնվող այն սը-  
խալ պրակտիկային, երբ այսպես կոչված «թուցլ» կոլխոզներին տ-  
ռաջադրվելիք ցանքի, ցեղերի ու ագրոտեխնիկական միջոցառում-  
ների պլանի մի զգալի մասը փոխադրվում է հարեան կոլխոզնե-  
րին: Դրա հետևանքով մի կողմից այդպիսի կոլխոզները դարձյալ  
նույն «թուցլ» վեճակում են մնում — իսկ մյուս՝ կողմից՝ խանգարվում  
է հարեան կոլխոզներում կիրառվող ցանքաշրջանառությունների  
լրիվ իրացումը:

Այս կարգի թողտվությունները ՍՍՌՄ Կառավարության  
ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի որոշումներում որպես է  
որպես դատապարտելի պրակտիկա, խստորեն արդելելով դրանց  
հետագա կրկնվելը:

Բացի այդ, ինչպես սահմանված է ՍՍՌՄ Կառավարության ո-  
րոշումով, տարեկան երկու անգամ՝ առաջինը գարնանաշանի տ-  
վարումից, իսկ երկրորդը՝ աշնանացանից անմիջապես հետո,  
համատարած կերպով, բոլոր կոլխոզներում պետք է ստուգել ցան-  
քաշրջանառությունների իրացման վիճակը և անհրաժեշտության  
դեպքում շրջուղիւնների Գործադիր Կոմիտեների գյուղատնտեսա-  
կան բաժինների վիճակոր ագրոնոմների համաձայնությամբ հա-  
մապատասխան շտկում կատարել փոխանցման պլաններում:

Այն կոլխոզներում, որտեղ անհետացել են ցանքաշրջանառու-  
թյան դաշտերի ու բրիգադային հողավանդակների սահմանափակ-  
ները, անհրաժեշտ է անհապաղ վերականգնել դրանք, կատենդո-  
րիկ կերպով արդելելով դրանց հետագա խախտումը:

Հաշվի առնելով բազմամյա խոտարուցմերի վճռական նշանա-  
կությունը ցանքաշրջանառությունների իրացման գործում, անհրա-  
ժեշտ է զարկ տալ դրանց սերմնաբուծությանը, առանձնահատուկ  
ուշադրություն դարձնելով բազմամյա հացազգի խոտարուցմերի  
սեփական սերմացով պաշար ստեղծելու վրա, որովհետև դրանք  
ՀՍԽՌ-ի կոլխոզային արտադրության մեջ նոր են մուտք գործում:

Դրանց հետ միասին, անհրաժեշտ է ամենամատչելի ձևով և  
լայնորեն պարզաբանել կոլխոզային աշխատավորությանը, բնու-  
թյունը վերափոխելու և կոլխոզները տնտեսապես ամրապնդելու  
հզոր լծակներից մեկի՝ ցանքաշրջանառությունների արմատավոր-

ման Հոկայական նշանակությունը, պահանջելով անպատիք չը-  
թողնել այն անձանց, որոնք իրենց անփութ և անտարբեր վերա-  
րերմունքի շնորհիվ կխախտեն կիրառված ցանքաշրջանառություն-  
ները:

Ցանքաշրջանառությունների լրիվ արմատավորումը սոցիալիս-  
տական գյուղատնտեսության մեջենայացված արտադրության կու-  
տարան կրարձրացնի մի նոր աստիճանի: Այդ գործում խոշոր ա-  
նելիքներ ունեն ինչպես կոլխոզային աշխատավորությունը, այն-  
պես էլ գյուղատնտեսության մասնագետները և գիտնականները:  
Քիչտ ցանքաշրջանառությունների լրիվ արմատավորման և երկրա-  
գործության խոտագուշտային սիստեմի մյուս օդակների ամրող  
կոմպլեքսի կենսագործման պրոցեսը սոցիալիզմի երկրում այն  
հնոցներից մեկն է հանդիսանալու, որտեղ աստիճանաբար միա-  
ձուլվելու են ժողովրդը և ֆիզիկական աշխատանքները:

ՀՈՂԻ ՃԻՇՏ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՑԱՆՔԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՍԻՍՏԵՄԸ,  
ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՍԵՎ ՑԵԼԵՐԻ, ՑՐՏԱՀԵՐԿԻ ԵՎ ԽՈԶԱՆԻ  
ԵՐԵՎՎԱՐԻ ԼԱՅՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հողի մշակման սիստեմն երկրագործության խոտադաշտալին սիստեմի անբաժանելի էլեմենտներից մեկն է։ Այդ սիստեմի հիմունքները՝ մշակվել են ուստա առաջավոր գիտնականների կողմից։ Դոկտուչակի, կոստիչեկի և վիլյամսի ուսմունքի համաձայն հողի մշակման սիստեմի նպատակն է վերականգնել վեգետացիայի ժամանակաշրջանում կորցրած հողի ստրուկտորան և պայքար մղել մոլախոտերի և միջատային վնասատուների դեմ։

Դոկտուչակը, կոստիչեկը և վիլյամսը բազմաթիվ փորձերով պարզեցին, որ ամենաբարձր բերք ստացվում է միայն մանր կընձկային ստրուկտորա ունեցող հողերում։ Մանր դիմացկուն կընձկային ստրուկտորայով է որոշվում հողի բերրիության աստիճանը։ Այսակից էլ բխում է այն, որ ստրուկտորայի ստեղծման, նրա պահպանման և ուսցիոնալ օգտագործման ուղղությամբ տարվող աշխատանքների նպատակը պետք է լինի հողի բարձր բերրիության ֆոխ ստեղծելը և մեր հողերը կուլտուրական վիճակի բերելը։ Կուլտուրական հողը պահանջում է հողի մշակման նորագույն սիստեմների գործադրում և առաջին հերթին կուլտուրական վար։

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը, ուսումնասիրելով և քննադատաբար վերլուծելով հողի մշակման հին սիստեմները (ճմաշերտ շուր տալը, ճմուտը՝ մշակելը, փորփոշավարը, հողի մշակման կրկնակի վարը և այլն), բացատրեց նրանց սիստեմը, վերցրեց բոլոր օգտակար կողմերը և ապա առաջադրեց հողի մշակման ժր ուսմունքը։

Նա գտնում է, որ հողի մշակման հին սիստեմների գործադրում բոլոր դեպքերում էլ մենք կործ ունենք սովորական հասարակ

վարի հետ: Այդ սխառեմներով վարի գեղքում ստացվում է հետեւալը: բոլոր հողերի (մարգագետնի, խոտադաշտի, խոզանի) վարելաշներով բաժանվում է երկու հակագիր հատկություններ ունեցող շներակի: Դաշտի վրա շարժվող մեքենաների, մարդկանց, անասունների ծանրության, անձրևների միջոցով լվացվելու և բակտիրիաների կողմից հումուսի քայլայման հետևանքով մեկ սեղոնի ընթացքում հողի վերին 10 սմ շերտը փոշիանում և ամրանում է, որի հետևանքով բարձրանում է նրա կատակցականությունը: Այդ պատճառով հասարակ գութանով վարելիս հողի վերին շերտը չի մանրանում, չի վերածվում ստրոկատորային կնձիկների: Տմուտը վարելիս վեր է ածվում ընդհատվող կամ ամբողջական ժապավենների, իսկ խոզանի վերին շերտը վերածվում է խոշոր կոշտերի, որոնք շոր լինելու դեպքում դժվար են մանրանում:

Տմուտի և խոզանի ստորին շերտը, ընդհակառակը, ընդունում է կնձիկների վերածվելու հատկություն, որովհետեւ կենդանի առատներով ավելի թուլ է կատակցված, որա վրա քիչ են ազգությարժվող ծանրությունները, կնձիկները չեն լվացվում, բակտերիաները այդ շերտում հումուսը չեն քայլայում: Այս է պատճառը, որ աշնանը յուրաքանչյուր հողի երկու շերտերը միմյանցից խիստ տարբերվում են: Տմաշերտի ցածի շերտը վերին շերտի հակապատշաճերի ներկայացնում ամեն տեսակինից: Որպես այդ բոլորի արդյունք, բոլոր պտուտակաձև, գլանաձև և սրանց միջին այլ տիպի գութաններով վար կատարելը չի տալիս անհրաժեշտ էֆեկտ, քազութաններով վար կատարելը չի տալիս վերին շերտը փոխադրել ներքին շերտը, իսկ ստորին շերտը բարձրացնել վերեւ: Բացի այդ, նախկին թագամը ծանծաղ վար և այն էլ 3—4 անդամ ավելի աշխատանք ախսելու պայմանով:

Սովետական գիտությունը գտավ այդ բոլոր թերությունները վերացնելու ելքը: Դա հողի կուլտուրական վար կատարելու միջոց ցասումն է՝ նախագութանիկավոր գութանով:

## 1. ՀՈՂԸ ՆԱԽԱԳՈՒԹՅՈՒՆԻԿԱԼՈՐ ԳՈՒԹԱՆՈՎ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Առվտուրական վար.— Նախագութանիկ ունեցող գութանի աշխատող էլեմենտները կազմված են՝ գլխավոր իրանից (խոփից և

թերց), ձեփշից և նախագութանիկից: Նախագութանիկը գլխավոր իրանի ճեղտ փոքրացրած պատճեն է: Նախագութանիկի բոլոր աշխատող մակերեսները խիստ զուգահեռ են զլխալոր իրանի համապատասխան մակերեսներին: Դա նախագութանիկի զլխավոր ցուցանիշն է և դրանով էլ նա տարրերվում է չոյնտերից և սկիմ-բոլաերից, որոնք պիտանի չեն կուլտուրական վարի համար:

Նախագութանիկի ետևում տեղավորվում է դանակը, որից հետո գալիս է զլխավոր կորպուար: Նախագութանիկը կտրում է հողի ամբացած, կոճղարմատներով և ծլարմատներով ցանցապատված վերին շերտը՝ 10 սմ խորությամբ և այն ցցում է ակոսի հատակը նրա ետևում տեղավորված դանակը կտրում է հողի ներքին շերտը գաշտի կողմից, իսկ գութանի գլխավոր կորպուար բարձրացնում է արդ շերտը 10 սմ ոչ պակաս խորությամբ և այն շրջելու հեջառիթյամբ մանրացնում է թեք թեփ վրա: Այսպիսով, վարի ժամանակ մանրացած ցածի շերտն իր կնծիկներով հավատրապես ծածկում է վերևի այն շերտը, որը նախագութանիկը ցցել էր ակոսի հատակը: Այստեղ խիստ կարենոր է այն հանդամանքը, որ վարի պրոցեսում փշրվում է միայն հողի ներքին շերտը, մյուս կողմից վերին և ներքին շերտերը միմյանց հետ չեն խառնվում: Նախագութանիկ ունեցող գութանով այս ձեր վարը կոչվում է կուլտուրական վար: Այսպիսով կուլտուրական է այն վարը, երբ հողի մակերեսից անջատվում է մանրանալու անընդունակ վերին շերտը, ցցվում է ցած ու ծածկվում ներքեփի ճեղտ մանրացող շերտով, ըստ որում արդ շերտերը միմյանց չպիտք է խառնվեն: Կուլտուրական վարի մյուս առավելություններից մեկն էլ այն է, որ արդ վարի խորությունը 20 սմ պակաս չի լինում: Հարկ եղած դեպքում վարի խորությունը կարելի է մեծացնել: Բոլոր դեպքերում նախագութանիկը գրվում է 10 սմ խորության վրա:

Այն գեպքում, երբ հումուսային շերտը 20 սմ պակաս է, գործադրվում են վարելաշերտի խորացման միջոցառումներ: Այսպիսով կուլտուրական վարի գործիքը կարող է լինել միայն նախագութանիկավոր գութանը: Առաջի նախագութանիկը պիտք է գործադրվի: Բոլոր տեսակի հողերը վարելիս: Նախագութանիկը հանգում է միայն ցերագաշտի մեջ գոմալը մտցնելիս և դրան հաջորդող կրկնավար կատարելիս, որովհետեւ այս գեպքում գոմալըն առելի հավասարաշափ է խառնվում հողի հետ: Վերը ասածներից

բժիշար չէ եղբակացնել, որ հողի մշակման բոլոր հին սիստեմները շերտի շրջումը, փորփոշավարը, փշրող և միջին տիպի գութաններով վարը սոցիալիստական երկրագործության պահանջները լրացնալարարող, հողի մշակման ոչ կուլտուրական սիստեմներ են, ուստի պետք է մեր գյուղատնտեսական արտադրությունից դուրս մղվեն:

Անհիմն են այն պնդումները, թե նախագութանիկն ավելորդ քաշող ուժ է պահանջում: Նման կարծիքը նախագութանիկի ճիշտ շտեղակայցելու հետեւանք է: Ակադեմիկոս Վիլյամսի բազմաթիվ ուսումնասիրությունները և արտադրության մեջ նախագութանիկի բազմամյա տարիների աշխատանքը ճիշտ հակառակն են ապացուցում: Բացի վերոհիշյալ առավելություններից նախագութանիկը գութանի աշխատանքին կայունություն է տալիս: Այդ հատկության համար նախագութանիկավոր ձիու գութանը կոչվում է ինքնընթաց:

Կուլտուրական վարի բարձր արտադրողական նշանակությունը ևան այն է, որ ակոսի հատակը պցած ճիմը աստիճանաբար ստանում է մասնը, կայուն կնծիկների բաժանվելու հատկություն: Միաժամանակ ցածում տեղի է ունենում բուսական մնացորդների դանշաղ քայլքայում և հոմուսի կուտակում: Ներքեցից վերև տեղափոխված հողի շերտը, սկզբում կնծկային ստրոմկառուա ունենալով հանդիբծ, հետագայում տարբեր գործոնների ազդեցության տակ փոշիանում է: Բացի այդ, բույսերի արմատները, ակոսի տակը գրանց կոշտերն ու ճմուտը առանձին կնծիկների են բաժանում:

Անձրևաջրերի միջնորդ հողի շերտից ներքեւ շերտն է իշխում կալցիումը, որը հոմուսի կողմէից կլանվելով՝ կնծիկներին տպաշխատում է կայունություն: Եթե վերոհիշյալին ավելացնենք և այն, որ նախագութանիկ ունեցող գութանույթ կատարած վարը փոցիում չի պահանջում, ապա տեկա կլինեն կուլտուրական վարի միջնորդումը ստեղծված հողի բերրիության բոլոր պայմանները և աշխատանքի բարձր արտադրողականությունը:

Ինչպես տեսանք, գյուղատնտեսության արտադրության մեջ հողի մշակումը կատարվում է բազմազան նպատակներով: Հողի մշակման տեխնիկան բաղկացած է մշակման տարբեր ձևերից կամ եղանակներից:

Վ. Ռ. Վիլյամսը ի մի բերեց հողի մշակման տարբեր սիստեմները և մշակեց հողի մշակման մի նոր այնպիսի սիստեմ, որն

ընդգրկում է Հողի բերրիության պայմաններ սահմանական պայմանները խանգարող էլեմենտների դեմ պայքարելու պահանջը՝ Հողի մշակման սիստեմի ընդհանուր խնդիրներն են՝

1. իւրաքացնել Հողի բերրիության պայմանները, Հողի վարի-  
ւաշերտին տալ կնձկացին ստրուկտուրա,

2. Հողը մաքրել մոլախոտերից,

3. Հողն աղատել վնասատու միջատներից:

Հողի մշակման այդ խնդիրներն ամենից լավ լուծում են մի-  
ջանց հետ փոխադարձորեն կապված երկու սիստեմներ, այն է՝  
Հողի հիմնական կամ ցրտահերկի սիստեմը և Հողի նախացան-  
քային մշակման սիստեմը:

Այժմ անցնենք այդ երկու սիստեմների մանրամասն քննարկ-  
մանը:

## 2. ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՐՏԱՀԵՐԿԻ ՍԻՍՏԵՄԸ

Հողի մշակման հիմնական ցրտահերկի սիստեմը բաղկացած է  
երկու պրիորմից՝

ա) խողանի երեսվարից և բ) ցրտահերկից: Խոչպես ասված է  
վերևում, բոլոր դեպքերումն էլ մշակման ցրտահերկի սիստեմի նը-  
պատակն է լավացնել Հողի ստրուկտուրան, նպաստել խոնավու-  
թյան կուտակմանը և պայքարել մոլախոտերի, ինչպես նաև մի-  
շարք վնասատու միջատների դեմ:

Խողանի երեսվարի կարևորագույն խնդիրն է՝ պայքարել Հողի  
աղբոտվածության ու վնասատու միջատների դեմ (իսկ վեր-  
ջինս միայն խողանի երեսվարով հնարավոր չի կենսագործել ա-  
ռանց ցրտահերկի օգնության): Խողանի երեսվարի մյուս խնդիրն  
էլ Հողի «Հողնածության» դեմ պայքարելն է, որն առաջանում է  
Հողում ապրող միկրօրգանիզմների՝ զլխավորապես սնկերի գոր-  
ծունեության հետևանքով: Վերջապես խողանի երեսվարի խնդիրն  
է նաև բերքահավաքից հետո տեղացող անձրևաջրերի լիովին օգ-  
տագործումը, ինչպես նաև Հողում եղած խոնավության պահպա-  
նումը:

Մոլախոտերի դեմ պայքարը տարվում է երկու ուղղությամբ՝

1) դաշտում տարածված մոլախոտերն ու նըանց սերմերը  
ոչնչացնելով և

2) աղբոտվելու հնարավորությունները կանխելով:

Զգուշած կամ վաս զգուշած սերմերով ցանք կատարելը հոգն ազդութելու վատանգ է առաջացնում: ՍԱՌՄ ժողովրդական Կոմիտարների Սովետի 1937 թվի սեպտեմբերի 13-ի որոշմանը սահմանված է, որ «Յանքի համար Գոսսորտֆոնդի և Զագուշենոյի պահպաններից բաց թողնվող, ինչպես նաև սովորողների կողմից սեփական պահպաններից ցանքի համար օգտագործվող սերմացուն սեփաք է լրիվ մաքրված լինի մոլախոտերի սերմերից, մրիկի պարկիններից և եղջրասնկից: Առան սերմացուն հետ մոլախոտերի սերմերի հողի մեջ այդ ճանապարհով մուտքը արգելվում է պետականութեն և վերացված է: Հողի աղբանավելու պատճառներից է նաև զաշտը շբայքայված ծղոտով հարուստ գոմազով պարաբացնելը: Զքայքայված թարմ գոմազը միշտ էլ մոլախոտերի մեծաքանակ սերմեր է պարունակում: Մրգիսպի զաշտը գոմազը լաղթութիւն, պեփաք է օգագործել միայն գոմազբահորերում լիովին քարքայիմ զայտապատճենութեան համար:

Հոգի աղբուտման ամենավտանգավոր աղբյուրը գաշտում մուխուսակի սերմերի թափվելն ու դրանցով գաշտի վարակին է: Այդ տեղի է ունենում այն պատճառով, որ համարյա բոլոր մոլախոսերի սերմերը գյուղատնտեսական բույսերի սերմերից ավելի շուտ են հասունանում, ուստի բիբրահավաքի բոլոր հղունակների գեկությունը էլ դրանց մի մասը թափվում է մինչև բերքահավաքը և գեկությունը էլ դրանց մի մասը թափվում է մինչև բերքահավաքը և բերապա հոկայական քանակությամբ էլ վերստին թափվում է բերապա հոկայական քանակությամբ էլ վերստին թափվում է խոզանի երեսվարի քանակաքի ժամանակ: Այդանդից էլ բիում է խոզանի երեսվարի մեծագույն ազգուտեխնիկական նշանակությունը: Դրա էությունն այն է, որ մոլախուտերի թափված սերմերը պեսաք է թաղել հողի մեջ, և սաեղծել բարենպաստ պայմաններ դրանց ծլման համար, իսկ հնուագյում դրանք խոր ցրտահերիկ միջոցով ոչնչացվում են: Մոլախուտերի գարգարման առանձնահատկություններից մենքն էլ այն է, որ դրանք բանում են անհամաշափ: Այս առանձնահատկությունը տարբեր մոլախուտերի մոտ տարբեր ձևով է հանդես գալիս: Կան մոլախուտեր, որոնք տալիս են Յ խմբի սերմեր: Մի խմբի սերմերը խոշոր են և ծլում են սերմի հասունանալու տարբեր:

մյուս խմբինը ավելի մանր են և ծլում են միայն հաջորդ տարրիա գարնանը, իսկ Յ-րդ խմբի սերմերը ծլում են Յ-րդ տարրվա գարնանը: Ըստ պրոֆեսոր Կոստիչևի՝ «Հովկի մախաղ» մոլախոտի 400 սերմից անբարենպաստ պայմաններում 7 օրվա ընթացքում ծլել է 7, 145 օր հետո ևս 7, 351 օրից հետո 4, 1370 օրից հետո 75, իսկ մնացած 325 սերմերը մնացել են առանց ծլելու և բոլորովին շնչ փշացել: Պրոֆեսոր Գ. Խ. Աղաջանյանի կատարած ուսումնասիրություններից պարզվել է, որ պոչուի սերմերը 10 տարի հողում մնալուց հետո ծլունակությունը պաշտպանել են 10—15 տոկոսով: Եթե զրան գումարելու լինենք նաև այն, որ բազմամյա մոլախոտերը սերմերից բացի տալիս են մեծ քանակությամբ կոճղարմատներ, ծլարմատներ և բազմացման այլ օրդաններ, անդամ հասկանալի կլինի մոլախոտերի գեմ տարվող պայքարի առանձնակի կարևորությունը:

Շատ կարեոր է որոշել խողանի երեսվարի ժամանակը, խորությունը և այդ աշխատանքը կատարող գործիքները:

Հողի մշակման բոլոր եղանակները, այդ թվում նաև խողանի երեսվարը, պետք է կատարվեն քիչ աշխատանքի ծախոսումով: Հող մշակելիս ծախալած աշխատանքը պայմանավորվում է նրա ստրուկտորայնությամբ, խոնավությամբ, իսկ դրանով էլ պայմանավորված է հողի կապակցականությունը:

Ստրուկտորային հողերում կապակցականությունը հավասար է 0-ի, իսկ անստրուկտուր հողերում հասնում է հակայական մեծության: Այդ մեծությունը որոշվում է հողի մեխանիկական կաղմով և խոնավությամբ: Որքան հողը խոնավ է, այնքան նրա կապակցականությունը փոքր է, իսկ չոր հողերում կապակցականությունը կարող է հասնել այնպիսի աստիճանի, որ սովորական գործիքներով հողի մշակումը կարող է անհնար դառնալ:

Հասունացած հացահատիկը հողից ջուր չի պահանջում: Բացի այդ բուսական ծածկոցը հողը պաշտպանում է քամիներից և շորանալուց: Այդ նշանակում է, որ հացարույսերի ծածկոցի տակ հողի մեջ որոշ քանակի ջուր է պահպանվում: Եթե հացահատիկը հնձում ենք, հողի մեջ եղած ջուրը արագ դոլորշիանում է: Հաշված է, որ բերքահատվարից մի օր հետո հողի խոնավությունը պակասում է 1—2 տոկոսով և դրա հետեւանքով կապակցականությունը կարող է մեծանալ 2—4 անգամ: Հարավային սևահողային մարզերում,

մեր ուսուցութիւնայի մի շաբթ շրջաններում, բերքահավաքից 1—2 օր հետո հողի կտրականությունն այնքան է մեծանում, որ խողանի երեսվար կատարելը անհնար է լինում: Անհրաժեշտ է, որ պաղես կանոն, խողանի երեսվարը կատարել բերքահավաքի հետ զուգընթաց: Խողանի երեսվարը չի կարելի հետաձգել, այդ աշխատանքը պետք է կատարել ամենաարագ կերպով և կարճ ժամկետում:

Կոմբայններով, հնձող մեքենաներով կամ լորոգրեյկաներով, ինչպես նաև ձեռքով բերքահավաք կատարելիս հնձված հացահատիկը անմիջապես պետք է խորհ կապել, խրձերը խսկույն և նեղ շերտերով դիզել ու խսկույն էլ խողանի երեսվարը կատարել: Այդ գեղքում դաշտի ջուրը չի գոլորշիանա, իսկ անձրևաջուրը հողի մեջ կներծծվի 100 տոկոսով: Հողում ջուր լինելու հետևանքով մուգախոտերի սերմերը կծին, և ապա նրանց ծիլերը 3—4 շաբթի հետո կոշնչացվեն նախագութանիկ ունեցող գութանով կատարվող ցրտահերկի ժամանակ:

Խողանի երեսվարի խորությունը որոշելիս անհրաժեշտ է ելեկտրամատական սերմերի մեծությունից: Մոլախոտերի սերմերը հնչող մեծամասնությամբ մասն են լինում: Այդ պատճառով խողանի երեսվարի խորությունը 4—5 սմ պետք է լինի: Այդ խորության մասը սերմերի մեծ մասը ծլում է, իսկ երբ գեղքում միայն մոլախոտերի սերմերի մեծ մասը ծլում է, իսկ երբ խողանի երեսվարը կատարվում է 7—8 սմ և ավելի խորը, սերմերի մեծ մասը չի ծլում, որով ավելանում է հողի աղբուժականությունը:

Այն գեղքում, երբ դաշտը վարակված է սեղով, արվանդակով ու այլ կոճղարմատափոր մոլախոտերով, խողանի երեսվարի խորությունը պետք է սահմանել այդ մոլախոտերի կոճղարմատների հիմքունը: Նաև մասսայի խորությանը համապատասխան:

Խողանի երեսվարի ամենալավ գործիքը ցորենի գութանն է: Գութանը «ցորենի» անուն է ստացել հենց այն պատճառով, որ նրա միակ և ճիշտ գերը խողանի երեսվարելն է: Ցորենի գութանը ցործադրվում է միայն խողանի երեսվար կատարելիս:

1938 թվին փորձարկվեց ի. Ս. Նեսինկոյի կողմից առաջարկված խողանի երեսվարի գործիքը՝ կոմբայնին կցելու ձեռվածքը խողանի երեսվարի գործիքը՝ կոմբայնին կողմից առաջարկված է աշխատելու ժամանակ համապես աշխատելու ժամանակից հետո:

Ի. Ս. Նեսինկոյի կողմից տուաշաղբաված խողանի երեսվարի գործիքի և կոմբայնի համատեղ աշխատանքի կությունն այն է, որ

կրկու կոմբայն կցվում է մեկ շՏԶ տրակտորի: Կոմբայնի հանիք ամրացվում են 24 ափսեանոց լուշվլնիկները (ցորենի գութանները), ձախ ընթացքից աջ (ըստ կոմբայնի ընթացքի), այն հաշվալ, որ գութանն ընդդրի «Կոմբանար» կոմբայնի հեղինքի ամբողջ երկարությունը: Ըստառի մարզի կրիվորժութիւնի ուսումնական բարձրացնելու այսունի «Եոր կյանք» կոլլսովի դաշտերում կատարված ուսումնական բարձրացնելու ցուցը են տվել, որ այս սիդրումքավ խողանի երեսվար կատարելը մեծ պուակելություններ ունի՝ ստացվում է լավ որտեղի երեսվար, կրնատվում է աշխատանքը, խնայվում են վառելանյութը և ծախսերը: Այդ պատճառով էլ ակադեմիկոս վ. Ռ. Վիլյամսը գտնում է, որ կոմբայնի աշխատանքին զուղընթաց խողանի երեսվարի խնդիրը լուծված է արդյունավետ ձևով և այն պետք է կիրառվի գյալապատճենության արտադրության մեջ մեծ մաշտաբով:

Մի ժամանակ արտադրության միջոցների տնտեսման անվանական հանձնարարվում էր ցորենի գութանները կիրառել ցրտահերկ և նախացանքային վար կատարելիս, որը առաջ ընթաց աշնանացան ու գարնանացան հացահատիկների բերքատվության խխտ անկում: Դրա պատճառով սովորական կառավարությունը խստից արգելեց վարի նախատակալ ցորենի գութաններ գործածելը, Մի որոշ ժամանակ էլ խորհուրդ էր տրվում երեսվար կատարել լուշվլնիկներով, որոնք գործադրվում էին ցեղերի մշակման ժամանակ: Այդ թևավոր գործիքները ճիշտ են աշխատում 7—8 սմ խորությունից սկսած, իսկ այդ խորությունը խողանի երեսվարի համար ըստովին ընդունելի չէ:

Այսպիսով, երեսվարի համար բոլորովին անպետք են թեավոր և բաղմախոփ գութանները, փոցիները, ինչպիս նաև թաթավոր կուլտիվատորները: Որտեղ դեռևս ցորենի գութան չկա, ծայրահեղ զիադ քում նրանք կարող են փոխարինվել միայն զիսկավոր փոցիներով:

Մոլախոտերի դեմ պայքարելուց և հողի խոնավությունը պահպանելուց բացի, ինչպիս առված է վերեւում, խողանի երեսվարն ըստված է վնասատու միջատների զեմ պայքարելուն: Վնասատուներով վարակված խողանատեղը երեսվարելիս ոչնչանում են վնասատուների հարսնակները և թթվարները:

Վերջապես, ակադեմիկոս վ. Ռ. Վիլյամսը նշում է, որ ժամանակին և բարձրորակ խողանի երեսվարը ցրտահերկի համար պահանջմող վառելանյութի, ինչպիս նաև քաշող ուժի ծախսումն իշեցնում

է մոտ 50—55 տոկոսով։ Անշառշատ, միայն այս հանգամանքը խոզանի երեսվարին տալիս է խոշոր արտադրական նշանակությունն նւաստի խողանի երեսվարն անխպելիորեն կապված է ցրտահերկի հետ։ Դեռ ավելին, կարելի է տաել, որ առանց խողանի երեսվարի չկա և չի կարող լինել ճիշտ և գիտականորեն հիմնավորված պայքար բարձր և կայտն բերք ստանալու համար։ Ծյուտեղից էլ բխում է, որ բոլոր սովորողներն ու կողմանդները պարտավոր են կիրառել ագրատեխնիկական այս կարևոր միջոցառումը։ Պետք է ճիշել, որ խոզանի երեսվարն անխպելիորեն կապված է ցրտահերկի հետ։ Ցրտահերկը խողանի երեսվարի շաբանակությունը կազմող պրիոմ է։

Յրտահերկի գլխավոր խնդիրն է՝ անձրևների և ձյան ամպազ ջուրը կլանելու բնդունակ փուխր հողում կնծկային ստրուկտուրա ստեղծելը։ Միայն կնծկային հողն է բնդունակ կուլտուրական բույսերին անհրաժեշտ քանակությամբ, անընդհատ և միաժամանակ ցուր ու սննդանյութեր մատակարարելու։

Յրտահերկի առաջ պրլած խնդիրները հաշող կենսագործմալու նպատակով պետք է օգտավել այդ աշխատանքների կատարման գործիքից, և պահպանի ցըտահերկի խորությունը և կատարման հզդրիւ ժամկետը:

Հասարակ գութանով կատարած ցրտահերկի վարը լիսուս է կոշտու, որի հետևանքով ընկնում է ցանվող կուպուրաների բերքատվությունը Աւատի ցրտահերկի միակ և անփոխարինելի գործիքը նախագութանիկ ունեցող գութանն է: Ցրտահերկի ժամանակ նախագութանիկը գործածությունից հանելու բոլոր պատճառաբանները անհիմն են: Դրանք նախագութանիկավոր գութանի ազգութեանիկական առավելությունները չըմբռնելու, նրան սխալ ուղղութեանիկական հետևանք են:

Նախագործականիկալոր գութանով ցրտահերկ կատարելը պար-  
ապիր ազգությոցառում է բոլոր տիպի հողերում, անկախ ցրտա-  
հերկի ժամկետից և ցրտահերկ կատարելու այլ պայմաններից:

Համար պատճենը էլ առաջ կամաք գրահերկը պիտք  
է, կատարել 20—25 սմ խորովյամբ, իսկ սեղով և զանդուրդանով  
վարակված զաշտերում 30 սմ-ից ու պակաս խորովյամբ։ Այս  
գնապում նախագովաճնիկը պիտք է գնել 10 սմ խորովյան վրա,  
իսկ պլաստիկը իրանը 20 սմ-ից ու պակաս խորովյան վրա,  
ակոսի հատակը զատակը պահ սեղի և զանդուրդանի կոճղարժատ-

ները վերկից ծածկվեն 20 սմ. շերտով: Տեխնիկական կուլտուրաների, արմատապուղների և պալարապտուղների համար ցրտաշերկը պետք է կատարել 27—30 սմ խորությամբ: Հաջող ցրտաշերկ ստանալու նպատակով բոլոր դեպքերում էլ նախագութանիկը պետք է դնել 10 սմ. խորության վրա:

Այն դեպքում, երբ վարելաշերտը փոքր է և թույլ չի տալիս 20 սմ և ավելի խորությամբ վար անել, ապա խորացումը պետք է կատարել պարբերաբար: Վարելաշերտի խորացումն այս դեպքում զուգակցվում է հողում հումուս կուտակելու ձեռնարկումների հետ: Այդ նպատակով կատարվում է բազմամյա խորաբույսերի խառնուրդի ցանք, հողը պարագացվում է գոմաղբույզ և գանադան հանքային պարաբանյութերով: Հողի վարելաշերտն աստիճանաբար խորացնելու նորուակով օգտագործվում են խորավարուկները:

Խորավարուկը դրվում է գութանի լուրաքանչյուր կորպուսից հետո, կորպուսի ծայրից 5 սմ ցածր: Այս ձևով պետք է վարել բոլոր այն դեպքերում, երբ հարկ է լինում վարելաշերտը խորացնել: Խորավարուկներով փխրեցվում է ներքին 5—7 սմ շերտը, որով նախասպայմաններ են ստեղծվում հաջորդ տարին շուրջ տալու: Ամենից լավ արդյունք ստացվում է այն դեպքում, երբ խորավարուկը օգտագործվում է ուկ ցել անելու նպատակով՝ աշնանը ցրտահերկ կատարելու ժամանակի:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը գտնում է, որ ժամանակին ու բարձր որակով կատարած խոզանի երեսվարի առավելություններից մեկն էլ այն է, որ հարկ եղած դեպքում երեսվարը հնարաւորություն է տալիս ցրտահերկի ժամանակը հետաձգել մինչև ուշ աշուն: Այս հանգամանքն, անշուշտ, ունի կազմակերպական և տնտեսական կարևոր նշանակություն՝ զյուղատնտեսական աշխատանքների պլանավորման գործում: Սակայն առանց լուրջ պատճառների ցրտահերկի հետաձգումն անիմաստ է և ոչ օգտակար: Որոշ դեպքերում ուշ կատարած ցրտահերկը իշեցնում է հաջորդ տարվա բերքը: Թա վերաբերում է այն դեպքերին, երբ ցրտահերկը կատարվում է առանց խոզանի երեսվարը նախօրորդ կատարելու: Այս դեպքում բերքի իշեցման պատճառը պարզ է: Նախօրոք երեսվար շամելու հետևանքով դաշտը չըրանում է, հասարակ կութանով կատարած վարը կոշտեր է առաջացնում: Կոշտերը կոտրելու նըստակով հողը փոցիավում է, փոշիացվում, իսկ փոշիացած հողը

բերքը միշտ էլ ցածր է՝ ստրուկտուրային Հողի համեմատությամբ:

Այն դեպքում, եթե դաշտը վարակված է սեղով, զանգուրդանվ, արվանգակով և այլ կոճղարմատավոր մոլախոտերով, պահանջվում է անմիջապես ցրտահերկ կատարել, չենց որ այդ մոլախոտերի ծիլերը երևում են, իսկ ծիլերը սովորաբար երևում են խոզանի երևովարից 10—15 օր հետո:

Կոճղարմատավոր, ծլարմատավոր մոլախոտերով վարակված դաշտերի ցրտահերկը պետք է կատարել նախագութանիկ ունեցող գույնով՝ 30-ամ-ից ոչ պակաս խորությամբ: Այդ անհրաժեշտությունը բխում է նըանից, որ խոզանավարի միջոցով կոճղարմատավոր մոլախոտերի կարաված, մանրացված կոճղերը, ծլարմատավոր միջոցով կատարել կարաված, մանրացված կոճղերի միջոցով կարանցից առաջացած ծիլերը խորը ցրտահերկի միջոցով եղանցից առաջացած ծիլերը խորը ցրտահերկի միջոցով: Առաջուցված է, որ մինչև 20—22 ամ հողի շերտից շատ ծիլութը է պարունակության վրա, հյուծվում և ոչնչանում հետափ աննպանցամբ այդ խորության վրա, հյուծվում և ոչնչանում առաջանական վրա մարդկում վ. Ռ. Վիլյամսը այդ մեթոդով 6000 հեկտարուց հետո այդ դաշտերում սեղ չի եղել: Նույն եղանակով տարուց հետո այդ դաշտերում սեղ չի եղել: Նույն եղանակով տարուց հետո այդ պայքարել նաև Հայկական ՍՍՌ-ում տարածված կոճղարմատավոր մոլախոտերի և մեր սեսպուլիկայի որոշ շրջանների համար շարիք հանդիսացող պոչուկի դեմ:

Բարձրորակ ցրտահերկը մինչև վերջ է հասցնում վնասառա միջատների դեմ պայքարելու խնդիրը: Ինչպես ասված է, այդ միջատների դեմ պայքարելու խնդիրը: Ինչպես ասված է, այդ պայքարն սկսվում է խոզանի երևովարի ժամանակ: Ցրտահերկի սկավում քանդվում և քայքայվում են միջատների բները, ոչնչացնելութում քանդվում են բրթուրներն ու հարսնյակները: Նրանց մի մավում են ձվիկները, թրթուրներն ու հարսնյակները: Նրանց մի մավում են ծածկաները, թրթուրներն ու հարսնյակները: Նրանց մի մավում են ծածկաները, թրթուրներն ու հարսնյակները:

Ավագանությունը պայքարելու միջոցով ստեղծվում է հողի խորզութերշապիս ցրտահերկի միջոցով ստեղծվում է հողի խորզութերշապիս, որը ձյունը պահպանելու և խոնավություն կուրուրդ մակերես, որը ձյունը պահպան է հանդիսանում: Աշնանը ցրտահերկը շպետք տակելու պայման է հանդիսանում: Աշնանը ցրտահերկը շպետք է փոցիսի, որովհետեւ փոցիսած ցրտահերկը կորցնում է չուր և ձյուն պահելու ընդունակությունը:

Մեր երկրի պլուզատնտեսության առաջավորների փորձով հաստատված է ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի առաջազրած ցրտաշերկի մշակման սխատեմի հոկայցական առավելությունները՝ երկրագործության խոտագաշտային սխատեմի պայմաններում։ Նա հանդիսանում է Հողի բերրիության պայմանների բարձրացման ագրոտեխնիկական հիմքը։ Ուստի նա պետք է կիրառվի բոլոր կուլտուրաների ցանքի դեպքում։

Մինչև այժմ էլ որոշ տեղերում հաճախ լինում են դեպքեր, երբ Հողի հիմնական վարք գարնանն է կատարվում, որը միշտ էլ պակասեցնում է բերքատվությունը։ Գարնանավարի դեպքում ցածր բերք ստանալու առաջին պատճառը այն է, որ Հողը զրկվում է աշնանացին, ձմռան և վաղ գարնան տեղումներից առաջացած շուրջ կուտակելու հնարավորությունից։ Բացի այդ, գարնանավարի դեպքում հնարավոր չի լինում աշնանից պայքարել աղբուտվածության դեմ։ Դրա հետևանքով մոլախոտերի սերմերի մի մասը ցանքի մեջ ծլելով վարակում է գաշտը։ Այդ մոլախոտերը՝ խըստ են հողից չուրբ, սննդանյութերը և մշակվող բույսերին զրկում են լուսից, չերմությունից։ Մոլախոտերի սերմերի մյուս խորհրդակած մասը հողի մեջ մնալով հաջորդ տարին վարի ժամանակ բարձրանում է Հողի մակերեսն ու վարակում կավարական բույսերի ցանքը։ Այս բոլորի հետևանքով դարնանավարն ստեղծում է անկայուն և ցածր բերք։

Հիմնական վարք գարնանը կատարելն ունի նաև կազմակերպական միծ թերություններ։ Դրա հետևանքով կոլխոզներում և սովորագույներում գարնանը աշխատանքները տարվում են բացառիկ լարված կերպով, իսկ լարվածությունն աղցում է զուզտարնտեսական աշխատանքների որակի և քանակի վրա։ Ուստի աշխատանքները պետք է պլանավորել այնպիս, որ յուրաքանչյուր հողամասության մեջ գարնանացան կուլտուրաների տակ զրվող բույսը հողամասություն ցրտահերկի մշակման սխատեմ կիրառվի։

### 3. ՀՈՂԻ ՆՍԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Հողի նախացանքային մշակման սխատեմը կուլտուրական մշակման անխղելի և երկրորդ պարտադիր սխատեմն է։ Հողի աղբուտվածության դեմ տարվող հիմնական պայքարը կավարակությունում կատարվում է ակադեմիկական սխատեմ կիրառվի։

վում է յրտահերկի մշակման սիստեմի կիրառմամբ, սակայն յրտահերկի մշակման սիստեմը, ինչպես նաև մոլախոտերի դեմ պայքարի այլ նախադպուշական միջոցները (սերմացովի գտումը, միջնակների, ճանապարհների, առուների ևզերի մոլախոտերի ոչնչացումը և այլն) չեն կարող սահմանափակվել մոլախոտերի դեմ վճռական պայքար կազմակերպելով: Դաշտերը մոլախոտերով վարակվում են նաև մարդկանց, թոշունների, կենդանիների, քամու և այլ ճանապարհներով բերված սերմերով: Այդ պատճառով նախացանքային մշակման բոլոր սիստեմների առաջնահերթ խընդիրներից մեկն էլ նմուն ճանապարհներով աղբուժվելու դեմ հողի նախացանքային մշակման սիստեմով պայքարելն է: Հողի նախացանքային մշակման մշակման սիստեմը բաժանվում է՝ նախացանքային մշակում՝ գարնանացան կուլտուրաների համար (որն իրեն հերթին բաժանվում է՝ վաղ մշակություն և ուշ մշակություն գարնանացանի համար) և նախացանքային մշակում՝ աշնանացան կուլտուրաների համար կամ ցելահողամասի մշակում:

Այս աշխատանքների նպատակն է՝ ստեղծել հողի փուխր մտկերես, սերմերը հողում կանոնավոր թաղել և ապադա բույսի նորմալ գարգացման համար լավ պայմաններ ստեղծելը:

Այստեղից էլ յրտահերկի վաղ գարնան մշակումը բոլոր դաշտերում միատեսակ է: Դա յրտահերկի վաղ գարնանային քարշակումն է:

Ցրտահերկ կատարած դաշտում վաղ գարնանը ջրի մեծ պաշտօն է կուտակված: Արակես բնոդհանուր կանոն, ամեն մի հողից սրոշ ժամանակամիջոցում գոլորշիանում է այնքան ավելի համեմատաբար շատ ջուր, որքան ավելի շատ ջուր է պարունակում այլ հողերը:

Ջրի գոլորշիացումը յրտահերկ արված հողում ավելի ուժեղ է լինում այն դեպքում, եթե գաշտն ունենում է անհավասարակասատիր մակերես: Աւատի վաղ գարնանային մշակումը նպատակ ունի ստեղծել այնպիսի պայմաններ, որ որքան կարելի է քիչ ջուր գոլորշիանատ:

Նախադպութանիկ ունեցող գութանով կատարած յրտահերկը փոքր մակաձեռնություն է ունենում: Հողի կատարեները հարթելու նպատակով վաղ գարնանը, եթե հարակոր է դաշտ մանել, հողը մշակվում է փայտե քարշակով: Քարշակման ժամանակ պիտք է

օգտագործել տնտեսության տրամադրության տակ եղած քարշող ուժը: Այդ նպատակի համար տրակտորային ուժի օգտագործումը տնտեսապես ձեռնտու չէ, քանի որ այդ աշխատանքը թեթև է, ուստի և տրակտորը լիրի բեռնվածություն չի ունինա:

Քարշակը բազկացած է փայտե երեք հեծանից, որոնք օկերով իրար հետ զուգահեռաբար միացած են շղթաներով: Շղթաներից բացի կարելի է օգտագործել նաև պարաներ, ճիպուտներ և այլ համապատասխան նյութեր:

Որպեսզի ստացվի միանդամայն հարթ մակերես, քարշակումը պետք է կատարել կատարներին շեղակի ուղղությամբ: Այն դեպքում, երբ այս կամ այն պատճառով ցրտահերկի մակերեսը կեղեղվակալել է, քարշակը փոխարինվում է մեխաքարշակով:

Մեխաքարշակը նույն քարշակն է, այն տարբերությամբ, որ նրա առաջին հեծանի վրա ամրացված են մի շարք կարճ ատամներ: Մեխաքարշակի աշխատանքի շնորհիվ նրա առաջին հեծանի վրա եղած մեկ շարք ատամները անհամեմատ քիչ չափով են հողը փոշիացնում, քանի բոլոր տեսակի փոցիսերը, որովհետեւ փոցիսերը հողը փոշիացնում են զլխալորապես ատամների շրջեր և մնացած շարքերի ատամներով: Մեխաքարշակով հողի մշակումը կատարվում է նույն ձևով, ինչ քարշակման ժամանակ:

Քարշակը և մեխաքարշակը օգտագործվում են միայն այն դեպքում, երբ հողը ցրտահերկ է ստացել նախապությանիկ ունեցող գութանով, իսկ սովորական գութանով ցրտահերկ կատարելու դեպքում քարշակը և մեխաքարշակը օգտակար լինել չեն կարող: Այս դեպքում գործադրվում են ծանր փոցիսեր:

## Ա. ԳԱՐԵԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԻ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԱՆ ՄԻՍՏԵՄԸ

Քարշակով կամ մեխաքարշակով հողը մշակելուց հետո դաշտն արագ կերպով ծածկվում է մոլախոտերով: Մոլախոտերի սերմերը ձմեռվա ընթացքում յարավիղացիայի են ենթարկվում, հողի մնալով ուղղում են, ուստի և կուլտուրական բույսերի: սերմերից արագ են ծլում: Այդ պատճառով հողում եղած բոլոր մոլախոտերի ծիլերը, բողբոջները պետք է ցանքից առաջ ոչնչացվեն:

Այսպիսով ցրտահերկի քարշակումից հետո գարնանացան կուլտուրաների համար հողի գարնանային մշակման խնդիրների

մեջ են մտնում՝ մոլախոտերի ծիլերի ոշնչացումը, հողի վերին շերտի մաքրումը ծլելու ընդունակ մոլախոտերի սերմերից, կոճղարմատներից և ծլարմատներից, ինչպես նաև ցանվող սերմերի ծլման համար լավագույն պայմաններ ստեղծելը։ Այդ պայմաններից առաջինն այն է, որ կուլտուրական բուկսի սերմերն ընկնեն հետագայում նստվածք չտվող հողի մեջ։ Բացի զբանից, սերմերը պետք է ծածկված լինեն հողի փուփար շերտով։ Պետք է լավ հիշել, որ սերմերը ծլելուց հետո հողի նստվածքն անխուսափելիորեն բերքի ուժեղ անկում է առաջացնում, որովհետեւ բուկսի արմատները ճղմվում են և նրանց յուրացնող մակերեսը վիրավորվում է։ Հողի վերին շերտը մոլախոտերի ծլունակ օրդաններից մաքրելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ վաղ գարնանացանի սերմերը պետք է հողի մեջ մնան 4—5 օրից ոչ պակաս, իսկ ուշ դարնանացանների նկատմամբ այդ ժամկետը երկարում է մինչև 7—11 օր։ Մինչդեռ մոլախոտերի սերմերը, որոնք ամբողջ ձմռան ընթացքում ուռչում են և ծլման համար պատրաստի վիճակում դտնվում, կուլտուրական բուկսերից ավելի շուտ են ծլում, ճնշում են նրանց և իշեցնում բերքը։ Դրա համար էլ կատարվում է քարշակում փիսրեցրած շերտը մոլախոտերի սերմերից, նրանց ծիլերից և կոճղարմատալոր ու ծլարմատալոր մոլախոտերից մաքրելու համար։ Ինչպես ցուց են տալիս բազմամյա ուսումնասիրությունները, նաև կացանքային աշխատանքների խորությունը մի շարք շրջաններում պետք է համապատասխանի գարնանը ցանվող կուլտուրայի սերմը թաղելու խորությանը, ուստի այդպիսի շրջանների համար պետք է ընտրել նախացանքային մշակման այնպիսի գործիք, որը փիսրեցնի այն խորությամբ, ինչ խորության վրա թաղվում են ցանվող կուլտուրայի սերմերը։

Նախագութանիկավոր գութանով խոր ցրտահերկ կատարած դաշտում հողի նախացանքային մշակման խորությունը պետք է հավասար լինի սերմ ցանելու խորությանը։ Այդ մշակման համար փոցիսը, ինչպես նաև թեավոր երեսվարի գործիքները անպետք են։ Հստ ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի, նախացանքային մշակման բոլոր պահճնները կարող են իրականանալ միայն թաթավոր էքստիրպատորներով։ Նախացանքային աշխատանքներում դործադրությունը էքստիրպատորի կանգնակին պիտի ամբացված լինի պողպատի շերտ, ոչ ավելի քան 2—3 մմ. Հաստությամբ և ոչ պա-

կառ 10 սմ՝ լայնությամբ։ Կանգնակը՝ ամրացվում է, շրջանակին իր լայն կողմով՝ էքստրոպատորի շարժման ընթացքի ուժությամբ, և առջեկի կողմը դանակի պես սրվում է։ Թափը զըլ-խիկներ ունեցող հեղյուսաներով ամրացվում է կանգնակին։

Էքստրոպատորը կուտիվատորների հետ չպետք է շփոթել որովհետեւ կուտիվատորները այդ նպատակի համար պիտանի չեն։ Էքստրոպատորի թաթերը կտրում են մոլախոտների ծիլերը և փիրեցնում են հողը, բայց մոլախոտների սերմերը հողի երեսը չի հանում։

Վաղ գարնանային կուտուրաների ցանքի գլավքում էքստրոպատորներով հողի մշակումը կատարվում է ցանքից անմիջականորեն առաջ։ Քիչ ուշ արված ցանքի գեղքում այդ աշխատանքը կրկնվում է մոլախոտների ծիլերը հավասար երեալիս։ Ուշ ցանքով գարնանացան կուտուրաների ցանքի դեղքում, նայած ցանքի ժամկետին և հողի աղբատվածության աստիճանին, այդ օպերացիան կրկնվում է երրորդ անգամ։ Սակայն այդ բոլոր գեղքերումն էլ մշակման խորությունը չպետք է գերազանցի հողի մեջ շարքացանի խոփիկների թափանցելու խորությունից։

Որպես ընդհանուր երեսով վերը նշված ձևով նախացանքային աշխատանքներ կատարելիս հողը չի կեղևակալվում։ Կեղևակալում կարող է առաջանալ միայն շատ ուժեղ տեղատարափ անձրևների գեղքում։ Այս գեղքում պետք է գործազրել սպիավոր դրույթ կամ փոցի։

Այսպիսով, երբ ցրտահերկի մշակման սխտեմը ապրուելունիւ կորեն ճիշտ է կատարվել, այդ գեղքում հողի գարնան նախացանքային մշակման ժամանակ ափսեավոր կուտիվատորների, ափսեավոր և զսպանակավոր փոցիների և թեավոր գործիքների աշխատանքը վերանում է։ Դրա հետևանքով գարնանացանը ամենասեղմ ժամկետումն է կատարվում և բացի այդ աշխատանքն ու վառելանությը խնայվում է։

Թ. ԱԾԵԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱՇ ՀՈՂԻ ՆԱԽԱՑԱՆՉԱՅԻՆ  
ՄՇԱԿՄԱՆ ՄԻԱՅՆ

Աշնանացանին հատկացված հողի նախացանքային մշակումը ամենից առաջ ցիլադաշտի մշակումն է։ Աշնանացանին հատկացվող հողի նախացանքային մշակումն սկզբունքորեն ու

մի բանով չի տարբերվում գարնաճնացանին Հատկացված հողի նախացանքային մշակումից:

Մաքուր ցելահողամաս կոչվում է այն գաշտը, որն ամբողջ ամառվա ընթացքում զրադեցված չի եղել որևէ կուպուրայով, միշտ գտնվել է փոփոք, մաքուր վիճակում և կոչված է լավագույն նախալայմաններ ստեղծելու աշնանացան, իսկ Հյուսիսային և բարձր լեռնային շրջաններում նաև գարնաճնացան հացահատիկների աճման ու զարգացման համար: Եթե ցելադաշտը մինչև ամռան առաջին կեսերը զրադեցվում է որևէ կուպուրայով, այդպիսի, ցելք կոշվում է զրագված: Յարական նուսառանում և կապիտալիստա: Կան երկրներում սովորաբար ցելերին առաջարկվում են մի շարք հակասական խնդիրներ, այն է՝ հողում ջրի կուտակում, հողի կայուն կենձրային ստրոկատրայի վերականգնում, անամսնակերի ստեղծում, մոլախոտերի դիմ պայքար, բույսի կողմից յուրացվող անզգանցութերի կուտակում և այլն:

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը ցույց տվեց, որ այդ պահանջները միայնաց հակասում են: Նա ապացուցեց, որ խոտադաշտային ցանքաշրջանառություններից զուրս ցելերը ոչ միայն չեն լավացնում հողի բերրիության պայմանները, այլև օրդանական նյութի կորուսի, ապա և հողի սարուկատուրայի քայլայման պատճառ դառնալով, նրա բերրիությունն իշեցնում են: Այդ երեսութքը տեսքի է ունենում այն պատճառով, որ ցելք բազմաթիվ անդամ փիրեցվում է, հողի մեջ օդից առատորն անցնում է թթվածինը, որի հետևանքով ուժեղանում է աերոր միկրոօրգանիզմների գործունեությունը, ապա և քայլայմում է հումուսը և վեր է ածվում հանքային աղերի, ջրի, ամյակի, ածխաթթու զավի: Հումուսի քայլայման, ինչպես նաև ցելահողամասի մշակման հետևանքով հողի ստրոկատրան ևս քայլայմում է:

Ինչ վիրաբերում է ցելում ջուր կուտակելուն, ապա այդ կարծիքը թյուրիմացություն է: Ցելադաշտը բազմաթիվ անգամ մշակվում է գարնաճն և տոնան ընթացքում, որի հետևանքով հողի չուրացումն անխուսափելի է զառնում:

Մաքուր ցելերը չեն կարող լուծել նաև անամսնակերի հարցը: Նախառևողուցիոն շրջանում, եթե մենատնտես գյուղացիական քննությունները ստիլված էին ցելք օգտագործել որպես անամսնակերի աղբյուր, կիրառվում էր «ուշ» կամ «գյուղացիական»

ցել: Դա կապիտալիզմի ժառանգությունն էր և հողի մշակման բարբարոս ձև, ուստի սոցիալիստական վառվատնականության մեջ նաև տեղ չունի:

Սովորական առաջավոր դիատությունը, ինչպես նաև առաջավոր կոլխոզների և գյուղատնտեսության ստախանովականների բազմաթիվ տարիների արտադրական փորձը ցույց տվեցին, որ մեր կոլխոզներում և սովորողներում ամենից բարձր բերք ստացվում է միայն սև ցելի վրա կատարված ցանքերից: Սակայն երբ խոտադաշտային ցանքաշրջանառություններ կիրառելու միջոցով լավանա հողի ստրոկտուրան և դաշտերը մաքրվեն մոլախոտերից, ցանքաշրջանառության 1—2 ոռտացիայից հետո մաքուր ցելերն իրենց տեղը կվիշեն դրադված ցելերին:

Ցելերի մյուս տեսակները սոցիալիստական երկրագործության պրակտիկայում տեղ չպետք է ունենան:

Վերը շարադրվածից գմկար չէ եղբակացնել, որ ցելերի առաջ դրված խնդիրների կատարումը հնարավոր է միայն սև ցելի դեպքում, ուստի առաջին հերթին քնննենք նրա մշակման սկզբունքները:

Սև ցելի միջոցով մոլախոտերի դեմ ապրվող պայքարը բացառիկ կարևոր նշանակություն ունի:

Ինչպես արդեն ասված է ցրտահերկի մշակման բաժնում, կոնցարդատավոր մոլախոտերի դեմ պայքարի լավագույն ձևը ցրտահերկի մշակման սիստեմում տարվող պայքարն է:

Բազմամյա ծլարմատավոր մոլախոտերի դեմ պայքարը պետք է տարվի և ցրտահերկի, և ցելերի մշակման սիստեմում: Իսկ մնացած այլ մոլախոտերի սերմերից հողի մաքրումը կենտրոնանում է ցելադաշտում: Ցելերի մշակման դրյություն ունեցող եղանակները լավագույն դեպքում մոլախոտերից մաքրում են հողի ամենավերին շերտը միայն, որը միանգամայն անբավարար է: Ուստի անհրաժեշտ է վճռականապես փոխել պայքարի եղանակները: Սև ցելի մշակման սիստեմը, ինչպես արդեն ասված է, բաղկացած է հողի ցրտահերկի հիմնական մշակման սիստեմից (խողանի երեսվարից և նրան հաջորդող ցրտահերկից) և հաջորդ տարվա դարնան ու ամռան մշակումից:

Սև ցելում աշնանը կատարվող աշխատանքների սիստեմը նույնն է, ինչ որ ցրտահերկի մշակման սիստեմում: Ուստի պետք է ցելերի աշնանային մշակությունը կատարել նույն ձևով, ինչ

ձեռով շարադրված է հողի մշակման հիմնական ցրտահերկի բաժ-նում:

Աշնանից ցրտահերկ կատարված դաշտում, վաղ գար-նանը սեղմ ժամկետում կատարվում է մեկ հերթ սովորական քարշակում կամ մեխաքարշակում: Քարշակումից հետո սկսելի հե-տագա մշակումը պետք է անցկացվի այնպիսի ժամկետներում և այն ձևով, որպեսզի դաշտը լիովին մաքրվի մոլախոտերի սերմե-րից ու միշտ մաքրուր ու փուլիր լիբակում լինի:

Վաղ գարնանային քարշակումից կամ մեխաքարշակումից հետո մոլախոտերը մասսայորեն ծլում են: Այդ ծիլերը ոչնչացնե-ւու համար պետք է ցելադաշտը ենթարկել սիստեմատիկ շերտա-ցին մշակման՝ բազմախոփի գութաններով (լուշլինիկներով):

Լուշլինիկը ոչնչացնում է մոլախոտերի երիտասարդ ծիլերը և մոլախոտերից չմաքրված հողի նոր շերտը շրջում է երես, ո-տեղ նորից մոլախոտերի սերմերը ծլում են մասսայորեն և ոչն-չացվում հաջորդ մշակումների ժամանակ: Սև ցելի փիլրեցումների ժամանակը, քանիակն ու խորությունը պայմանավորվում են ցելա-ցողամասի վիճակով, մոլախոտերով վարակվածության աստիճա-նով: Ցելի հերթական մշակման լավագույն ժամկետ համարվում է մոլախոտերի ծիլերի մասսայաբար երեալու մոմենտը:

Ցելահողամասի առաջին փիլրեցումը: Երեսվարից հետո հե-տագա մշակումը կարող է տարվել երկու ձևով, որը կախված է նրանից, թե ու ցելը պարաբռտացվում է, թե ոչ: Ակադեմիկոս Ա. Ռ. Վիլյամսը նշում է՝ «Հպարաբռտացրած սկս ցելը թյուրիմացություն է, դրան պետք է վերջ տալ»:

Սև ցելն անպայման պետք է պարաբռտացվի գոմազրով, ան-կախ հողային պայմաններից և գոտու առանձնահատկություննե-րից: Այդ են ապացուցում նաև սոցիալիստական գյուղատնտեսու-թյան առաջավորների բազմաթիվ պարիների փորձերը: Նրանք սկ-ս ցելի լավագույն մշակմամբ ու պարաբռտացմամբ ստանում են աշ-նանացան հացահատիկների ունկորդային բերք: Գոմազրը ցելա-ցաշտ պետք է մացնել միանգամայն բայրայված վիճակում: Քայ-քայված գոմազր ասելով հասկացվում է նրա այնպիսի վիճակը, երբ նա ծղութ չի պարունակում և ներկայացնում է հողանման փուլը կնծկային սկս մասսա: Բարձ, չբայքայված, ծղութով խառը գոմազրը շպետք է մացնել սկս ցելի մեջ: Քայքայված գոմազրը հո-

զի մասսայի հետ հավասարաշափ խառնելու համար կատարվում է կրկնավար կամ երկակի վար: Դաշտ տեկափոխված և հողի երեսին փռած քայլայված գոմազըն աճմիջապես վարածածկվում է նախագութանիկ շումեցող զլանաձև գութաններով, որպեսզի հավասարաշափ խառնվի վարեկահողի ամբողջ շերտի հետ: Երկակի վարը իրեւ ընդհանուր երեւութ, կատարվում է, եթե հողին տրվում է զեռ լավ չքայլայված գոմազը: Այդ դեպքում վարը կատարվում է վարեկաշերտի ամբողջ խորությամբ: Տանկարի է ընդպրկել նույնիսկ ևնթավարեկաշերտից 1—2 սմ: Այսպիսով երկակի վարի կամ երկեավարի միջոցով ծածկվում է գոմազը, ոչընշացվում են ծլած մոլախոտերը, և մոլախոտերի սերմերից զեռ չմաքրված հողի նոր շերտը դուրս է բերվում մակերևու, հետեւապես ստեղծվում են նախապայմաններ նրանց ծլեցնելու և հետադամշակվածք ոչնչացնելու համար: Աև ցելի երկակի վարի կամ երկեավարի դեպքում մեծ նշանակություն ունեն այդ աշխատանքների կատարման ժամկետները: Խոնավությամբ ապահովված և սոսպիզով գոտիներում երկակի վարը կամ երկեավարը պետք է կատարել աշնանացանի ցանքից առնվազը 25—30 օր առաջ, իսկ շորային շրջաններում՝ 20—25 օր առաջ: Այդ ժամկետի երմատման դեպքում հողը հետապայում Շնառում է», բույսերի թփակալքան հանգուցները մերկանում են, որի հետևանքով աշնանացանները հեշտությամբ նեխարկվում են ցրտահարման:

Ընդհանուր առմամբ ու ցելի ամառային մշակման սիստեմի էությունը հողի սիստեմատիկ փխրեցումն է, որի նպատակն է պայլաբեկ մոլախոտերի դեմ, թույլ շտալ, որ հողը կնդեսակալի և չրի կորուստ տեղի ունենա և լավացնել հողի աերացիան:

Աև ցելի լուրաքանչյուր մշակումից հետո հողի փուխոր լիճառէի պայմաններում, ջրի, ջերմության և օդի առկայությամբ, մոլախոտերի սերմերն արագ ծլում են և ցելադաշտը ծածկվում է մոլախոտերով: Մոլախոտերի կողմից անարդյունավետ կերպով ջրի կլանումից, վատնումից խուսափելու համար անհրաժեշտ է այդ ժամանակ ցելադաշտը նորից երեսվարել: Այդ նպատակի համար պետք է դործադրել երեսվար կատարող թևավոր լուշինիկները (լորային շրջաններում անհրաժեշտ է թևերը հանել, կամ հողը փխրեցնել կուլտիվատորներով): Աև ցելի նախացանքային մշակությունը կատարվում է թաթավոր էքստիրպատորներով:

Ցելի ամսուային մշակման քանակը կապված է մոլախոտերի առկայության և հորդ անձրևներից հետո առաջացած կեղեսակալման հետ: Պետք է հիշել, որ ցելերի մակերեսային մշակումը վի կարելի ուղացնել, որովհետեւ ուղացման դեպքում ցելում զարգանում են մոլախոտերը, որի հետևանքով սև ցելը կորցնում է իր էֆեկտը: Աշնանացանից 1—2 օր առաջ կատարվում է վերջին փորեցումը, որի խորությունը պետք է համապատասխանի սեղմերը ցանելու խորությանը:

Եյսպիսով սև ցելի մշակման սիստեմը բխում է բոլոր հողերի և շրջանների համար միատեսակ, ընդհանուր գիտական դրույթներից: Հասկանալի է, որ դա չի բացառում տեղի պայմաններից առաջացող մասնակի փոփոխություններ մացնելու հնարավորությունը: Գյուղատնտեսական արտադրության մեջ սև ցելը լայն մասշաբով չգործադրելը բացատրվում է նրանով, որ ցելերի աշխանացին հիմնական վարը զուգակցվում է ցրտահերկի մշակման սիստեմի հետ: Սակայն առաջիկայում, առաջավոր կոլխոզների և սովորողների օրինակով սոցբալիստական գյուղատնտեսության մեջ պետք է լայն շափով կիրառել սև ցելը, որպես ցելերից ամենաէֆեկտիվը և զրանով իսկ լավագույն նախապայմաններ ստեղծել աշխանացան հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու համար:

Վաղ ցել կիրառելու դեպքում հիմնական վարը պետք է կատարել ըստ հնարավորին վաղ գարնանը, երբ հողը «քհշի» է եկել: Համեմատաբար լավ արդյունք ստացվում է, երբ վարը կատարվում է նախագութանիկ ունեցող գութանով՝ վարելաշերտի ամբողջ խորությամբ: Վարելաշերտի խորացումը վաղ ցելում՝ սև ցելի համեմատությամբ, պակաս էֆեկտավոր է: Վարից անմիջապես հետո, կամ վարի ժամանակ, միևնույն ազրեկատում կատարվում է դաշտի վիսցիում, որպեսզի հողը հարթեցվի և զրի գոլորշիացումը մինիմումի հասցվի: Վաղ ցելի հիմնական վարը, որպես կանոն, պետք է սկսել և ավարտել գարնանացան հասկավոր հացահատիկային կուլտուրաների ցանքին զուգընթաց: Պետք է հիշել, որ վարի յուրաքանչյուր օր ուղացնելը իշեցնում է վաղ ցելի էֆեկտիվությունը:

Վաղ ցելի հետագա մշակումը կատարվում է այնպես, ինչպես և ցելինը՝ այն տարբերությամբ, որ այս դեպքում մշակման քա-

նակը մեկ անգամով կրծատվում է, քանի որ վաղ ցելի հիմնական վարի ժամանակ կատարվում է սև ցելի գարնան առաջին մշակումը, վաղ ցելի գոմազրով պարարտացումը կատարվում է վաղ գարնանը (այդ գեպքով լավ է գոմազրը դաշտ ահղափոխնել ձմեռը և պահել մեծ կուտերով)՝ վարելու ժամանակ կամ հիմնական վարից հետո կատարվող առաջին երեսվարի ժամանակ։ Երկու դեպքով էլ գոմազրը հավասարապես փովում է զաշտի երեսին, որից հետո վարածածկվում է։ Վաղ ցելի հիմնական թերությունը սև ցելի համեմատությամբ այն է, որ նրանում բացակայում է հողի ցրտահերկի մշակման սիստեմը, որի հետևանքով չի ապահովվում աշնանային, ձմեռային և վաղ գարնանային տեղամասերի մաքսիմալ պահպանումը հողում, թուանում է մոլախոտերի գեմ պայքարի էֆեկտիվությունը և այն Այդ պատճառով վաղ ցելը ներկա ժամանակաշրջանում պետք է համարել որպես ժամանակավոր երեսվթ, և պետք է բոլոր միջոցները գործազրել, որպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում վաղ ցելը փոխարինվի սև ցելով։

Սե և վաղ ցելերը ՍՍՌՄ-ի Արևելյան մարզերում և Հայկական ՍՍՌ բարձր լեռնային շրջաններում, որի աշնանացան հացաբույսերը դեռևս բավականաշատ չեն տարածված, պետք է կիրառվեն նաև գարնանացան հացահատիկային կուտուրաների համար։ Այս ցելերը կարող են լինել վաղ կամ սև։ Դրանք միմյանցից տարրերում են աշնանավարի մոմենտով, միայն սև ցելում կատարվում է ցրտավար, գարնանը քարշակվում է, կուտիվացիա է արվում և ապա, մայիսի 20-ից ոչ ուշ, գոմազրը 14—15 սմ խորությամբ վարածածկվում է։ Գոմազրը վարածածկվելուց հետո կատարվում է 1 կամ 2 կուտիվացիա և հունիսի 2-րդ կեսից ոչ ուշ ցելը լրիմ խորությամբ երկակի վարվում է։ Դրան հաջորդում է կուտիվացիան։ Հաջորդ տարվա գարնանը քարշակումից կամ ցաքանումից հետո ցանվում են գարնանացան հացահատիկներ։ Վաղ ցելի գեպքում (որն ամենից շատ է տարածված) վարերը գոմազրի վարածածկմամբ, կատարվում է մայիսի 20-ից ոչ ուշ, երբ սկսվող անձրևների ազդեցության տակ հողը փափկում է։ Գոմազրի վարածածկումը կատարվում է 14—16 սմ խորությամբ, ապա դրան հետևում է երկու կուտիվացիա։ Հունիսի երկրորդ կեսից ոչ ուշ երկակի վար է կատարվում 14—16 սմ

խորությամբ։ Մշակման այսպիսի կոմբինացիաների ոլայմաններում, տեղումներով խոնավացած հողաշերտը վարվում է վարեւահորիզոնի ամբողջ խորությամբ, որով շուրջ է տրվում շոր շերտը, որը կլանում է հետագա տեղումներից առաջացած խոնավությունը։ Ցեղի մոլախոտերով ծածկվելուն դուզբնթաց կուլտիվացիա է արվում։ Գարնանը կուլտիվացիան նորից կրկնվում է և կատարվում գարնանացանը։ Բազմաթիվ տարիների փորձերը ցուց են տալիս, որ այս ցեղերի մակերեսային մշակման քանակը, մանավանդ մոլախոտերով ուժեղ վարակված դաշտերում, մեծ նշանակություն ունի։ 1935 թվի ուսումնասիրություններով, մեկ անգամ բազմախոփի լուշչիլնիկներով մշակելուց և մեկ անգամ երկակի վար կատարելուց հետո մաքուր ցեղերից ստացվել է գարնանացան թորենի 13 ցենտներ բերք, երկու լուշչովկայի և մեկ երկակի վարի գեպքում 18 ցենտներ, իսկ երեք լուշչովկայի և երկակի վարի դեպքում 20 ցենտներ բերք՝ յուրաքանչյուր հեկտարից։

Քանի ոեն մեր գաշտերը չեն ազատվել գլխավոր թշնամությունախոտերից, ՀՍՍՌ բոլոր շրջաններում մաքուր ցեղերը (հատկապես սև ցեղը) հանդիսանալու են հացահատիկների կայուն և բարձր բերք ստանալու կարևոր ազրումիջոցառում։ Իսկ երբ խոտադաշտային ցանքաշրջանառությունների կիրառմամբ, բարձրանասոցիալիստական դաշտերի բերրիւթյունը, ոչնչացվեն մոլախոտերը։ Կնձկային ստրոկաւրայի և այլ միջոցների ստեղծմամբ դաշտերում կուտակվի անհրաժեշտ քանակությամբ շուրջ, մաքուր ցեղերն աստիճանաբար իրենց տեղը կզիշեն գրադված ցեղերին։

## ՕՐԴԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՃԵՇ

### ՍԻՍՏԵՄԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Դոկուման—Վիլյամսի կողմից մշակված և Սովետական կառավարության ու պարտիայի Կենտկոմի կողմից օրենքի ուժ ստացած խոտադաշտային երկրագործության մեջ պարարտացման սիստեմը կազմում է կարևորագույն օգակներից մեկը:

Ակադեմիկոս Վիլյամսի բնորոշումով՝ «պարարտացման սիստեմի խնդիրը հողում սննդի տարրերի անհրաժեշտ պաշարի վերանորոգման խնդիրն է, որովհետեւ յուրաքանչյուր բնըք նրանից խորած է բույսերի մոխրային և ազստական սննդի որոշ քանակներ խնդիրն է նաև բերդիության քիմիական պայմանների կարգավորումը». բացի դրանից նրա (պարարտացման սիստեմի) խնդիրն է՝ հողին տրվող սննդի լուծելի էլեմենտներն անմիջապես օրգանական նյութի ձևափոխելու Հակառակ գեպքում սննդի տարրերը ենթակա են կաթիլահեղումկ ջրի հոսանքով լվացվելու վտանգին»: Այնուհետև ավելացնում է՝ «պարզ է, որ պարարտացման սիստեմի խնդիրների մեջ է մանում նաև բույսերի սննդունդը համարավասար կերպով դյուրամարս ձեւի փոխելը»:

Պարարտացման միջոցով՝ մենք հանարավորություն ունենք կարգավորելու բույսերի սննդային ռեժիմը, լրացնելու սննդանյութերի այն պակասը, որ գոյություն ունի ավագ հողուած այնտեղ մշակվող գյուղատնտեսական կուլտուրաների պահանջներից ելնելով: Երբ բույսի աճեցողության ու զարգացման մյուս արտաքին գործուններն առկա են՝ անհրաժեշտ քանակությամբ ու փոխադարձ նպաստավոր հարաբերակցությամբ, ապա սննդային ռեժիմի կարգավորումը, որը կատարվում է օրգանական և հանքային պարարտանյութեր հողը մտցնելով, հզոր շափով նպաստում է բնըքի

բարձրացմանը և նրա որակի բարելավմանը։ Քանի որ բերքա-  
տվության աճին զուգընթաց մեծանում է նաև սննդանյութերի պա-  
հանջը, հասկանալի է, որ սոցիալիստական երկրագործության  
մեջ բերքատվության պրոցեսիվ աճին զուգընթաց մեծանում է  
նաև պարարտանյութերի պահանջը։ Հարցի այլպիսի դրվագը  
բխում է Վիլյամսի այն դրույթից, որ հողի բերքիության սահման  
գոյություն չունի, եթե միայն մենք ստեղծենք բույսի աճեցողու-  
թյան և զարգացման համար անհրաժեշտ բոլոր գործոնների միա-  
ժամանակ առկայություն։ Փարարտացման նշանակությունը մեր  
երկրագործության մեջ գործնականապես բազմիցս անվամ ապա-  
ցուցված է զյուզատնահետեւթյան առաջալորների հարուստ փոր-  
ձով։ Հայտնի է, որ բարձր և ունկորդացին բերք տվող կոլխոզնե-  
ռում և սովորզներում, մյուս ազգումիշոցառումների հետ միասին,  
ւայնորեն կիրառվել ու կիրառվում են նաև տեղական ու հանքա-  
յին պարարտանյութերը։

Այս բոլորին եթե ավելացնենք նաև միջուրինյան մեթոդը՝ ձեռք բերված բարձր բերքատու նոր սորտերի մշակությունը, հասկանալի կլինիկ, որ պարարտացման դերն ու նշանակությունը է՝ ավելի կրարձրանա խոտակաշտային երկրագործության մեջ, քան թե այդ եղել է մինչև այժմ։

Թէ՛ տեղական և լի՛ Հանքային պարարտանյութերը, որոնց  
հողն են մտցվում բերքատվության բարձրացման համար, պետք է  
օգտագործվեն կուլտուրական բույսի կողմից, այլապես զրանք,  
այդ լավագույն նյութերը, կարող են բերքի անկման պատճառ  
դառնալ: Որպեսզի պարարտանյութերի հետ հողը մտցրած աննպա-  
նյութերը մաքսիմալ շափով օգտագործվեն՝ բույսերի կողմից և  
վերածվեն բերքի, անհրաժեշտ է բույսը զնել կյանքի համար լա-  
վագույն պայմաններում: Նա պետք է ապահովված լինի ջրի ան-  
հրաժեշտ քանակությամբ, ջերմությամբ, լուսավորությամբ, օգով  
և այլ գործոններով: Այդ հնարավոր կլինի միայն ստրոկառաւ-  
թին հողում: Այդպիսի նպաստավոր պայմաններ են ստեղծվում  
միայն Դոկուչաևի, Կոստիչևի, Վիլյամսի կողմից մշակված երկրա-  
գործության խոտագաշտային սիստեմը լրիվ կինսագործելու պայ-  
մաններում: Սա է պատճառը, որ այժմ, սովորական ազգորիուն-  
գիական գիտության հաղթանակի պայմաններում, է՛լ ավելի է  
մեծանում առարտանութերի նշանակությունը մեր երկրագործ

ծության մեջ Բնության վերափոխման ստալինյան պլանի կին-սագործման հետ միասին ստեղծվում են պայմաններ՝ պարարտանութերն ավելի մեծ էֆեկտիվությամբ օգտագործելու համար Ալբայրմաններում, երբ հողը գաշտապաշտպան անտառաշերտերի պաշտպանության տակ կազմատվի երաշտի արհավիրքից, երբ բազմամյա խոտերի խառնորդի մշակման հետևանքով հողը ձեռք կրերի կայուն ստրուկտորա և զրա հետևանքով կավանան հողի շրային, ջերմային, օդային և սննդառության ռեժիմները, երբ այդ ֆոնի վրա կմշակվեն միջուրինյան բարձր բերքատու սորտերը և երբ բույսն ու նրա բերքը լին շափով կաշտպանովին զանազան հիվանդությունների և վնասատուների հարձակումներից, առաջականալի կլինի, թե ո՞րքան ավելի մեծ կլինի մեկ միավոր պարարտանյութից ստացվող էֆեկտը Այդպիսի լին կոմպլեքս կիրառելիս միայն հողն ընդունակ կլինի իր պոտենցիալ հնարավորությունների շափով բերք տալու, մինչդեռ անստրուկտաուր հողի վրա, ինչպես ասում է ակադեմիկոս Վիլյամսը, լավագույն դեպքում միայն բերքատվությունը հասնում է իր պոտենցիալ բերքատվության կեսին:

Հաշվի առնելով տեղական և հանքային պարարտանյութերի կարեռությունը՝ սոցիալիստական երկրագործության մեջ բերքատվությունը բարձրացնելու և կայուն բերք ստանալու գործում, բուշեկիների պարտիան և Սովիետական կառավարությունը միշտ էլ մեծ նշանակություն են տվել զրանց արտադրության ընդարձակմանը ու գյուղատնտեսության մեջ նրանց ճիշտ կիրառման ինդիրներին:

Մինչև Հայրենական Մեծ պատերազմը Միության մեջ տարեկան արտադրվում էր մոտ 3,5 միլ. տոննա հանքային պարարտանյութ, որով մեր երկիրը աշխարհում գրավում էր առաջին տեղերից մեկը: Հայրենական պատերազմից հաղթականորեն դուրս գալուց հետո էլ ավելի մեծ մասշտաբ ստացավ երկրագործության քիմիկացիան: ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության վիրականդնման ու զարգացման հնդամյա պլանի օրենքի համաձայն 1950 թ. մեզ մոտ արտադրվելու է շուրջ 5,5 միլ. տոննա հանքային պարարտանյութ: Մեր երկիրի հնարավորությունները հանքային պարարտանյութերի արտադրության բնակավառում անսպառ են և լայնորեն օգտագործվում են երկրագործության բերքատվու-

թշտն բարձրացման համար: Մեծ չափերի են հասնում նաև մեր հնարավորությունները տեղական պարարտանյութերի պաշտրների գծով, դրանց ճիշտ օգտագործումը հանքային պարարտանյութերի հետ միասին, երկրագործության խոտադաշտային սիստեմի պայմաններում, հզոր գործուն են դառնում բերքատվության պրոցեսիվ բարձրացման համար: Գյուղատնտեսության բնագավառում աշխատողներից պահանջվում է ճիշտ կերպով օգտագործել այդ անսպառ հնարավորությունները, ձգտել այն բանին, որ յուրաքանչյուր միավոր պարարտանյութից ստացվի ավելի բարձր էֆեկտ: Այդ հնարավոր է լրիվ շափով կիրառել միայն ստրուկտուրային հողի վրա, երկրագործության խոտադաշտային սիստեմում:

Որպեսզի պարարտանյութերը ճիշտ օգտագործվին և նրանցից բարձր էֆեկտ ստացվի անհրաժեշտ է նրանց կիրառել որոշ պլանով: Պարարտացման այդ պլանը պահանջում է՝ կենսագործի տնտեսական և կազմակերպչական համապատասխան միջոցառումներ, որոնք կապված են սոցիալիստական դաշտերի քիմիկացիայի հետ. այդ պլանն ամբողջությամբ վերցրած կոչվում է պարարտացման նիշտ սիստեմ:

Խոտագաշտային ցանքաշրջանառության մեջ պարարտացման պլանը կառուցելիս, կամ ինչպես առում են՝ պարարտացման սիստեմը մշակելիս, անհրաժեշտ է զեկավարվել մի քանի ընդհանուր և պարտադիր դրույթներով. դրանցից հիմնականներն են.

## 1. ՏԵՂԱԿԱՆ ԳԱՐԱՐԾԱՆՅՈՒԹԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱԲՑԵՐԸ

Տեղական պարարտանյութերի (գոմազը, տորֆ, մոխիր և ալին) ռեսուրսների ճիշտ հաշվառմը, այդ պարարտանյութերը պահանջված պայմաններում պահպանելը, նրանց՝ օգտագործման համար նախապատրաստելը, պարտադիր է յուրաքանչյուր տընտեսության համար:

Համկ(ր)Պ 18-րդ համագումարի որոշումներում այդ մասին ասված է «... հատուկ ուշադրություն դարձնել գոմազը և տեղական ուրիշ պարարտանյութերի ուսցինալ պահպանման և օգտագործման վրա»: Տեղական այն պարարտանյութերը, որոնք պարունակում են բույսերի սննդառության համար անհրաժեշտ բույր

է հեմմնանմբը, ինչպէս նաև օրդանական նյութեր՝ համարվում են լրիվ պարարտանյութեր. նրանք իրենց դրական ազդեցությամբ անփոխարինելի նյութեր են. տեղական պարարտանյութերը պետք է համարել հիմնական պարարտանյութեր մեր երկրագործության մեջ, պետք է հիշել, որ տեղական պարարտանյութերի կորուսը, կամ նրանց սխալ պահպանումը ու սխալ կիրառումը վերջին հաշվով նշանակում է շրջանառությունից դուրս հանել հոգի բերրիությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը, նաև քայլին սննդանյութերը — այն է ազուր, ֆոսֆորը, կալիումը և կիրը:

Պետք է հիշել նաև, որ մեր քիմիական արդյունաբերության կողմից գյուղատնտեսությանը արված միլիոնավոր տոննա հաճաքային պարարտանյութերի մեջ պարունակվող հանքային սննդանյութերի (աղոտի, ֆոսֆորի և կալիումի) մեծ մասն անցնում է գոմաղբին և մոխրին. Հետևաբար գոմաղբն ու մոխրը իրեն պարարտանյութ չողուազործելու դիպում, կամ սխալ օկտազործելուս, այդ նյութերը օդն են ցնդում, կամ առօտասարակ դուրս են գալիս երկրագործության շրջանառությունից. դա նշանակում է՝ անխնակերպով ոչնչացնել միլիոնավոր տոննա հանքային պարարտանյութերը. Ահա այս տեսակետից ել տեղական պարարտանյութերի անկորուստ և ճիշտ օգտագործումը հանդիսանալու է խոտագաշտային երկրագործության հիմնական օլակներից մեկը:

Հայտնի է, որ գոմաղբը որպեսզի վերածվի լիարժեք պարտանյութի, պետք է որոշ առտիճանի քայլայվի, հասունանալ Այդ պրոցեսը կատարվում է հատուկ կառուցված գոմաղբամբարներում, որտեղ գոմաղբը պնդացրած վիճակում որոշ տեսովությամբ պահպանվում է: Այդ ժամանակամիջոցում ածխաջրերը քայլայվում են, իսկ մյուս բարդ օրդանական միացությունները վերածվում են ավելի պարզ միացությունների ու նրանցում դանվոզ սընթանյութերը մատշելի դրության են վերածվում. այդ պայմաններում պահպած գոմաղբից սննդանյութերի (հատկապես աղոտի) կորուսը նվազագույնի է հասուսմ: Բայց այդ, երբ գոմաղբն ամրարում է հասունանում, ոչնչանում են նրանում դանվոզ մոլախտերի աերմերը և զրանով իսկ գոմաղբը դադարում է մոլախտերի արածման պատճառ դառնալուց:

ՍՄՌՄ-ի Մինիստրների Սովորի և Համեր(բ)Պ Կենակումի

1948 թ. Հոկտեմբերի 20-ի պատմական որոշման համաձայն մեր երկիրը բալոր սովորված մինչև 1951 թիվը, իսկ կոլխոզները մինչև 1953 թիվը պարտավոր են կառուցել գոմավամբարներ և աղբահնդումի հորեր: Տեղական պարարտանյութերը այդ հորերում նախապես պետք է հասունացվեն ու ապա միայն օգտակարժվեն պարարտացման համար:

Գոմազրի Եֆեկտիվ օգտագործման խնդիրներից է նաև նըրան հողի մեջ մտցնելու տեխնիկան. պետք է հիշել, որ ամենաշատ պրակի գոմազրը, որ պարարտված կլինի գոմաղբամբարում խնամքով պահպանելուց հետո, վաս պարարտանյութ կլինի, էջմիածնի շի տա տին դեպքում, երբ նա սխալ է օգտագործվել Ագրոնոմիական գիտությունը և գյուղատնտեսության առաջավորների հարուստ փորձը ցույց են տվել, որ հասունացած գոմազրը դաշտի վրա պետք է շաղ տալ հողը վարելու օրը և անմիջապես վարել հողի տակ: Գոմազրի օգտագործման ամենալատ եղանակն այն է, որը մինչև այժմ մեր շատ շրջաններում կիրառվում է, եթև գոմազրը փոքր կուցմերով երկար ժամանակ թողնվում է դաշտերում և հետո միայն, գարնան վարի ժամանակ, շտու է տրվում հողի տակ: Այդ պայմաններում գոմազրը չի հասունանում. նրա մեջ ծղուալ մնում է չքայլայված վիճակում. մոխրային սննդանյութերը լվացվում են կուցտից և սառած հողի մակերեսով հոսող ջրի հետ կուտակվում են հողի ցածր ունեֆներում, իսկ գոմազրի կազմության մեջ մտնող ամենարժեքավոր սննդանյութը՝ աղոտք գաղային դրությամբ օգն է ցնդում: Բնական է, որ այդ պայմաններում գոմազրի կիրառումը անարդյունավետ է դառնում:

Գոմազրի օգտագործման մյուս խնդիրը, որը զրկվում է իրուագութային ցանքաշրջանառության մեջ այն է, թե ցանքաշրջանառության որ գաշտը պարարտացնել գոմազրով: Ըստ ակադեմիկոս Վիլյամսի ցուցմունքի, ցեղադաշտ սննդով ցանքաշրջանառությունը ներում գոմազրի տեղը ցեղն է (աշնանացանից առաջ):

Ցեղադաշտ չունեցող ցանքաշրջանառություններում գոմազրը պետք է հողը մտցնել բաղմածյա խոտերից հետո 2-րդ կամ 3-րդ առարում:

Խոտադաշտային երկրագործության մեջ, ինչպես այդ ամենայն ճշտությամբ ցույց են տվել սոցիալիստական երկրագործու-

թյան առաջավորների և մի շաբթ գիտահետազոտական հիմնարկ՝ ների աշխատանքները, օրգանական և հանքային պարարտանյութերը միատեղ օգտագործելով, փոխադարձաբար բարձրանում է յուրաքանչյուրի էֆեկտը։ Այդ երկու խոսմբ պարարտանյութերը երկրագործության մեջ միմյանց շեն հակադրվում ինչպես նաև շեն փոխարինում, այլ ընդհակառակը միմյանց լրացնում էն և, ազդութեանիկայի մյուս գործոնների նպաստավոր պայմաններում, պահովում են բարձր ու ոեկորպային բերքի ստացումը։

Հանքային և օրգանական պարարտանյութերը միաժամանակ տալու եղանակով պարարտացումն առավելագույն էֆեկտիվություն է ստանում իհարկե, եթե հողն ստրոմետուրային է և նրա մեջ համապատասխան ոեակցիա կա։

Մրան պետք է ավելացնենք նաև զոմազբի՝ որպես հանքային սննդանյութերի մեծ քանակություն կրողի, կարևորությունը, Բավական է ասել, որ ՍՍՌՄ-ի միայն եվրոպական մասում ոեկտարված ընթացքով գոյացող զոմազբի կեսը, որը կոպիտ հաշվումներով կազմում է շուրջ  $300.000.000$  տոննա, պարունակում է իրեն մեջ այնքան հանքային սննդանյութ ( $N$ ,  $P_2O_5$ ,  $K_2O$ ), ինչքան կպարունակվի շուրջ  $18.000.000$  տոննա ստանդարտ հանքային պարարտանյութի մեջ։ Այդ նշանակում է, որ մեր երկրում գոյացող գոմազբի  $\frac{1}{4}$ -ը իր սննդանյութի պարունակությամբ եռապատիկ անգամ գերակշռում է 1950 թ. արտադրվելիք ամբողջ հանքային պարարտանյութերի արտադրանքին։ Այդ նշանակում է նաև, որ զոմազբի կորուսաների և սխալ կիրառման դեմ տարվող ամեն մի պայքարի միջոցառում, որը թեկուզ և  $1\%-ով$  կբարեկալի դրությունը, համազոր կլինի մի խոշոր քիմիական կոմբինատի գործարկմանը։ Ահա այս գիտակցությամբ էլ գյուղատնտեսության ասպարեզում աշխատողներն իրենց առաջ պետք է խնդիր դնեն՝ պայքարել տեղական պարարտանյութերի ճիշտ կուտակման, պահպանման և օգտագործման համար։

Խուտադաշտային ցանքաշրջանառության մեջ պարարտացման սիստեմի խնդիրներից հետեւալն այն է՝ որ այդ սիստեմը կառուցվի ելնելով նոր պայմաններից, Վիլյամսի կողմից մշակված հողի մշակության սիստեմից՝ գիտենալով որ այդ սիստեմի լրիվ կիրառումը միայն կապահովի պարարտացման բարձր էֆեկտիվությունը։

Պարարտացման սիստեմի կապակցությամբ պահանջվում է ավելի սիստեմատիկ պայքար տանել մոլախոտերի դեմ, այլապես նրանք կարող են այնքան զարգանալ, որ պատճառ կդանանք բերքի մեծ կորուստի:

Առջապարակ պարարտացման սիստեմը կառուցելիս պետք է հաշվի առնել ազրոտեխնիկական դրսենների կոմպլեքսը և երրեմն պարարտացման կապակցությամբ փոփոխել նաև ագրոմիջոցառումները, դա ավելի շուտ վերաբերում է մեծ ուղղաներով պարարտանյութեր կիրառելիս ջրման հարցը լուծելու, քաղցանի վարելաշերտի խորության, ցանքի խորության և այլ մոմենտներին:

Պարարտացման սիստեմը կառուցելիս խիստ կարևոր է միանց հետ ճիշտ համադրել պարարտանյութերը կիրառելու տարրեր եղանակները, այսինքն՝ հիմնական պարարտացումը ցանքից առաջ, շարային պարարտացումը ցանքի հետ, սնուցումը ցանքից հետո, աճելիս:

Հիմնական պարարտացումը նպատակ ունի հողի ամբողջ վարելաշերտը հարստացնել անհրաժեշտ սննդանյութերով, որը պետք է մշակվող կուլտուրայի բերքն ապահովելու համար, այդ կատարելիս պետք է հաշվի առնել հողի նախացանքային մշակության ամրող կոմպլեքսը, մշակվող կուլտուրայի բիոլոգիական առանձնահատկությունները և նախառեսված բերքի մակարդակը: Հիմնական պարարտացումը, որը կատարվում է տեղական և հանքային պարարտանյութերով, չի կարող փոխարինվել պարարտացման մյուս եղանակներով. ուրիշ խոսքով չի կարելի հրաժարվել հիմնական պարարտացումից և հույսը զնել սնուցման կամ շարային պարարտացման էֆեկտի վրա: Այդ գլխավորաբար այն պատճառով, որ պարարտանյութերի մեծագույն մասը (գոյմաղերը, մոխիրը, տորֆը, ֆոսֆորական և կալիական բուլոր պարարտանյութերը, ամոնյակային աղերը, կրային պարարտանյութերը, զիսպը և այլն) ինքնահոսով, կամ շրի ազդեցության տակ չեն տեղաշարժվում հողի մեջ, հետեւաբար այդ նյութերը, որպեսզի բույսի արմատներին մատչելի շերտում ունինալ, պետք է մեխանիկորեն, հողը շուր տալու միջոցով մտցնել հողը՝ վարելաշերտի ամրող խորությամբ: Այլապէս, այդ պարարտանյութերը փոցիսի տակ, կամ կուլտիվատորով և կամ հողուրագի օգնու-

Քյամբ հողի հետ խառնելիս կմնան հողի ամենավերին շերտում և չեն օգտագործվի բույսի կողմից: Աւեմն հիմնական պարարտացումը անհրաժեշտ է բույսը մինչև լրիվ հասունացումը առաջ սննդով ապահովելու համար:

Եաթային պարարտացումը պարարտացման այն ձևն է, երբ պարարտանյութերը հողն են մացվում սերմի հետ միաժամանակ՝ սովորաբար հատում շարքացանների օգնությամբ. այդ պարարտացումը կատարվում է ցանքսի շարքին զուղահեռ կամ կողքից և կամ ներքեւից որոշ հեռավորության վրա: Եարացին պարարտացման նշանակությունը այն է, որ բույսի զարգացման ամենաառաջին ստադիոններում (օրինակ ծեխուց մինչև թփակալումը) ապահովել նրան մատչելի սննդանյութերով: Այդ անհրաժեշտ է 2 պատճառով, նախ այն պատճառով, որ շատ բույսեր (հացարուցիւրը, բամբակը, ճակնդիպը և այլն) սննդանյութերի մեջ պահանջ են զգում հենց այդ ստագիաներում և ապա այն պատճառով, որ այդ ստագիայում բույսի արմատական սիստեմը զեսես զարգացած չէ, խորը զնացած չէ, որպեսզի կարողանա օգտագործել հողի սննդանյութերի սրաւենցիալ հնարավորությունները, կամ հիմնական պարարտացման կարույր հողին արված և խորոշական վրա վերցրած սննդանյութերը:

Ահա այդ իսկ պատճառով շարացին պարարտացումը անհրաժեշտ է, որպիսին բխում է այն ճիշտ դրույթից, որն առաջ է քաջում վիզամում, թե պետք է պարարտացնել բույսը և ոչ թե հողը: Եարացին պարարտացման առանձնահատկությունը և տնտեսական էֆեկտիվությունը այն է, որ այդ ճանապարհով շատ ավելի տնտեսաբար, խնայողաբար է օգտագործվում պարարտանյութը. հաճախ 5—10 անգամ ավելի քիչ պարարտացմանը (հատկապես հատիկավորված սուպերֆոսֆատ) կիրառելով շարացին պարարտացման կարգով կարելի է սոտանալ նույն էֆեկտը, ինչ որ ստացվում է հիմնական պարարտացման կարգով լրիվ նորմա կիրառելիս: Այդ տեսակի հայր պարարտացման շարացին ձեր մեր երկրագործության մեջ պետք է լայն կիրառություն գտնի:

Սննդումը պարարտացման նոր ձև է, որը մուտք է գործել երկրագործության մեջ բարձր լրերի վարդեաների՝ մեր գյուղատնտ

տեսության տռաջավրըների կողմից: Սնուցումը պարարտացման արև ձևն է, որը հոգն է մացված բույսի աճեցողաթիյան ընթացքում, նրան օժանդակ, լրացուցիչ սնուցն տալու նպատակով: Սնուցման կարգով հոգը մացրած պարարտանցութը պետք է օգտագործվի բույսի կողմից իր զարգացման միջին ստագիաներում (օրինակ հացարուցների թփակալումից մինչեւ խողովակալումը, բամբակի կոկոնակալումից մինչեւ ծաղկման սկիզբը և այլն): Քանի որ սնուցման ժամանակ բույսի արմատները արդեն բավականին խորը են՝ լինում (երբեմն մինչեւ 10 սմ) և արագությամբ խորանում են, ուստի սնուցման նյութը, պետք է հարկավոր խորությամբ տալ Սնուցման նյութը հողի վերին շերտում թողնելը ոչ մի գրական արդյունք չի կարող տալ, որովհետեւ հույսը չի կարելի դնել շրի լաւծիչ հատկության վրա, և կարծել թե սնուցման նյութը ջրի հասնքով կհասնի բույսի արմատներին: Այդպիսի հատկությունն ունի մեր պարարտանցութերից միայն մեկը՝ ամսնիում հիանալու պահանջման համար՝ չափ միայն, իսկ մյուս բոլոր պարարտանցութերը կլանվում են հողի կողմից, և կամ բոլորովին չեն ներթափանցում ավելի խորը շերտերը (օրինակ՝ սուսերֆոսիատ), ետք ներթափանցում են ձևափոխվելուց հետո (օրինակ՝ ամսնիակացին աղերի նիստրիֆիկացիա), որը կպահանջի 10—15 օր ժամանակ, որի պատճառով սնուցման էֆեկտը կնվազի: Այդ է պատճառը, որ մեր ռայտներում սնուցման համար օգտագործում են զբարեցած բացառաբար ամսնիումի նիստրալը. այդպիսին վիճակում միայն հանձնարարվում է ամսնիումի սուլֆատը:

Սնուցման ժամկետի և հաճախակիության հարցը նույնակախիստ կարեոր է պարարտացման սիստեմը մշակելիս. պետք է ասել, որ սնուցումը այնքան ավելի բարձր էֆեկտ է տալիս, որքան ավելի վաղ ժամկետում է կատարվում այն (բույսի զարգացման տեսակետից վաղ ստագիայում): Որքան ուշացվում է սնուցումը, այնքան նվազում է նրա էֆեկտը: Բայց այդ հարցը նույնական հարարեական իմաստով պետք է հասկանալ: Եթե մենք հնարավորություն ունենանք սնուցման նյութը ամեն անգամ պահանջված խորությամբ մացնել հողի մեջ՝ հասցնելով այն բույսի

գործող արմատների հորիզոնին, առաջ լավ էֆեկտ միշտ էլ կը ստացվի. բայց քանի որ սնուցման աշխատանքները մեղ մոտ մեծ ժամանմբ ձեռքով են կատարվում և հողի տակ է վերցվում թարուցնկով, հասկանալի է, որ նրանից ստացվող էֆեկտը գնալով նվազում է: Սնուցման հաճախակիության հարցը կապված է սննդանյութի այն ընդհանուր քանակի հետ, որ նախատեսված է սնուցման կարգով հողի մեջ մտցնել: Եթե ընդունենք, որ բնուրագանչուր սնուցման ժամանակ մեկ հեկտարին պետք է տակ դուր 30 կգ սննդանյութ, ապա ընդհանուր քանակը բաժանելով այդ թվի վրա, կստացվի սնուցման թիվը: Բայց, ենիկով բաղմաթիվ փորձերից, դիտողություններից և առ այսօր մեր ունեցած տեխնիկական հնարավորություններից (Հայաստանում) պետք է շտարվել սնուցումները շատ կրկնելով: 1 կամ 2 սնուցումը բավական է, այն էլ ոչ ուշացումով և հնարավորին չափ խորը մտցնելու պայմանութիւնը Կարեւոր է դիտենալ առհասարակ սնուցման բուն նշանակությունը: Սնուցումը առաջադրուիլ և կիրառվել է այն տեսական դատողությունների հիման վրա (Հետո պրակտիկայում ստուգվելուց հետո), որ բարձր, ոեկորդային բերք ստանալու համար անհրաժեշտ է լինում մեծ զողացով տեղական և հանքային պարարտանյութ մացնել հողը. երբեմն այդ քանակը մեկ հեկտարի համար (հանք, պարարտանյութ) հասնում է տոննաների, նախկին ցենտաներների փոխարեն. այդքան հանքային պարարտանյութը միանվագ հողը մտցնելու դեպքում հողի լուծուցիւթիւն կոնցենտրացիան այնքան կբարձրանա, որ մահացու միջավայր կդառնա նոր ծլող բույսի համար: Ուրեմն լավագույն պարարտանյութն է ֆեկտիվ է իր որոշ քանակի դեպքում. այդ քանակի սահմանն անցնելիս նա դառնում է բացառական զործոն: Որպեսզի նման զրություն շատեղծվի, բարձր բերքի վարովեաները առաջարկեցին պարարտանյութերի հիմնական մասը հողը մտցնել ցանքսից առաջ, իսկ մյուս մասը աստիճանաբար՝ բույսին, նրա զարգացման ընթացքում, որի հետեւանքով հողի լուծուցիւթիւն կոնցենտրացիան մեծ փոփոխության շի ննթարկվում, իսկ բույսը աստիճանաբար վարժվում, դաստիարակվում է դահղաղորեն աճող կոնցենտրացիաներին:

Մնուցումը շպետք է հակազրել և մի կարող փոխարինել Հիմնական և շաբաշին պարարտացմանը՝ ընդհակառակը, նրանց հետ միասին կիրառելով՝ այնինի լրիվ է դառնում՝ պարարտացման սիստեմը:

Միայն այն մասնակի գեպքերում, երբ ինչ-ինչ պատճառներով հիմնական պարարտացմանը չի կատարվել, պետք է սնուցման կարկալով որոշ փոխհատուցում անել՝ պահպանելով պահանջված պայմանները:

Պարարտացման սիստեմը մշակելիս պետք է հաշվի առնել պարարտացվող հողի հատկությունները, առանձնապես պետք է ուշադրություն դարձնել հողում սննդանյութերի ընդհանուր պաշարի, ինչպես նաև այդ սննդանյութերի մատուցելիության աստիճանի վրա, երբեմն մեծ նշանակություն պետք է տալ հողի կլանով հատկություններին՝ հողի թթվության տեսակներին ու աստիճանին, հողի բուժերականությանը, օրգանական նյութերի քանակին, բիուոգիական պրոցեսներին և այլն:

Օրինակ, հայտնի է, որ եթե հողը թթու հատկություն ունի, ապա որպես հիմնական միջոցառում ամենից առաջ պետք է այդ հողը պարարտացնել կրային պարարտանյութերով՝ նրա թթվությունը շեղոքացնելու նպատակով: Այդպիսի հողը պարարտացնելիս սովորաբար պետք է խուսափել այնպիսի պարարտանյութերից, որոնք, իրենց ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետևանքով, կարող են հողն ավելի թթվեցնել: Թթու հողերը ֆուֆորական պարարտանյութերով պարարտացնելիս պետք է առաջին հերթին օգտագործել ֆուֆորիտի ալյուրը, որը թթու հողում լուծելի դրության է վերածվում:

Ընդհակառակը, շեղոք կամ կարբոնատացյլն հողերում օգտակար է թթու հատկության պարարտանյութերի կիրառումը, իսկ ֆուֆորական պարարտանյութերից առավելությունը պետք է տալ ամենադյուրակույթ պարարտանյութին — սուպերֆուֆատին:

Սևահողերը պարարտացնելիս պետք է նկատի ունենալ, որ նրանք սովորաբար հարուստ են լինամ օրգանական նյութերով (հումուս) և երբեմն նաև ազոտով, մինչդեռ ֆուֆորական պարարտանյութերի պահանջը մեծ է լինում:

Յամիաստամային-շականակակույն ու պորշ Հովերը պետք է  
ամենից առաջ հարստացնել օրդանական նյութերով՝ նրանց  
ստրուկտորայնություն տալու նպատակով։ այնուհետև կարիք է  
լինում պարարտացնել ազոտական ու ապա նաև ֆոսֆորական  
պարարտանյութերով։ ինչ վերաբերում է կալիական պարար-  
տանյութեր կիրառելուն, ապա այս հովերում այնքան շատ են  
կալիումի ընդհանուր և էֆեկտիվ պաշարները, որ շատ անզամ ա-  
ժելորդ է դառնում կալիական պարարտանյութեր կիրառելը։

---

## ՏԵՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐՎԱԾ, ԲԱՐՁՐ ԲԵՐՔ ՏՎՈՒ ՍՈՐՏԵՐԻ ԸՆՏՐՎԱԾ ՍԵՐՄՈՎ ՑԱՆՔ ԿԱՏԱՐԵԼԸ

Երկրագործության խոտարաշտացին սիստեմի կիրառմամբ հնարավոր է դառնում կարճ ժամանակամիջոցում լուծելու հողի բերրիության բարձրացման և անասնական հողությունը կայուն կերպ բաղայով առաջնավելու խնդիրները։ Սակայն այդ միջոցառումով ամբողջապես լուծել բարձր բերք ստանալու խնդիրը հնարավոր չէ, եթե սորտ-ռայոնացման ոկզրունքների հիման վրա, յուրաքանչյուր շրջանում, կոլխոզում, շտեղծվեն տվյալ հողակիցական պայմաններում աճեցրած լավ որակի և բերատու սորտերը ֆրանով պետք է բացարել այն հանգամանքը, որ ուրատիան և սովետական կառավարությունը միշտ էլ խնդիր են դնում զարկ տալու սեկելցիոն-սերմնարուծական աշխատանքներին և պահանջում են բարեկավել կոլխոզների ու սովխոզների սերմնաբուծության գործը։ Փարտիայի և սովետական կառավարության առաջարանքը կատարելու համար անհրաժեշտ է միշտրինյան ազրություղիության ուժունքի հիման վրա ոչնչացնող հարված տալ վեհանական-մորգանիստական կեղծ գիտական, իդեալիստական մնացորդներին և սովետական առաջավոր գյուղատնտեսական գիտության ծավալմամբ բոլոր կոլխոզներում և սովխոզներում ըստեղծել բերքատու, վնասատուների, հիվանդությունների և անբարենպաստ պայմանների նկատմամբ դիմացկուն սորտեր։

ՀԱՅԱՍՏԱՆԻԱՅԻՆ ԿԱԽԵՏՈՒԹՅՈՒՆԵՐ

Հետալարազմյան ժամանակաշրջանում հասուկ ուշադրություն է դարձվում հացահատիկային կուլտուրաների սորտային ցանքների ընդուրակման վրա։ ՀամԿ(ր)Պ Կենտկոմի 1947 թվյ

Փետրվարյան պլենումի որոշմամբ ցուցմունք է տրված՝ նախապարմաններ ստեղծել 1949 թվին բոլոր ռեսպուբլիկաներում, հրկրամատներում, մարզերում և շրջաններում Հայահատիկային կուլտուրաների բարձրորակ, ռայոնացված սորտերով ցանք կտտարելու ժամին: Այդ պատմական որոշման կենսագործմամբ անցուալ տարի կոլլագները և սովորողները 1947 թվի Համեմատոթյամբ 16 միլիոն հեկտարով ավելացրին սորտային ցանքերի տարածությունը: Սորտային ցանքերի ընդարձակման քննակալառում մեծ էին Հաջողությունները աշնանացան ցորենի և տարեկանի ուղղությամբ: ՍՍՌՄ-ի մի շարք ռեսպուբլիկաներ, մարզեր և շրջաններ, այդ թվում նաև Հայկական ՍՍՌ-ն, 1948 թվին աշնանացան ցորենի սորտային ցանքերի տարածությամբ Հասան մինչպատերազման մակարդակին, իսկ որոշ շրջաններում նույնիսկ գերազանցեցին այն: Սորտային ցանքերի ընդարձակման տեսակետից զրությունն անբավարար է գարնանացան Հայահատիկների բնագավառում: Չնայած, որ նախորդ տարում գարնանացան հայահատիկների սորտային ցանքերը զգալի չափով ընդարձակվեցին, բայց նրանց տեսակարգար կշիռը մինչպատերազմյանի համեմատությամբ հետ է:

Գարնանացան Հայահատիկների, Հատկանիկ գարնանացան կարծը ցորենների սորտերի ստեղծման գործը լուրջ է զբլում նաև այն պատճառով, որ նրանք հանդիսանում են ցանքաշրջանառությունների ճմուտի լավագույն և անփոխարինելի կուլտուրա: Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի ուսմունքի համաձայն, ցանքաշրջանառության մեջ բազմամյա խոտերից հետո պետք է ցանել միայն գարնանացան ցորեններ (Հատկանիկ գարնանացան կարծը ցորեն), որովհետեւ միայն այդ զեպքումն է հնարավոր հողում կուտակումը և դիմացկումն մանր կնձկային ստրուկտորայի ստեղծումը: Բացի այդ, միայն այդ ցորեններն են ուցիունակ օդուագործում ճմուտում կուտակված գերազատի պաշարը: Այս ճոմենարք արժանի է հատուկ ուշադրության, քանի որ խոտագաշտացին ցանքաշրջանառությունների իրացումը և ճմուտի ուցիունակ օդուագործումը անհնարին է առանց գարնանացան հայահատիկների (Հատկանիկ գարնանացան ցորենների) բարձրորակ և բերքատու սորտեր ունենալու նթե հաջվի առնենք: Նաև այն, որ 1949 թվին պետք է անցնել Հայահատիկային կուլտուրաների

Համատարած սորտային ցանքերի, ապա հասկանալի կլինի սեւ էկցիայի-սերմնաբուժյան առաջ դրված լուրջ ու պատասխանատառ աշխատանքները:

Բարձրորակ սորտային սերմերով ապահովելու հիմնական միջոցառումներից մեկն այն է, որ գլուզատնտեսական օբյանները ճիշտ հաշվի առնեն յուրաքանչյուր շրջանի, կոլխոզի, բարձրորակ սերմերի ողաշաբթ, զրա հիման վրա կազմովերպեն միջըշանացին և միջկոլխոզային փոխանակման գործը և ճիշտ օգտագործեն պետական սորտային սերմացվի ռեսուրսները: Այս մոմենտը շափականց կարեոր է ընդհանրապես և հատկապես մեր ռեսպուբեկայի համար, որովհետեւ ռեսպուբեկայի մի շարք շրջաններ և կոլխոզներ խիստ կարիք ունեն սորտային սերմացուի, իսկ մյուսների մոտ սորտային սերմացու պահանջվածից շատ կա:

Սորտային բարձրորակ սերմեր ստեղծելու երկրորդ ուղին, ուստաբրության մեջ միջուրինյան ազգորինուոգիայի ուսմունքի հիման վրա նոր սորտերի ստեղծումն է և նրանց արագ ներմուծումը գյուղատնտեսության արտադրության մեջ:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն իր բազմաթիվ աշխատություններում զարդացնելով միջուրինյան ազգորինուոգիական ուսմունքը սեւեկցիայի և սերմնաբուժության բնագավառում, առաջադրում է մի շարք տեսական և պրակտիկ միջոցներ: Նրա կողմից մշակվել են սեւեկցիոն աշխատանքների հիմնական սկզբոնքները, որի դորձադրմամբ հնարավոր է դառնում կարճ ժամանակամիջոցում ստունալ բարձրորակ սորտեր: Այդ միջոցառումների շարքին են պատկանում՝ բույսերի ստագիտական տեսության, ազգումիջոցառումների և արտաքին այլ կոմպլեքս պայմանների հիման վրա բույսերի բնույթի վերափոխումը և հացահատիկային կուտուրաների ներսորտային խաշաձևման ու այլ մեթոդների գործադրմամբ նոր սորտերի ստացումը, յարովիզացիայի, սերմերի ծլունակության բարձրացման և այլ միջոցառումներով բարձրորակ սերմերի ստացումը և ուղիղները:

Վերջին տարիներում կոլխոզներում և սովխոզներում կատարված ուսումնասիրությունները ու դրված փորձերը ցուց տվեցին, որ ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի կողմից առաջադրված մեթոդով աշխատելու դեպքում հնարավոր է դառնում 2—3—4 անգամ ավելացնել բարձրորակ ցանքերի տարածությունը: Խնդիրը կայանում

է նրանում, որ այդ առաջավոր ուսմունքի կենսադորմամբ յուրաքանչյուր շրջանում և կոլխոզում ստեղծվեն բնական անբարենըպատ պայմանների, հիվանդությունների և վնասատունների նկատմամբ գիմացկուն, բարձրորակ և բերքատու սորտեր: Անցյալ տարիների փորձը ցուց է տալիս, որ այնտեղ, որ պյուղատընտեսության օրդանները լուրջ կերպով իրենց ձեռքն են վերցնում սերմնարուծության գործը (Կորան, Ռվերախնա, Հյուսիսային Կովկաս, մեր սեսպուրլիկայի նոր Բայազետի, Բաստրդիշարի շրջանները և ուրիշները), հնարավոր է դառնում բարձրորակ սորտերի բուծումն ու տարածումը և կարճ ժամանակամիջոցում լուծվում է հացահատիկային և այլ կուտուրաների սորտ-ուսունացման խնդիրը:

1948 թվի սորտ-ուսունացմամբ մեր սեսպուրլիկայում մշակվեցին հնեւելյալ աշնանացան և գարնանացան հացահատիկային կուտուրաներին պատկանող սորտերը:

### Սշնանացան ցորեներից Հայաստանում մշակվում է հնեւելյալները

«Զարդար» (Համարանիկում): Աշնանացան ցորենի տեկուկան սորտ է: Հիմնականում մշակվում է բամբակացան շրջանների կոլխոզներում: Լավ է դիմանում ձմռան ցրտերին: Չի թափվում: Ժանդապիմացկունությունը միջակ է: Ուժեղ քամիների առկայության դեպքում պառկում է միջակ շափով: Թփակալուում է ուժեղ: Երշանացված է, որպես հիմնական սորտ Արարատյան դաշտավայրի ցածրադիր ջրովի գոտու համար: Մերմերի բացարձակ կշիռը տատանվում է 35—40 գրամի միջին, բարձր բերքատու սորտ է: Ուշահաս է, բարձր բերք է տալիս, երբ ցանքը կատարվում է սեպտեմբերի վերջից մինչև նոյեմբերի առաջին հնդօրյունը:

«Սպիտակահաս» (Գրեկում): Տեղական սորտ է: Մշակվում է նախալեռնային գոտում: Թիւ շափով նաև եղմիածնի շրջանի բարձրադիր կոլխոզներում: Հայաստանի հնադույն սորտերից է: Զմռադիմացկուն է: Սորտն աշքի է ընկնում շոբագիմացկունությամբ, հատիկի բարձր բացարձակ կշռով և երաշտադիմացկունությամբ: Հողային պայմանների նկատմամբ պահանջկուտ չէ, ժանդապիմացկունությունը միջակ է, թափվող չէ, ուշահաս է, պառկելու

միջակ հակոս ունի, չոր նախալեռնային շրջաններում տալիս է բարձր բերք: Շրջանացված է, որպես Հիմնական սորտ ռեսպուբ- լիկայի նախալեռնային գոտու համար:

«Արմիր սլիմատ» (Յեղբուզինեում): Աշնանացան ցորենի տեղական սորտ է, մինչև շրջանացումը մշակվում էր Սիսիանի շրջանում, սորտը չի թափվում: Խոնավ շրջաններում քիչ պատկամ է: ցրտադիմացկունությունը միջակից բարձր է, զարնանային ան- բարենպատ պայմաններում ավելի դիմացիում է, քան Ռևրախն- կան, խիստ խոնավ տարիններին թույլ վարակվում է ժանդով, մրիկից տուժում է թույլ շափով: Թփակալումը միջակ է, հատիկի բացարձակ կշիռը 35—40 գրամ է: Շրջանացված է, որպես Հիմնա- կան սորտ Ապարանի, Ախուրյանի, Սիսիանի, Արթիկի շրջանների համար, Ղուկասյանի շրջանի ցածրադիր և Թալինի ու Ախուրյա- նի շրջանների բարձրագիր գոտու համար, թույլատրելի է նաև Մի- կոյանի շրջանի բարձրագիր գոտու համար:

«Ալիի-Աղաջ» (Յեղբուզինեում): Աշնանացան ցորենի տեղա- կան սորտ է: Մշակվում է Շամշադինի, Ստեփանավանի, Կրաս- նոսելսկու, Կալինինոյի, Կիրովականի շրջաններում: Սնկային ճիշճանդությունների նկատմամբ միջակ դիմացկունություն ունի Զմանդիմացկունությունը լավ է: Լավ է դիմանում նաև գարնան այլ ամբարձենպատ պայմաններին: Բերքատու սորտ է, սոկայն չորադիմացկունությունը մեծ չէ, ուշահաս է, թափվում է թույլ շա- փով, չի պատկում, թփակալումը միջակից բարձր է, հատիկինների բացարձակ կշիռը 32—42 գրամ է: Շրջանացված է, որպես թույլա- տրելի սոլոտ Ստեփանավանի, Կալինինոյի, Կիրովականի և Ալավեր- դու շրջանների Հեռատափաստանային գոտու համար:

«Ռվահինկա» (Երիարոսակերմում): Աշնանացան ցորենի սե- լիցիցին սորտ է: Մշակվում է ռեսպուբլիկայի լեռնային և բարձր լեռնալին շրջաններում, թափվող է, ներմուծված է Հայաստան 1927 թվից: Վարակվում է ժանդի բոլոր տեսակներով, տոթից տուժում է ուժեղ, պատկամ է թույլ շափով, թփակալում է մի- ջակ, հատիկի բացարձակ կշիռը 30—35 գրամ է, բերքատու սորտ է ինչպես ջրովի, այնպես էլ անջրդի պայմաններում: Հայ- կական ՍՍՌ-ում իր գրաված տարածությամբ առաջմ առաջին տեղն է բանում: Շրջանացված է, որպես թույլատրելի սորտ բո- լոր այն շրջանների համար, որտեղ մշակվում է:

Բացի վերը նկարագրված ուսցոնացրած աշնանացան ցորենների սորտերից ռեսպոբլիկայում մշակվում են Հեռանկարացին սորտեր, որոնք երաշխիք ունեն պատշաճ տեղ գրավելու մոտիկ ապագայում։ Այդ սորտերի թվին են պատկանում։

«Արմյանկա» (Յերրովինենում 8): Սորտի օրիգինալուրը Կյուղատընտեսական ինստիտուտի գոցենա Բ. Մ. Գարասեֆերյանն է։ Աշնանացան սելեկցիոն սորտ է, ստացվել է անհատական ընտրությամբ 1937 թվին։ Անի բարձր ձմռադիմացկունություն, չի պառկում, չի թափվում։ Պեղին և ցողունացին ժանդից չի տուժում։ Թփակալում է լավ, միջահաս է, բարձր բերքատու սորտ է, սերմերի բացարձակ կշիռը տատանվում է 39—42 դրամի միջև։ Առաջմմ մշակվում է Ստեփանավանի և Կալինինոյի 2րշաններում, որտեղ գրավում է 2.500 հեկտար տարածություն։

«Արտաշատի 42»: Սորտն ստացվել է անհատական ընտրության մեթոդով 1939 թվին, ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գենետիկայի ինստիտուտի աշխատակիցների կողմից։ Սելեկցիոն սորտ է, ունի միջակ չորադիմացկունություն, միջակ ցրտադիմացկունություն, միջահաս է, պեղին, զորշ և ցողունացին ժանդից ու մթիկից տուժում է թուզ շափով։ Թփակալում է ուժեղ, չի պառկում, չի թափվում, հատիկների բացարձակ կշիռը տատանվում է 40—50 դրամի միջև։ Բարձր բերքատու սորտ է։ Հեռանկարացին սորտ է Արտաշատի դաշտավայրի 2րշանների համար, ապագայում փոխարինելու է Զարդար սորտին։

#### Գարնանացան ցորեններից մշակվում և Տ

«Գալզալո» (Գելիքի): Գարնանացան ցորենի տեղական սորտ է։ Ցանվում է նաև, որպես աշնանացան և որոշ դեպքերում ձմեռնամուտին (գունդուրմա), խոնավ պայմաններում վնասվում է ժանդից։ Քիչ թափվող է, միջակ բերքատու է։ Շրջանացված է, որպես թուզլատրելի սորտ Ախուրյանի, Արթիկի, Աղինի և Ամասիայի շրջանների ցածրադիր գոտու, Թալինի շրջանի բարձրադիր գոտու, ուսպուրիկայի նախալեռնացին կիսանապատային գոտու և Արտաշատի դաշտավայրի ցածրադիր գոտու համար։

«Էրինացենում» (Կոնդիկ, բուրբաշ): Գարնանացան ցորենի տեղական սորտ է, բերքատու է, սնկացին հիվանդությունների

նկատմամբ միջակ դիմացկուն է: Շրջանացված է որպես Հիմնական սույն Սիսիանի, Մարտունու, Բասարգելարի շրջանների համար և որպես թուլաւարելի սորո՝ Ախուրյանի, Զուկայանի, Արթիկի, Աղինի, Ամասիայի շրջանների ցածրագիր գոտու, Բալինի, Ախտայի, Կոտայքի շրջանների բարձրագիր գոտիների և Ազարանի շրջանի համար:

### Գարենանացան գարիներից մօակըլում են

«Խախիչևան Գանի»: Գարնանացան գարու սելեկցիոն սորո է, որոշ պայմաններում ցանվում է նաև որպես աշնանացան: Երաշտադիմացկունությունը միջակ է, չլ թափվում, փոշեմբիկով վարակվում է թուլ շափով. բերքատու է: Շրջանացված է, որպես Հիմնական սորո ցածրագիր լենատափառանային գոտու և նախալեռնադին կիսանապատային դուռը ջրովի հողերի համար:

«Անինականի 61—51»: Գարնանացան գարու սելեկցիոն սորո է, սնկացին ջիվանդությունների նկատմամբ դիմացկուն է, բերքատու սորո է: Շրջանացված է որպես Հիմնական սորո Սիսիանի շրջանի համար (առանց Բաղարշայի հնիվաշրջանի):

Հացահատիկային կուլտուրաների սորո-ուայոնացման բնուգավառում Հիմնական խնդիրն այն է, որ կարճ ժամանակամիջուցում բոլոր կոլլուգներում ստեղծվեն լավագույն բերքատու սորուեր, իսկ ամենաՀիմնական խնդիրն է՝ կարճ ժամանակամիջոցում սելեկցիոն ճանապարհով ստեղծել գարնանացան ցորեններ (հատկապես կարծր) և լուծել ուսուպուրիկայի սորո-ուայոնացման խընդիրները:

### ԸՆԴՄՍՄՑԱՅ. ԽՈՏՍՅԹՈՒՅՍԵՐ

Խոտակաշտային ցանքաշրջանառությունների անցկացումը և իրացումը Հրամայողական պահանջ է դնում հատուկ ուշագրություն դարձնել բարձամշտա խոտաբույսերի սելեկցիայի և սերմնարությունների բարձրագույն կործին: Բազմամյա խոտերի սերմերի մեծ քանակի պահանջին գուգընթաց հատուկ աշխատանք պետք է տանել բարձրորակ սորտ-պոպուլյացիաներ ստեղծելու ուղղությամբ: Բազմամյա խոտաբույսերի սերմացուի որակական ցանքանիշների դրական հատկանիշներից են՝ նրանց երաշտագիմաց-

կունությունը, ցրտագիմացկունությունը, բազմամյա լինելը, բերքատվությունը և հատկապես արմատային մասսայի կուտակման ընդունակությունը: Մինչև այժմ սորտային սերմացու ստեղծելու ուղղությամբ տարվող աշխատանքները միանդամայն անբավարար են: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ բազմամյա խոտերի սելեկցիոն և սերմնաբուծական հարցերի լուծումը դրված է եղել սխալ տեսական հիմքերի վրա: Բազմամյա խոտերի սելեկցիայի և սերմնաբուծության գործը կազմակերպելիս այն նույնացվում է միամյա հացահատիկների, տեխնիկական և բանշարանոցային կուտարանների մեջ մասը ճպառում է արհետական բնաբության և վատ բույսերի խոտանման միջոցով լավացնել պոպուլյացիայի կազմը, նրան գարձնել ավելի միատարր և ստանալ նոր սորտ: Այդ նպատակով սելեկցիոններները, որպես սելեկցիայի մատերիալ վերցնում են լավագույն, փորձարկման մեջ ստուգված հնագույն կամ բնական խոտերի պոպուլյացիա: Բազմամյա տարիների փորձը ցույց է տալիս, որ խոտաբույսերի սելեկցիոնների նման մոտեցմամբ հարցի լուծումը սխալ է և անարդյունավետ: Ի. Վ. Միջուրինը, Վ. Ռ. Վիլյամսը և Տ. Պ. Լիսենկոն շարադրելով իրենց հայացքները սելեկցիայի նկատմամբ, գտնում են, որ բազմամյա խոտերի սելեկցիայի ամենաճիշտ ուղին դա տեղական և բնական բուսականությունից ստացված պոպուլյացիաներն են, այդ առողջ վիճակն զրոյն է: «Մարդագիտագիտության մեջ կիրառվում են ոչ թե սելեկցիոն սասանիք, այլ բարդ բնական տեսակներ (պոպուլյացիա), բնական բարդ սասային կազմը ծառայում է լավագույն երաշխիք նրա, որ մարդագիտնում միշտ գտնվում էն պոպուլյացիաները, որոնք համապատասխան կլիմայական պայմանների տոկացությամբ գտնում են զարգացման լավագույն պայմանները»:

Բաղմամյա խոտերի սելեկցիայի նկատմամբ Ի. Վ. Միջուրինի, Վ. Ռ. Վիլյամսի հայացքները զարգացնելով Տ. Պ. Լիսենկոն նշում է, որ միջանսակալին և միջանսակային հիբրիդիզացիան (առանց կաստրացիայի), ազատ փոշումամբ մեծ չափով հարստացնում է պոպուլյացիայի ժառանգական հատկանիշների հիմքը, նրան հարմարեցնում է նոր ուսունների պայմաններին, բերքը դարձնում է ավելի կայուն:

Միշուրինի — Վիլյամսի — Լիսենկոյի ուսմունքի կենսագործման չույսի տակ լայն հնարավորություններ է ընձեռնվում մեր տեղական և բնական բազմապիսի խոտերի տեսակների, այստեսակների տարածման ու հայտնաբերման բնագավառում։ Գյուղացիների տասնյակ տարիների համար աշխատանքի շնորհիվ ՍՍՌՄ-ի բազմաթիվ շրջաններում ստեղծվել են աշխարհի տմենալավագույն՝ երենուկի, տավույտի, կորնդանի, Տիմոֆեևի խոտի, Ժիտնյակի և այլ կուլտուրաների տեղական սորտ-պոպուլյացիաներ։ Սխալ կլիներ կարծել, որ բազմամյա խոտերի բոլոր պոպուլյացիաները հայտաբերված են, նամանավանդ Հայկական ՍՍՌ-ում։ Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր սեսպուրլիկայում կան բազմամյա թիթեռնածագկավոր և հատկապես բազմամյա հացարուցների ընտանիքին պատկանող խոտերի բազմաթիվ պոպուլյացիաներ, որոնց տարածման արեալը շափականց մեծ է։ Նրանց բազմաթիվ ձեերը հանդիպում են սկսած նսխալեռնային գոտուց մինչև բարձր ալպյան գոտիները։ Ռեսպուրլիկայում բազմամյա խոտերի հսկայական պահանջը կարձ ժամանակամիջոցում լուծելու նպատակով անհրաժեշտ է մոբիլիզացնել սեսպուրլիկայի բոլոր դիտական, մասնագիտական ուժերը, ինչպես նաև կոլխոզների առաջավորներին, հավաքել խոտարուցների բնական հարուստ ֆոնզը, այն բազմացնել և կարձ ժամանակամիջոցում տարածել կոլխոզներում և սովխոզներում։ Միաժամանակ սեսպուրլիկայի հողային օրգանները պետք է իրենց ձեռքը վերցնեն անդական բազմամյա խոտարուցների լավագույն սորտ-պոպուլյացիաների բազմացման գործը։ Այդ նպատակով անհրաժեշտ է սեսպուրլիկայում կազմակերպել բազմամյա խոտարուցների սերմնարուծական տնտեսություններ և մինչև վերը կենսագործել Համկ(թ)Պ Կենտկոմի 1947 թվի Փետրվարյան պլենումի սրոշումները, ուր ասված է «յուրաքանչյուր կոլխոզում և սովխոզում կազմակերպել բազմամյա խոտերի սերմների արտադրության գործը, այն հաշվով, որպեսզի մոտակա 2—3 տարում կոլխոզները և սովխոզները հնարավորություն ունենան լրիվ ապահովել ցանքաշրջանառության դաշտերը իրենց սեփական խոտարուցների սերմերավ»։

1948 թվին Հայաստանում շրջանացված են հետեւող բազմամայլական խոռների սորտ-պոպուլյացիաները:

### Ն ա ր մ ի ր ե ր ե ր ն ո ւ կ ի \*)

«Մեկ հար»: Ռուզահաս է, բույսերի բարձրությունը՝ 50—75 սմ է, տերևները մուգ կանաչավուն, ցողունը հասած: Քաղից հետո աճը դանդաղ է: Զմռադիմացկոմությունը բարձր է: Շրջանացված է, որպես թուզատրելի սորտ Դուկայանի և Սմբակիայի շրջանների լեռնային գոտու համար:

«Երկինար»: Վաղահաս է, բույսերի բարձրությունը՝ 35—50 սմ: Քաղից հետո աճում է արագ: Զմռադիմացկոմությունը համեմատած մեկ հար երեքնուկի հետ թույլ է: Շրջանացված է որպես թուզատրելի սորտ Ստեփանավանի և Կազմինինայի համար:

### Ը ս վ ո ւ չ ա

«Ապարանի տեղական»: Պատկանում է նախալեռնային ծննդրկովկայան տիպին: Բույսերի բարձրությունը միջակ է, տերևները մանր և նորը են: Թփակալումը ուժիղ է: Զմռադիմացկոմությունը թույլ է: Շրջանացված է, որպես Հրմնական սորտ Արարատյան դաշտավայրի շրովի զոտու, ուսապուրիկայի նախալեռնային մասի շոր լեռնատափառտանային զոտու և Սալարանի շրջանի համար:

### Ն ա ր ն գ ա ն

«Տեղական լավագույն»: Պատկանում է «Երանա-Ազրբիջանական» և «Արմյանա-Անաստվական» տիպին (Սիսիանի, Թալինի, Մարտունու և այլ շրջաններ): Բույսերի բարձրությունը՝ 90—120 սմ է: Թփակալումը միջակ և լավ է: Երաշտավայրմացկոմությունը միջակ է: 1—2 երկար է: Շրջանացված է: Որպես թուզատրելի կորքնդանացան շրջանների համար:

Բազմամյա խոռարույսերի սորտ-սայսնացումից զժկար չեղալ այն եղբակացության, որ եթե բազմամյա թիթեռնածաղկավոր խոռարույսերի ուղղոնացման ինդիքը որոշ շափով լուծված

\*) Խոռարույսերի և մյուս կուրառքաների շրջանացման ավագաները բերվում են Գոռկամիսիայի 1958 թ. ավագաներից:

է, ապա բազմամյա հացաբույսերի շրջանացված սորտեր բոլորին չկան, քանի որ տեղական ուսունացված սորտ-պոպուլյա-ցիաները բացակայում են:

Վերը նշած բացը վերացնելու նպատակով անհրաժեշտ է մի-կողմից ՍՍՌՄ-ում գոյություն ունեցող լավագույն Տիբոֆենի խո-տերի (Ոլոգդայի, Արխանգելսկի, Տամրովի, Ալթայի և այլն) ժիտնյակների (Պովոլժյանի, Ղաղախոստանի, Ռուբրախնական, Սիբի-րի), ուսուցրասների սորտ-պոպուլյացիաների ներմուծում կատարել, նրանց արագ կերպով բազմացնել, իսկ մյուս կողմից ուսուպուր-լիկայի բնական հարուստ ֆոնդը հայտարերել և ներդնել արտա-դրության մեջ:

### Ա Ր Ա Խ Ա Ֆ Ի Ւ

Կարտոֆիլի դերը ժողովրդական տնտեսության մեջ շափա-ղանց մեծ է: Նա մշակվում է սննդի, տեխնիկական և կերի նպա-տակներով: Բացի այդ կարտոֆիլի դերը մեծ է ցանքաշրջանառու-թյունների մեջ, որպես հացահատիկային և մի շարք այլ կուտառ-րաների լավագույն նախորդի: Լավ խնամքի և բարձր ակրոտեխ-նիկայի դեպքում կարտոֆիլը դաշտը մաքրում է մոլախոտերից ու նպաստում է մի շարք բույսերի բերքատվության բարձրացմանը: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ տարեց տարի կարտոֆիլի ցանքերի տարածությունը ՍՍՌՄ-ում և Հայկական ՍՍՌ-ում ընդարձակվում է: Կարտոֆիլի ցանքատարածություննե-րի ընդարձակման զուգընթաց վերջին տարիներին մեծ աշխա-տանք է տարվում նաև բերքատվության բարձրացման ասպարե-զում: Բայտ ցանքատարածությունների և կարտոֆիլի համախառն-բերքի ՍՍՌՄ-ն աշխարհում առաջին տեղն է բռնում: Ակադեմիկոս Տ. Ի. Լիսենկոյի կողմից առաջադրված կարտոֆիլի ամառային ցանքի մեթոդի շնորհիվ նա մուտք է գործել նաև հարավային շրջանները: Իսկ կարտոֆիլի յարովիզացիան հնարավորություն է տալիս այն մշակելու հյուսիսում և մեր ուսուպուրլիկայի բարձր լեռնային շրջաններում:

Միության մեջ տարածված են սեղանի, գործարանային, կերի և ունիվերսալ բազմաթիվ սորտեր:

Սեղանի սորտերի առանձնահատկությունը կայանում է նրա-նում, որ նրանք պետք է ունենան լավ համ, եփելու ժամանակ լավ:

սրբության, պալարում մի մաս սպիտակուցին պետք է ընկնի 12—16 մաս օսկա: Սեղանի կարտոֆիլի պալարները պետք է լինեն կլոր, որպեսզի հեշտ լինի մեքենայով մաքրելը:

Դործարանային սորտերից պահանջվում է 18% և ավելի օսկայի պարունակություն, իսկ կերի սորտերը պետք է ունենան բարձր բերքատվություն: Ոմիվերսալ սորտերը իրենց որակի տեսակետից բռնում են միջին տեղը, սեղանի և գործարանային սորտերի միջև:

Հայաստանում առաջմմ ամենից շատ տարածված է ունիվերսալ խմբին պատկանող կորխ կոչվող սորտը: Այս սորտը ներմուծվել է 1938 թվին, որը շնորհիվ իր մի շարք զրական հատկությունների (համի, սրտու լինելու, օսկայի տոկոսի), արագ կերպով տարածվեց Համենական կարտոֆիլացան շրջաններում:

Բացի կորխից մեծ տարածությամբ մշակվում է նաև «ժողովրդական» կամ «Սպիտակ» կոչվող սորտը, որը պատկանում է ունիվերսալ սորտի խմբին:

1930 թվականից մի շարք շրջաններում մշակվում են նաև «Էպիֆուլու» և «Վաղաճաս վարդագույն» սեղանի վաղաճաս կարտոֆիլի սորտերը: Այս սորտերի գերը ցանքաշրջանառության մեջ մեծ է, որպես զրաղված ցելանովածափի կուտուրաները ետուագությունը տակառովված, ոսովվող և բարձր լինացին գոտիներում նրանց տարածման արևալը պետք է մեծացնել: Վերջին տարիներում, որպես հեռանկարային սորտ փորձարկվում է «Էպիռոն» սորտը: Նախնական արդյունքները ցուց են առլիս, որ այս սորտը հաջող է գնում Ստեփանավանի, Ալաղյաղի, Ղուկասյանի և Ամասիայի շրջաններում:

Ինչպես տեսնում ենք մշակվող կարտոֆիլի սորտերը մեր սեպականիայում սահմանափակ են: Անհրաժեշտ է, հիմք ունենալով միշտինյան ազրորիուոգիսան, մուտքա տարիներում սեսպուրիկայում բազմակողմանիորեն լուծել կարտոֆիլի սորտ-սայունացման խնդիրները: Ըստ որում հատուկ ուշադրություն պետք է դարձնել հիմանդրությունների, հատկապես ֆիտոֆառա, կամ «կարտոֆիլի փտախտ» կոչվող հիմանդրության դիմացկոմ սորտ ստեղծելու վրա: Քանի որ այդ հիմանդրությունը գյուղատնտեսությանը խոշոր վնաս է հասցնում:

Միաժամանակ լայն աշխատանք պետք է ծավալել Արարատյան դաշտավայրի շրջաններում և նախալեռնային գոտիներում

Տ. Դ. կիսենկոյի մեթոդով կարտոֆիլի ամառային ցանքը արմատավորելու ուղղությամբ, իսկ լեռնային շրջանների համար խոչոր նրանակություն ունի կարտոֆիլի յարովիզացիան, որովհետեւ այդ մեթոդը հանդիսանում է կարտոֆիլի վեգետացիայի շրջանը կարծացնելու և դրանով իսկ աշնանային ցրտահարության դեմ պայքարի լավագույն միջոց:

### Շ Ա Բ Ա Ր Ի Ն Ա Կ Ե Ւ Կ Ե

Շաքարի ճակնդեղը արժեքավոր տեխնիկական կուլտուրաներից մեկն է: Նրա արմատաները հանդիսանում են շաքար ստանալու հիմնական հումուզի: Ճակնդեղի վերամշակման ժամանակ գործարանում բացի շաքարահյութից ստացվում են թափթփուկներ (մղուկ, մաթ, ժոմ), որոնք կերպային մեծ արժեք ունեն: Վերջին տասնամյակում շաքարի ճակնդեղի տարածությունը ՍՍՌՄ-ում զգալի շափով ընդարձակվեց: Յանքերի տարածման զուգընթաց ՀամԿ(ր)Պ 17-րդ համագումարը խնդիր դրեց շաքարի ճակնդեղի համախառն բերքն ավելացնել: Ստալինյան 4-րդ հնդամյակում շաքարի ճակնդեղի համախառն բերքը պետք է կազմի 26 միլիոն տոննոտ, մեկ ճեկտարից 190 ցենտներ միջին բերքատվությամբ, կամ 22 % ավելի, քան մինչպատերազմյան շրջանը:

ՍՍՌՄ-ում շաքարի ճակնդեղի արտադրության հիմնական շրջաններ են հանդիսանում Ռուբրայնական ՍՍՌ-ը, Վորոնեժի և Կորսիկի մարզերը: Հայաստանում շաքարի ճակնդեղի մշակումը սկսվել է 1926 թվից: Սկզբում նա մշակվում էր Ախուրյանի շրջանում, իսկ հետագայում տարածվեց նաև կից շրջանները: Ռեսպուբլիկայում շաքարի գործարանի կառուցմամբ յուրաքանչյուր տարի ընդարձակվում է շաքարի ճակնդեղի ցանքերի ցանքային բարձրացնելը և խնդիր է դրվում այդ արժեքավոր կուլտուրայի բերքը բարձրացնել:

Ճեկտարից 1.000 և ավելի ցենտներ բերք ստանալու ուղղությամբ ծավալած պայմանագրի առաջավորների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջավոր ագրոտեխնիկայի հետ միասին բերքատվության բարձրացման գործում վճռական նշանակություն ունի նաև ճակնդեղի սերմացուի որակը: Մեր ուսումնագրության համար շաքարի ճակնդեղի սերեկցիայի և սերմագումարությամբ համարյա չեղադրվում: Այդ պատճառով ուսումնացված են ՍՍՌՄ-ի

Համապատասխան շրջաններից բերված Բ—1025, Ա—1305 և  
Բ—1609 սորտերը: Անհրաժեշտ է կազմակերպել վերոհիշյալ և տ-  
ռաջավար ճակնդեղագործական շրջաններում տարածված մեր պայ-  
մաններին համապատասխանող այլ լավագույն սորտերի փորձար-  
կումը՝ նպատակ ունենալով արտաքին փոփոխված պայմանների և  
բույսերի դաստիարակման ճանապարհով կատարելու սորտ-ուայո-  
նացում, ընտրելով բարձրորակ և բերքատու սորտեր:

### Ք ա մ ք ա կ ը

Բամբակի դերը ժողովրդական տնտեսության մեջ բազմապի-  
սի է: Նա համարվում է ամենաարժեքավոր տեխնիկական կուլտու-  
րա: Ստացված բերքը օգտագործվում է մանվածքային, պարֆյումե-  
րային և այլ արդյունաբերության մեջ: Մեծ է բամբակի նշանա-  
կությունը նաև անասնապահությունը կերի բազայով ապահովելու և  
այլ բնագավառներում: Դրանով պետք է բացատրնել այն հանգա-  
մանքը, որ բամբակի ցանքերի տարածության ընդարձակման և  
բերքատվության բարձրացման խնդիրները միշտ էլ եղել են ուշա-  
դրության կենտրոնում:

Ստալինյան 4-րդ հնգամյակում՝ նախատեսնվում է ստանալ  
3,1 միլիոն տոննա բամբակի համախառն բերք, մեկ հեկտարից  
18,4 ցենտրոն միշտ բերքատվությամբ:

ՍՍՌՄ-ում բամբակի ցանքերի տարածության ընդարձակումը  
դերագանցապես կատարվում է նոր մշակվող շրջանների հաշվին,  
սակայն այն չի բացառում հին բամբակացան շրջաններում ձեռ-  
նարկվող աշխատանքները:

Ստալինյան 4-րդ հնգամյակում հսկայական ներդրումներ են  
կատարվում միշտ ասիական ռեսուրսներում և Անդրկովկա-  
սում ուսումնական տարածությունների ընդարձակման, ճահիճների շո-  
րացման, աղուտային և ալկալի հողերի յուրացման ուղղությամբ, ո-  
րոնք հնարավորություններ են ընձեռում բամբակի ցանքերի ըն-  
դարձակման գործում:

Բամբակի տարածությունների ընդարձակմանը գուզընթաց հա-  
տուկ նշանակություն են ստանում բերքատվության բարձրացման  
ուղղությամբ գործադրվող միջոցառումները: Եստադաշտային ցան-  
քաշրջանառությունների իրացմամբ և ազրոտեխնիկական ձեռնար-

կումների բարելավմամբ ստեղծվում են բարձր բերք ստանալու բայց նախապայմանները, սակայն տուանց լավագույն սորտ ունենալու հարավոր չէ: կայսուն և պրոդեսիվ բերքատվության աճն ապահովելու:

Առավել ևս այդ վերաբերում է Հայկական ՍՍՌ-ին: Բազմաթիվ տարիների ուսումնասիրությունները ցուց են տալիս, որ մեր սեսպուրիկայում բարեակի բերքի զգալի կրուստ է տեղի ունենալու աշնանային ցրտահարությունների և հիվանդությունների (Հատկապես վիլտ հիվանդության) հետևանքով: Այդ պատճառով կազմ վեգետացիա ունեցող, հիվանդությունների նկատմամբ դժմացկուն սորտ ունենալու խնդիրը բարձր բերք ստանալու կարեոր նախապայմանն է:

1948 թվի սորտ-շրջանացմամբ Հայաստանում մշտկված են Հիմնականում № 1298 և № 3210 սորտերը:

«Սորտ № 1298»: Պատկանում է ամերիկյան տեսակին. սկսցվել է 1936 թվին Աղրուհանի Բամբակադործական զիտահետազոտական ինստիտուտի կողմից հիբրիդիզացիայի միջոցով: Գուստրաֆոնդի կողմից սկսվել է փորձարկվել 1937 թվին, արտադրության մեջ է մտել 1939 թվից: Թփի բարձրությունը, ցողունի հաստությունը, սիմպոդիալ ճյուղավորությունը, տերևները, ծաղիկը, կնդուղները միջին մեծության են: Սերմերը փոքր են, 1.000 հատիկը կշռում է 95—100 գրամ: Վաղահաս է, պատկանում է առաջին խումբ սորտերին: Թիլի երկարությունը 29—30 մմ, միջին ելլ 33 %: Նայած զարծագրվող տղբամիջոցառումներին և զարգացման պայմաններին ելլ տատանվում է 32—35 %-ի միջև: Խայտնացված է Հայաստանի բոլոր բամբակադործական շրջանների համար, բացառությամբ Հոկտեմբերյանի շրջանի 2.000 հիմայր առածությունից, ուր մշտկվում է № 3210-ը:

«Սորտ № 3210»: Ստացվել է Կենտրոնական սելեկցիոն կայանի կողմից: Թուփը մեծ չէ, ցողունը կանգուն է, պտղաբերումն ինտենսիվ է, տալիս է շատ կնդուղներ, կնդուղների միջին կշիռը 3—4 գրամ է, համարվում է վաղահաս սորտերից, ունի նույնքան վեգետացիոն շրջան, ինչ № 1298-ը, իսկ որոշ դեպքերում 2—3 օր ավելի շուտ է համարվում: Թիլի երկարությունը 30—31 մմ, միջին ելլ 35 % է: Լավ աղբուտեխնիկալի պայմաններում ավելի բերք է

ապահովում, քան № 1298-ը: Մշակվում է Հոկտեմբերի բյանի շրջանում ընդամենը 2.000 հեկտար տարածության վրա:

Ռեսպուբլիկայի գիտահետազոտական հիմնարկների և Հողային օրգանների հիմնական խնդիրն է, կարճ ժամանակամիջոցում ստեղծել վաղահաս, հիմանդրություններին դիմացները և բարձր բերքատու սորտեր, որով և հնարավորություն կընձեռվի լուծելու սորտայինացման խնդիրը Հայկական ՍՍՌ-ում:

#### •Փ Խ Ա Խ Ա Խ

Ծխախոտի արզյունաբերությունը՝ օրբսաօրի զարգանում է: Նրան հոմովայթով բավարարելու նպատակով վերջին տասնամյակում ծխախոտի պլանացիաները մեծ չափով ընդունակվեցին: Դրա հետեւանքով որոշ ռեսպուբլիկաներում և շրջաններում ծխախոտը գարձավէ կարեւը տեխնիկական կուլտուրաներից մեկը: ՍՍՌ-ում ծխախոտի տարածությունների մեծացման զուգընթաց, առաջավոր ագրոնոմնարկումների կիրառմամբ ավելացավ նաև ծխախոտի համախառը բերքը: Բնդուարակվեց գիտահետազոտական, փորձնական հայանների ցանցը, որոնց առաջ խնդիր դրվեց ստեղծել այնպիսի սորտեր, որոնք կտան բարձր և որակով ծխախոտ: Ծխախոտագործությունը պատշաճ տեղ է գրավում նաև Հայկական ՍՍՌ-ում: Հիմնական ծխախոտագործական շրջաններից բացի, վերջին տարիներում ծխախոտի մշտիությամբ են զբաղվում նաև միջին լեռնային և լեռնային շրջանները:

Ցանքաշրջանառության, հողի լավագույն մշակման, պարագացման և այլ առաջավոր ձեռնարկումների կիրառմանը զուգընթաց ծխախոտի բարձր բերքատվությունն ապահովելու կարեւը նախապայմաններից մեկն էլ կարճ վեգետացիոն ունեցող վաղահաս, բարձրորակ և զտասորտ սորտերի ստեղծումն է: Բայ որում պետք է հասնել այն բանին, որպեսզի յուրաքանչյուր շրջան, կոլխոզ ունենա տիյալ հողային և կլիմայական պայմաններին համապատասխան սորտ:

1948 թվի սորտ-շրջանացմամբ մեր ռեսպուբլիկայում մշակվեցին ծխախոտի հետեւալ սորտերը.

Տրավեգունդ առափնյա № 1272: Սորտը ստացվել է Կրանոդարի երկրամասի, Սոչու ուայոնի տեղական մատերիալից: Հա-

ժարդում է միջակ ուշահաս սորտ: Վեգետացիալի շրջանը՝ անկումից մինչև ծաղկումը 65—70 օր է, իսկ անկումից մինչև բերքահավաքի վերջը 110—135 օր է:

Արմատային սև փտախտ հիվանդությունից տուժում է ավելի ուժեղ, քանի Տրապեզունդի մյուս խմբերը, իսկ մյուս հիվանդություններից տուժում է միջին շափով:

Բուլսերի բարձրությունը ծաղկիներով ներառյալ 120—150 սմ է, բուսաբանական տերևների թիվը 27—32 հատ է: Հումքը վիճում է շեղոք— կմախիքահամի: Ստախանովականները մեկ հեկտարից ստացել են 28—30 ցենտներ բերք:

Սորտը շրջանացված է սեսպուրիկայի՝ Ազիզեկովի, Ալավերդու, Ախտայի, Աշտարակի, Գորիսի, Դիլիջանի, Խշեանի, Վեդիի, Կոտայքի, Կարմիրի, Մարտունու, Միկոյանի, Բայազետի, Նոյեմբերյանի, Սիսիանի, Թալինի և Շամշադինի շրջանների համար:

Տրապեզունդ առավինյա № 1867»: Սորտի օրիգինասորը Ա. Ի. Շիրյանն է: Ստացվել է Թուրքիայի Տրապեզունդ պոպովյացիայից: Հումքը կմախիքահամի է: Վեգետացիան անկումից մինչև ծաղկման նախօրյակը 65—75 օր է, իսկ անկումից մինչև տերևների բերքահավաքի վերջը 105—115 օր: Համարլում է միջին ուշահաս սորտ: Ստախանովականները մեկ հեկտարից ստացել են 28 ցենտներ: Ուժեղ վարակվում է բյարուխայով, արմատային փտախտի նկատմամբ դիմացկում է: Բուլսերի բարձրությունը ծաղկիներով 90—120 սմ. է: Բուսաբանական տերևների թիվը 27—28: Այս սորտը Տրապեզունդ № 1272-ից տարբերվում է նրանով, որ սրա բույսերը լավ արտահայտված կոնաձև են, իսկ տերևաթիթեղները երկարա-էլիպսավում:

Սորտը շրջանացված է Ալավերդու, Խշեանի, Վեդու, Կոտայքի, Նոյեմբերյանի և Շամշադինի շրջանների համար:

«Սամսոն № 57»: Սորտի օրիգինասորը Ա. Ի. Շիրյանն է, ըստացվել է Արխագյայի տեղական մատերիալից: Նայած մշակման պայմաններին հումքը կարող է լինել լավ արտմատով, շեղոքարումատով, կմախիքահամի: Վեգետացիայի անողությունը անկումից մինչև ծաղկման սկիզբը 50—70 օր է, իսկ անկումից մինչև տերևների բերքահավաքի վերջը 100—120 օր: Սորտը համարլում է միջին-վաղահաս, իսկ դորձարանային սամսոններից ամենավա-

դահմասն է: Ստախանովականները սոսոքման և լավ մշակման պայմաններում՝ ստացել են հեկտարից 23—24 ցենտներ բերք: Արժատավային փոտախտով ավելի ուժեղ է վարակվում, քան Սամսոն № 27-ը: Բույսերի բարձրությունը՝ ծաղիկներով՝ 110—120 սմ. է, բուսաբանական տերևների թիվը՝ 32—33: Մշակվում է ծխախոտագործական բոլոր 27 ռայոններում:

«Սամսոն № 27»: Սորտի օրիգինատորը՝ Պ. Վ. Զիկովն է: Սուանձնացված է Արխագիսայի տեղական մատերիալից: Հումքն արտմատային է, կմախքահամի: Միջահաս սորտ է, վեգետացիայի տևողությունը՝ տնկումից մինչև տերևների բերքահավաքի վերջը՝ 105—120 օր: Խսկ տնկումից մինչև տերևների բերքահավաքի վերջը՝ 125—140 օր: Էտապանովականները ստացել են հեկտարից 16—18 ցենտներ: Արժատավային փոտախտ հիվանդությանն ավելի դիմացկուն է, քան Սամսոն № 57 սորտը: Բույսի բարձրությունը՝ ծաղիկներով՝ ներառյալ 125—140 սմ. է, բուսաբանական տերևների թիվը՝ 36—40 հատու Սորտը շրջանացված է ծխախոտագործական բոլոր շրջանների համար:

«Տիկ Կուլակ № 235»: Սորտի օրիգինատորը՝ Ա. Յ. Բուշինսկին է. ստացել է Կրասնոդարի երկրամասի տեղական մատերիալից: Հումքը չեղոք կմախքային է: Միջահաս է, վեգետացիայի շըրջանը, տնկումից մինչև ծաղկման սկիզբը՝ 65—70 օր է, խսկ տընդությունը՝ մինչև տերևների բերքահավաքը՝ 110—120 օր: Գյուղատքնական առաջարկությունները լավագույն մշակմամբ մեկ հեկտարից ստացել են 25—30 ցենտներ բերք: Բույսերի բարձրությունը՝ ծաղիկներով՝ ներառյալ՝ 130—160 սմ. է: Բուսաբանական տերևների թիվը՝ 40—50 հատ է:

Սորտը շրջանացված է Ալավերդու, Աշտարակի, Բասարդիշարի, Իշեանի, Ղափանի, Կոտայքի, Մալտունու, Սիսիանի և Շամշադինի շրջանների համար:

Ծխախոտի վերը թվարկած սորտերի ռայոնացմամբ բավարարվել ոչ մի կերպ չի կարելի: Մեր ռեսպուբլիկայի հողային և կլիմայական պայմանների բազմազանությունը՝ պահանջում է մանրամասն զբաղվել ծխախոտի սորտ-ռայոնացման խնդրով:

ԱՍԽՄ-ում՝ մշակվում են ծխախոտի բազմաթիվ սորտեր: Անհրաժեշտ է, որպեսզի ռեսպուբլիկայի գյուղատնտեսական գիտա-

Հետազոտական հիմնարկները, մասնագետները և հոգային օրգան-ները լուրջ կերպով իրենց ձեռքբ վերցնեն ծխախոտի բարձրորակ, չափ արոմատով և բերքատու սորտ ստեղծելու գործը:

Անցյալ գյուղատնտեսական տարում նոր-Բայազետի, Բասար-դեշարի և մի շաբթ այլ շրջանների առաջավոր ծխախոտագործ-ներ, օղակներ ու բրիգադաներ ստացան ծխախոտի բարձր բերք: Այս հանգամանքը երաշխիք է այն բանի, որ միշտինյան ագրո-բիոգիայի և երկրագործության խոտադաշտային սիստեմի լրիվ ինսագործմամբ մենք կարող ենք դառնալ առաջավոր ծխախոտա-գործական ուսուցչութիւններից մեկը:

## ՈՒՆԴԱՎՈՐ ՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

(Ընդեղեններ)

Հատիկային ունդավորները ժողովրդական տնտեսության, հատ-իւալիս որպիս մարդու սնունդ մեծեք են ներկայացնում: Վեր-ջին տարիներում այդ կուլտուրաների մի մասին ոլորտի, լորու և ոս-պի ցանքերը զգալի շափով ընդարձակվեցին: Դրանք մեր ուսուցիչների հնագույն կուլտուրաներից են: Տարածված են եղել զլիսա-ձորագես Արարատյան դաշտավայրում և նսխալեռնային շրջան-ներում: Վերջին տարիներում ունդավորների որոշ տեսակներ մը-ցակիվում են նաև լեռնային շրջաններում: Ցանքաշրջանառության մեջ միամյա ունդավոր կուլտուրաների մեծ մասը հանդիսանում է հացահատիկային կուլտուրաների լավ նախորդներ: Նրանք հողը հարստացնում են ազդուով և որպես շարքահերկ կուլտուրաներ դաշ-տը մաքրում են մոլախոտերից: Այդ պատճառով նրանց տարածու-թյան ընդարձակումը, բերքատու սորտեր ստեղծելը, կարևոր խըն-դիրներից մեկն է: 1948 թվի սորտ-շրջանացմամբ ուսուցչութիւն-յում մշակվելու են հետեւյալ միամյա ունդավոր բույսերը:

«Կիկուրյա Մանգոֆորսկայա»: Ոլորի սելեկցիոն սորտ է, մի-ջահաս է, լավ է եփվում: Հատիկները պարունակում են 25—29 % սպիտակուցային նյութեր: Վարակվում է բրուխուազ: Բերքատու է, շրջանացված է որպիս թույլատրելի սորտ Ախուրյանի, Արթիկի, Աղինի, Ալագյաղի, Ամասիայի, Ախուրյանի, Անանի, Դուկայանի շրջանների, Կիրովականի, Թալինի և Կոտայքի շրջանների լեռնա-յին գոտիների համար:

**«ՅԵԿԱՐԵՎ-ԳԵՂԱՆԵ»:** Ոլոռի սելեկցիոն սորտ է, ուշահաս է, լավ է եփվում, հատիկները պարունակում են 20—32 % սպիտակուց, շրջանացված է որպես թույլատրելի սորտ Ախուրյանի, Աղինի, Մարտունու, Բասարգեշտի և նոր Բայազետի շրջանների համար:

**«ՏՐԻՈՒՄՓ»:** Լորու սելեկցիոն սորտ է, երաշտադիմացկուն է: Համեմատաբար դիմացկուն է սնկային հիվանդություններին, վազահաս է, լավ է եփվում: Սպիտակուցի տոկոսը հատիկի մեջ տատանվում է 22—26-% սահմաններում: Բերքատու է, շրջանացված է որպես հիմնական սորտ Աղավերդու, Իջևանի, Նոյեմբերյանի և Շամշադինի շրջանների ներքին-լեռնատափաստանացին գոտիների համար:

**«ՊԵՏՐՈՎՍԿԱՅԱ 4/105»:** Ոսպի սելեկցիոն սորտ է, երաշտադիմացկունությունը ցածր է: Լավ է եփվում, պարունակում է 24—31 %. սպիտակուցային նյութեր: Բերքատու է: Երջանացված է որպես թույլատրելի սորտ Մարտունու, Բասարգեշտի և նոր-Բայազետի շրջանների համար:

Ռեսպուբլիկային քացի վերը նշված ունդավորներից, շրջանացված սորտերից կան լորիների, սիսեռի և ոսպի տարրեր պոպուլյացիաների խառնուրդներ: Տեղական պոպուլյացիաներին արժեքավոր են նրանով, որ հարմարվել են տեղական պայմաններին: Բերքատու են և սելեկցիայի համար լավ մատերիալ: Ուստի պետք է կազմակերպել ընտրության դորձը, լուծել սորտ-ուայունացման խնդիրը և զրանց մշակությունը լայն շափով տարածել լեռնային շրջաններում, առավել ևս որ նրանք լեռնացին շրջանների ցանքաշրջանառությունների մեջ հանդիսանում են զբաղված ցելերի լավագույն կուլտուրաներ:

#### Կ Թ Ա Վ Ա Մ

Խուսադաշտային ցանքաշրջանառություններում (Հատկապես կերպին) պատշաճ տեղ է զբավելու կտավատը: Նրա զերը ժողովրդական անտեսության մեջ եռակի է, որովհետեւ քացի յուղ ստանալուց, նա հանդիսանում է նաև լիարժեք անասնակեր: Իսկ որոշ տեղերում հանդիս է գալիս նաև որպես թելատու բույս: Մինչեւ վերջին տարիները ռեսպուբլիկայում մեծ մասամբ մշակում էին յուղատու կտավատների տեղական պոպուլյացիաների խառնուրզը:

1940 թվի սորտ-շրջանացմամբ ռեսուլուլիկայում մշակվելու  
է հիմնականում երկու սորտ:

«Արթիկի № 7»: Սելեկցիոն սորտ է, երաշտադիմացկումովյու-  
նը բարձր է, միջահաս է, պարունակում է 40—41 % յուղ: Շրջա-  
նացմած է, որպես թուլլատրելի սորտ՝ Ախուրյանի, Արթիկի, Սպի-  
տակի և Աղինի շրջանների համար: Վերջին տարիների ռւսումնասի-  
րությունները ցուց են տալիս, որ լավ է դնում նաև Սևանի ավա-  
զանի շրջաններում:

«Կուկասյանի 17»: Սելեկցիոն սորտ է: Վաղահաս է: Բերքա-  
տրվությունը միջակ է: Երաշտադիմացկում սորտ է: Պարունակում  
է 30 % յուղ: Շրջանացմած է որպես թուլլատրելի սորտ Ամասիայի և  
Դուկասյանի շրջանների բարձրադիր գոտիների և համանման պայ-  
մաններ ունեցող այլ շրջանների համար:

Սյս երկու սորտերը Հայկական ՍՍՌ-ի բոլոր կտավատացման  
շրջանները բավարարել չեն կարող: Այդ բացը պնդոք է գրացնել  
տեղական հարուստ պոպուլյացիաններից սելեկցիոն ճանապարհով  
չափագույնները ընտրելու և բազմացնելու ճանապարհով:

**ՈՐՈԳՄԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ ՏԵՂԻ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ  
ԼԱՅՆ ՕԴՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՎՐԱ՝ ԷՎԱԿՆԵՐ ԵՎ  
ԶՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ**

Գյուղատնտեսության վերելքի, երաշտի դեմ պայքարելու և մը-  
շակող կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու գործում  
խոտագաշտային ցանքաշրջանառություններ կիրառելուց քայլ  
վճռական նշանակություն ունի նաև կոլխոզների ու սովորողների  
ոսոգելի հողային տարածությունների լայնացումը։ Այդ է պատճա-  
ռը, որ Դոկոչակի, Կոստիչևի, Վիլյամսի ուամունքի վրա հիմնված  
երկրագործության վերելքի ազգոնոմիական միջոցառումների սիս-  
տեմում իր արժանի արտահայտությունն է գտել ոսոգման զարգա-  
ցումը՝ ի հաշիվ տեղական ջրային ռեսուրսների առավել օգտագործ-  
ման։ Գործնականորեն այդ հարցը լուծվում է լճակներ և ջրային  
ավագաններ կառուցելու միջոցով։

ՍՍՌՄ-ի Մինիստրների Սովետի և Համել(բ)Պ Կենտրոնական  
Կոմիտեի հոկանմբերի 20-ի որոշմամբ նախատեսվում է կոլխոզ-  
ներում և սովորողներում մեծ զարկ տալ լճակների և ջրային ավա-  
գանների կառուցմանը՝ բնական ջրահավաքներում, գետերի ակունք-  
ներում, ձորերի և ձորակների վերին մասերում և այլ բնական գոզու-  
թյուններում։ Մեծ ծավալով աշխատանքներ են տարվելու նաև փոքր  
գետերի վրա ջրային ստվագաններ կառուցելու ուղղությամբ, որն  
անհրաժեշտ է ոչ միայն ոսոգման, ա' լ նաև ձկնարուծության զար-  
գացման, հիդրոէներգիա ստանալու, ջրային տրանսպորտը լավաց-  
նելու համար՝ ջրի տեղական հոսք կանոնավորելու և օգտագործե-  
լու միջոցով։

Խոշոր աշխատանքներ են տարվելու նաև ոսոգման սիստեմի  
շահագործման լավացման, կոլխոզներում և սովորողներում ջրի  
պլանային օգտագործման, դյուզատնտեսուկան շրջանառությունից

դուքս մնացած ոռոգելի հողերի լրիվ օգտագործման և ցանքերի ու ծառատնկումների տակ դնելու ուղղությամբ, ըստ որում այդ աշխատանքը տարվելու է 1949—1950 թ. թ.:

Հատուկ ուշադրության արժանանալու է նաև լիմանային ոռոգումը, որը ՍՍՌՄ-ի մի շաբթ ուսպուբլիկաներում, երկրամատ-սերում և մարզերում մեծ դեր է կատարում։ Հոկտեմբերի 20-ի որոշմամբ նախատեսվում է լայնորեն զարգացնել լիմանային ոռո-դումը, վերականգնել նախակինում գոյություն ունեցող լիմանները և մեծապես օժանդակել կոլխոզներին ու սովորողներին՝ այդ աշխատանքները իրականացնելու և լիմանային ոռոգումը կազմակեր-պելու գործում։

Առանձին ուշադրություն դարձվելու է մեծ ծախս չափանշադի ինքնաշխու ոռոգման զարգացման, ինչպես նաև ջրալից հովիտ-ների հողերի լրիվ օգտագործման վրա՝ թանկարժեք կուլտուրաներ մշակելու և բարձրաբեր կերպին հողատեսքի ստեղծելու համար։

Բազմաթիվ առաջավոր կոլխոզների արտադրական փորձից պարզվել է, որ ոսովումը, որը կազմում է երկրագործության խո-տագաշտային սիստեմի կարևոր օլակներից մեկը և խոշոր նշա-նակություն ունի երաշտի գեմ պայքարելու գործում, անհամեմատ ավելի մեծ էֆեկտ տալիս է, եթե այն կիրառվում է այդ սիստեմի մեջ և նրա մյուս էլեմենտների հետ զուգակցված։ Այդ բանն ապա-ցուցելու համար բերենք մի քանի օրինակներ։

Սարատովի երկրամասի «Կարմիր պարտիզան» ուայոնի «Կոմ-սոմոլեց» կոլխոզում 1947 թ. խիստ երաշտի պայմաններում 240 հեկտար տարածության վրա ջրովի պայմաններում ստացվել է հեկտարին 18,0 ցենտներ գարնանացան ցորենի հաջողիկի բերք, անջրդի պայմաններում՝ 5,2 ցենտներ։

Նույն երկրամասի Նովորեպենյան ուայոնի «Անինյան» ուղիւ կոլխոզը ոսովման և բարձր ազրոտեխնիկայի կիրառման շնորհիվ 11,5 հեկտար տարածությունից 1948 թվին ստացել է 35 ց/հ մտ-խորհայի բերք, իսկ օլակավար վերզիլինային հաջողվել է մեկ հեկտար տարածությունից ստանալ 77 ց/հ բերք։ Անջրդի հողամա-սերի բերքը նույն կոլխոզում կազմել է 10 ց/հ։

Նույն երկրամասի Մարքսի ուայոնի «Կարմիր երկրագործ» կոլ-խոզի ոսովվող հողերում 1948 թ. ստացվել է միջինը 7,2 ց/հ առ-վույտի սերմ (7 հ. տարած. վրա), այնինչ անջրդի պայմաններում

բոլորովին սերմ չի ստացվել: Չոր խոտի բերքը ջրավի պայմաններում կազմել է հեկտարին 60—70 տեսաներ, իսկ անջրդի հողերում՝ 10—15 տեսաներ:

Հայկական ՍՍՌ-ի Արտաշատի շրջանի Դարդալու զյուղի «Փարիզյան կոմունա» կոլխոզում 1948 թվին բամբակի 100 հեկտար տարածությունից, շնորհիվ բարձր ազդուականիկացի կիրառման հիմային բարձրապես ճիշտ և բարձրորակ ոռոգման, ստացվել է 32,5 տ/հ բամբակ:

Ել ավելի մեծ էֆեկտ ոռոգումը տվել է բանջար-բոստանային կուլտուրաների նկատմամբ:

Առանձնակի ուշագրավ է նաև այն, որ ճիշտ կազմակերպված ոռոգումը խոշոր արդյունք է տալիս նույնիսկ խոնավ տարիներին, բարձրացնելով մշակվող կուլտուրաների բերքը 1,5—3,0 անգամ:

Գրականության մեջ գոյցություն ունեցող տվյալներից հայտնի է, որ ոռոգվող հողերում բարձր ու կայտն բերքատվության ապահովման գործում առանձնակի նշանակություն ունի խոտախոռնութիւն կոմպոննենաների ճիշտ ընտրությունը: Էնգելսի անվան փորձականուամ ամենից մեծ արդյունք հացաղի խոտաբույսերի կոմպոննենաներից տվել են նեղատերև ժիտնյակը, ֆրանսիական ռայդիասը, կարճ կոճղարմատավոր անքիստ կոստյորը և ամերիկյան սեղը: 1948 թվին առվույտի, ժիտնյակի և ֆրանսիական ռացցիանի խառնուրդը տվել է հեկտարին 80—90 տ. խոտ, 1935 թ. խոտ, 1940 թ. խոնավ տարին՝ 110—115 տ/հ: Ոռոգման բացակայության պայմաններում ստացվել է 15—30 տ/հ խոտի բերք: Մաքուր առվույտի ցանքը 10—15 տ/հ պակաս բերք է տվել, քան խառնուրդը:

Փորձերով ապացուցված է, որ ոռոգման պայմաններում խոտախոռնուրդը հողի վարելաշերտում երեք տնկամ ավելի շատ արմատացներ մնացորդներ է կուտայվում, քան անջրդի պայմաններում:

Ակտուալ նշանակություն ունի նաև ոռոգման սիստեմի ճիշտ շահագործումը: Սիստեմի սխալ շահագործման դեպքում ջրի զգալի մասը անմիջականորեն ոռոգման նպատակով չի օգտագործվում, իսկ որոշ մասն էլ սնում է դրունտի ջրերը և ունալ վանդակ է սպառնում հողերի աղքակալման և ճահճացման հնարավորություն սահմանելու տեսակետից:

Հետպատերազմյան հնդամյակի չորրորդ տարում գյուղատըն-

տեսական կուլտուրաների բարձր բիրբատվության ապահովման ռազմական ռազմական կիբառալող միջոցառումների սիստեմում կարևորագույն տեղ գրավում է նաև ոռոգման սիստեմը օրինակելի վիճակում պահելը և շրանցքների լայն ցանցի տեխնիկական դրության լավացումը:

Համաձայն ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի ուսմունքի, ստրոմետուրային հողերում վերանում է ոռոգման հետեանքով հողերի երկրաբացին աղակալման վատանգը, այդպիսի հողերում չուրը յուրացվում և օգտագործվում է լրիվ, չը գոլորշիացումը հողի մակերեսից մինիմումի է հասնում, պակասում է ոռոգման համար պահանջվող չը բանակը: Եթե ոռոգումը կատարվում է երկրագործության խոտադաշտային սիստեմում, պահանջվում են անհամեմատ ավելի փոքր ոռոգման նորմաներ, պակասում է չը ծը ծախսը, որը հայրավորություն է տալիս միևնույն քանակի չը ուղղ ոռոգելի մեծ տարածություններ:

Ոռոգման անգական աղբյուրները միասին վերցրած չը ի մեծ սեսուրսներ են ներկայացնում, սակայն առանձին վերցրած փոքր են: Դրանք սովորաբար փոքր գետակներ են, առվակներ, փոքր ջրային աղականներ: Այդ իսկ պատճառով գրանցից յուրաքանչյուրը պետք է օգտագործել անավել ուղյունակ՝ ոռոգվող մեծ տարածություններ բնագրելու համար:

Այսուհեղ կարեւոր է նշել նաև այս, որ կառուցվող աղականների ու ոռոգվող հողերի մակերեսից գոլորշիացող չուրը ուժեղացնում է ներքին ջրաշրջաննախնթյունը, մեծացնում մինուրապային տեղումները ամուսնը, այսինքն այն ժամանակ, երբ չը կարիքն ամենից մեծ չափով է զգացվում:

Տեղական ջրային սեսուրսները, որոնք կարող են և պետք է օգտագործեն ոռոգման նպատակներով, գոյանում են գլխավորացին ի հաշիվ ձյան հալքի և վաղ գարնանային տեղումների: Նույն նպատակով օգտագործվում են տեղական փոքր գետակների, առվակների և գրունտի ջրերը (եթե միայն վերջինի չուրը պիտանի ուսումնական համար):

Ջրի այն քանակը, որը հոսում է տարվա ընթացքում մեկ հեկտար շրահավաք մակերեսից, տարբեր պայմաններում տարբեր է և տատանվում է հեկտարին մոտավորապես 200—1000 խորանարդ մետրի միջին: Պետք է հաշիվ առնել նաև այս, որ այդ չը կարությունը

մասը զանազան պատճառներով կորչում է և շի օգտագործվում: Հստ ակտղեմիկոս Ա. Հ. Կոստյակովի, ջրային ավագաններում ոսով-ման նպատակներով հնարավոր է կուտակել ջրահավաք մակերեսից հոսող ջրի միայն 40—60 տոկոսը: Հայտատանի լինային շրջան-ների պայմաններում մեկ հեկտար հողամաս ջրելու համար պահանջվում է 1500-ից մինչև 3500 խորանարդ մետր ջուր: Այդ քանակը կախված է մշակվող կուտափաններից, հողից, կլիմայից: Դիտողությունները և հաշվառումները ցույց են տալիս, որ ջրային ավագանի ջրով ոսով ոսով տարածությունը կազմում է ջրահավաք տարածության մոտ 3—10 տոկոսը: Այդ տոկոսը մեծանում է երկրագործության խոտագաշտացին սիստեմի կիրառման գեպ-քում, որովհետեւ սարուկտուբացին հողերում ոսով ման նպատակով ջուրը տրվում է ավելի փոքր նորմաներով: Այդպիսի հողերում շրման թիվն ևս կրճատվում է:

Շատ կարևոր է ջրային ավագանների կառուցումը ոսով տարածություններից բարձր տեղերում, որպեսզի հնարավոր լինի կիրառել ինքնահոս ոսով ման եղանակը: Ջրային ավագանի և ամ-բարտակի տեղը ընտրելիս խստորեն պետք է հաշվի առնել գեղողոքիա-կան պայմանները և ընտրել ջրի համար անթափանցելի դրույտներ, որպեսզի ջուրը շծծվի հողի մեջ և լկորչի անտեղի: Վարարումների ժամանակ ավագանին սպառնացող վտանգը կանխելու նպատա-կով պետք է ունենալ օժանդակ, ավելորդ ջուրը ավագանից դրս-թողնելու ջրթողք (Յօջուցք): Եղած ջրային ոեսուրները լովա-գույն կերպով օգտագործելու համար պետք է կիրառել ոսով ման կատարելագործված՝ ակուային ձեռք և ջուրը բաց թողնել խողո-վակների միջով: Զգալի թեքություն ունեցող լանջերում հողատա-րումից խուսափելու համար հողի մշակման աշխատանքները պետք է կատարել լանջին ուղղահայաց ուղղությամբ, իսկ ոսով ման ցան-ցը կառուցել այնպես, որ ջրային քարտերը ունենան մինիմալ թեք-րություն և դարձյալ լանջի ուղղությանը հակառակ ուղղություն:

Որոշ պայմաններում, առանձնապես բարդ ոենքի գեպքում, լավ է ֆեկտալիս է արհեստական անձրեացումը: Այս եղանակով ոսով հոսումը հնարավորություն է տալիս տնտեսելու ջրի մեծ պաշար և մեծացնելու ոսով տարածությունները: Կարենու է նաև այն, որ ոսով ման այդ եղանակը հողը քիչ է փոշիացնում և դաշտի մա-կերեսի հատուկ պլանավորում չի պահանջում:

Առողջության սիստեմների տեխնիկական վիճակը լավացնելու, ուսուցող ջրի ճիշտ օգտագործման վրա կոնտրոլն ամենազննելու և ջրման տեխնիկան վճռականորեն լավացնելու դրծում՝ խոշոր դեր պատկանում է Գյուղատնտեսության և Զբային տնտեսության միջարձությունների այն բաժիններին, որոնց վրա գրիչած է ջրային ռեսուրսների շահագործման ծառայությունը՝ Պրակտիկան անժխտելիորեն ցուց է տալիս, որ այս դրծի դրվագից մեծ շափով կախված է ոչ միայն հողային և ջրային ռեսուրսների ճիշտ օգտագործումը, այլ և մշակվող կուլտուրաների բարձր բերքի տպահովելու և ոսողվող հողերի պատշաճ մեջիրատիվ վիճակը ուղարկությունը:

Ապացուցված է, որ ոսողվող հողերի մեջիրատիվ վիճակի վրա անմիջականորեն ազդող ու ճանճացում առաջացնող պատճառներից մեկը ոսողվող ջրի ոչ ճիշտ օգտագործումն է, չթանը և ոսողման նորմաների կոպիտ խախտումը: Այս պատճառը շահագործման ծառայության ճիշտ կազմակերպման դեպքում կուգայի է և պետք է արագորեն վերացնել:

Այդ տեսակետից նախօրոք պետք է կազմել ջրօգանակարգման պլան և խոսորեն հետեւ, որպեսզի այդ պլանը լրիվ և ժամանակին իրագործվի: Պարզ է, որ այդ պլանում իրենց պատշաճ տեղը պետք է գտնեն մշտիվող յուրաքանչյուր կուլտուրայի ազդուելու հական պահանջները՝ ջրման նորմաների և ժամկետների նկատմամբ:

Այդ աշխատանքները սխալ կազմակերպելու դեպքում տեղի է սննդում ոսողվող ջրի հսկայական անօգուտ կորուստ, բացի այդ զգալի շափով բարձրանում է գրունտի ջրի մակերեսը, առաջացնելով թանկարժեք հողերի աղակալում և ճանճացում: Այդ հողերը մեջիրացիայի հնթարկելու և նորից դյուզատնտեսական օգտագործման տակ գնելու համար պահանջվում են լրացուցիչ ծախուեր, որը ծանր է նստում տնտեսության վրա: Կարերագույն խնդիր է նաև այն, որ եղած ջրային ռեսուրսները սխալ օգտագործելու և մեջիրատիվ ցանցը պատշաճ վիճակի մեջ չպահելու հետեւանքով խիստ պակասում է ջրի քանակը և կրճատվում ոսողվող հողերի տարածությունը: Վերջապես, այլ թերությունների հետեւանքով թանգանում են մեջիրատիվ ցանցի կառուցման և շահագործման աշխատանքները:

Ելու բոլորը ծանր է նստամ ոռոգվող երկրագործության վրա և իջևնում նրա արտադրողականությունը:

Փորձերը ցուց են տալիս, որ հողի մակերեսային պիտից ուղղակի պահանջնում է քրի գոլորշիացումը հողի մակերեսից 1,5—2,0 անգամ:

Երկրագործության խոտադաշտացին սիստեմի մեջ մտնող թվաբեկած՝ միջոցառումների ուղղությամբ Հայկական ՍՍՌ-ում 1949—1950 թ. թ. կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

Քոլոր ջրանցքները մաքրվելու են ամեն տեսակի բերվածքներից; բայց որում 1949 թվին, մինչև ոռոգումն սկսելը, նախատեսվում է կատարել 900 հազար խորանարդ մետր աշխատանք, որը կազմում է ջրանցքների մաքրման տարեկան պլանի 90 տոկոսը:

Ամեկայն միայն ջրանցքների մաքրմամբ աշխատանքները չեն սույնամափակվում: Լայն աշխատանքներ են տարվում ջրանցքների և հիդրոկառուցումների վերանորոգման ուղղությամբ: Նույնանման աշխատանքներ են ծավալվել նուև ջրային ավագանների և ոռոգման ցանցի նկատմամբ: Ամենահարձ ժամանակամիջոցում ավարտվել են նաև ջրհանների վերանորոգման աշխատանքները:

Մարտաշատի, Զանգիբրանարի և Էջմիածնի շրջաններում խոշոր աշխատանքներ են տարվել և տարվելու են նախկինում ոռոգվող և այժմ պատվատնահսական շրջանառությունից դուրս մնացած հոգացին տարածությունների լրիվ իրացման և օգտագործման ուղղությամբ:

Թուլինի շրջանի Մաստարա պյուլի լենինի անվան կոլխոզում կառուցվում է մի ջրային ավագան, որի հիմնական մասն արտեն ավարտված է: Այդ ավագանի շահագործումից կոլխոզում ոռոգվող հողատարածությունն ավելանալու է 800 հեկտարով:

Հայտատանի լիոնային և նախալենային շրջանների հայահանիկային կոլխոզների մեծ մասում ոռոգումը հիմնականում իրագործվելու է անմիջականարեն կոլխոզների ուժերով կառուցվող ոռոգման փորք սիստեմների միջոցով: Այդ հողամասերի ոռոգումը հիմնականում կատարվելու է ձնհալքից ստացվող ջրի և աղբյուրների ջրի հավաքման և օգտագործման միջոցով: Այդ նպատակով կառացվելու են մեծ թվով լճակներ և ջրային ավագաններ այնքանոր անհերում, որ զա հնարավոր է իրագործել տեղանքի հարմա-

բության տեսակետից։ Արդեն իսկ 1948 թվին Հայկական ՍՍՌ-ում՝ այդ ուղղությամբ կատարվել է մեծ աշխատանք։ Լճակներ և ջրացին ավազաններ 1949—1950 թ. թ. պլանացին կարգով կառուցվելու հն թարինի շրջանի 16 կոլխոզներում, որոնց մեջ կուտակմած ջրով ոռոգվելու է 481 հեկտար տարածություն։

Մրանից բացի շրջանի բոլոր պայմանական ոռոգվող հողերը ոռոգվելու հն լրիվ և օգտագործվելու հն տեխնիկական կուտարքաների մշակման համար։

Այս բոլորից բացի, մի շաբթ կոլխոզներում կառուցվելու հն նաև փոքր ջրանցքներ։

Ոռոգվող դաշտերում անհրաժեշտ է սահմանել պլանացին ջրօգտագործում, պայքարել ջրի ավելորդ ծախսումների պեմ չրանցքներում, առուներում, դաշտերում և կիրառել բարձր ազգա-տեխնիկա, որը բխում է երկրագործության խոտադաշտացին սիօ-տեմից։

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

### ՊՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԱՆՏԱՌԱՏՆԿՄԱՆ ԵՎ ԼՃԵՐԻ ՈՒ ԶՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԽԱՆԻՉԱՑԻԱՆ

Ի՞նչպես հայտնի է, բնության վերափոխման ստալինյան պլանի ժեղ նախատեսվում է լայնորեն մեխանիզացիայի և ննթարկել պաշտպանական անտառատնկման, ինչպես նաև լճակների և ջրացին ավագանների կառուցման աշխատանքները։ Այդ նպատակով սուեզդվելու են 570 անտառապաշտպան կայաններ, որոնց խնդիրն է իրականացնել այն առավել ծանր և աշխատունակ պրոցեսների կոմպլեքսը, որը վերաբերում է հողի մշակմանն ու նախապատրաստմանը, տնկումներին, անտառաշերտերի խնամքին, նաև լճակներ ու ջրացին ավագաններ կառուցելուն։

Դրանից բացի այդ կայանների խնդիրն է՝ իրականացնել պետական անտառապին շերտերի տնկման աշխատանքները, անտառատնկումներ կատարել պետական անտառապին ֆոնդի հողերի մրա և անտառապատել ավագուտները, ձորերը, ձորակներն ու դետերի ափերը։ Աշխատանքների թվարկած կոմպլեքսի իրականացումն ապահովվելու է շնորհիվ այն հղոր էներգետիկայի, որով դիմված են լինելու անտառապաշտպան կայանները։

Այդ կայտնների էներգետիկ բազան բաղկացած է լինելու արարեր տիպի տրակտորներից։ Ամենից հղոր «Ը—80» դիվել—տրակտորները նախատեսված են մելիորատիվ աշխատանքներ և խոր վար կատարելու համար։ Միջին հղորավորական «ՍՏԶ—ՆՍՏԲ» թրթուրավոր տրակտորները օգտագործվելու են պլխավորակները, երեսվար, ցելիքի կուլտիվացիա և ադրեգատացին անտառատնկում կատարելու համար։ «ԿԴ—35» թրթուրավոր և «ՌԻ—2» անիվավոր փոքր գարարիտացին տրակտորները կատարելու են

ցանքի և հողի խնամքի աշխատանքները անտառային անկումնեցում: Անտառապաշտպան կայաններն ունենալու են նաև փոքր այգերանջաբանոցային «ՏՌՈՎ» տրակտորներ, որոնք հայրենական, անիվերսալ բնույթի նոր մեքենաներ են: Այս տրակտորներն առաջուված են լինելու անհրաժեշտ քանակությամբ գութաններով, կուլտիվատորներով, շարքացաններով և սպասարկելու են կոլխոզային անկարանները: Մանր շագանակագույն հողերի գոտում, խոր կուլտուրական վար և պլանտաժ կատարելու համար կայաններն առաջուված են լինելու համապատասխան կցորդ մեքենաներով, որոնք միաժամանակ օգտագործվելու են բնական խոպանների երեսվարի, նախատնիման և նախացանքային կուլտիվացիացի աշխատանքները կատարելու համար:

Այս բոլորից բացի հոկտեմբերի 20-ի որոշմամբ անտառապաշտպան կայանները լրիվ ապահոված են լինելու հատումը անտառային մեքենաներով և գործիքներով: Օրինակ, պլանով նախատեսնվում է այդ կայաններին հատկացնել պահանջվող քանակությամբ անտառատնկման մեքենաներ, անտառային շարքացաններ, հատուկ անտառային կուլտիվատորներ, գութաններունիները անկարաններից հանելու համար, ինքնագնաց անձրևացնող սարքավորումներ՝ անկարանները չըելու համար, տրակտորացին սրսկիչներ ու փոշոտիչներ և այլն:

Մի առանձին խումբ կազմում են ճանապարհային և մելիորատիվ մեքենաները, որոնք նախատեսված են ճանապարհային ավագանության համար կառուցման, ինչպես նաև ճանապարհայինարարության հետ կապված հողային աշխատանքներ կատարելու համար: Անտառապաշտպան կայանների տիստային սարքավորման կազմի մեջ մտնում են նաև տարրեր տրանսպորտային մեքենաներ՝ ապրանքատար ավտոմեքենաներ, ավտոկցորդներ, ավտոցիստերներ, ավտոշարժական «Յ» տիպի արհեստանոցներ: Այդ արհեստանոցներն անհրաժեշտ են դաշտային պայմաններում տրակտորները, կցորդ մեքենաներն ու գործիքները վերանորոգելու համար:

Անտառատնկումը ըստ իր բնույթի առանձնապես շատ աշխատանք պահանջող գործ է: Այդ պահանջն է՝ ավելի մեծ է լինում, եթե այն կատարվում է հին ձևով, առանց մեքենաների և գործիքների օգտագործման: Այսպես, անտառային շերտի յուրաքանչյուրը մեկ հեկտար հող խնամելու համար պահանջվում է 12,5

մարդ-օր, այն ինչ տրակտորային կուլտիվատորը այդ նույն աշխատանքը կատարում է 2,2 մարդ-օրում, այսինքն աշխատանքը կրճատվում է մոտ 6 անգամ։ Մեկ հեկտար դաշտավաշտպան անտառատնկումներ, աճեցնելու և հետագա հինգ տարիների ընթացքում խնամքի աշխատանքներն իրականացնելու համար, առանց մեքենայական ուժի օգտագործման, պահանջվում է 185 մարդ-օր։ Տրակտորային քարշի օգտագործման դեպքում այդ պահանջը կազմում է ընդամենը 31,5 մարդ-օր։ Համարյա նույն շափով աշխատանքի պահանջը պակասում է նաև տնկարաններում, երբ ձեռքնվանք կատարելու փոխարեն այդ աշխատանքը կատարվում է ձիու շարքացանով։

Այս, ինչպես և բազմաթիվ այլ օրինակներ վկայում են այն հոգատարության մասին, որ ցուցաբերում է բոլշեիկյան պարախան և սովետական իշխանությունը՝ աշխատանքները մաքսիմալ շափով մեխանիզացիայի ենթարկելու և կոլխոզնիկների ու կոլխոզնիկունիների աշխատանքները հեշտացնելու ուղղությամբ։ Այս կապակցությամբ, իրենց հերթին անտառապաշտպան կայանների աշխատավորները պարտավոր են սովետական կառավարության կողմից իրենց տրամադրության տակ դրված տեխնիկան ճիշտ օգտագործել, ժամանակին ու բարձրորակ իրականացնել նրա խնամքը և հասնել մաքսիմալ արտադրողականության։

Բնության վերափոխման ստալինյան պլանը իր մեջ ընդգրկում է գրաշտապաշտպան անտառատնկումների և երկրագործության խոռագաշտային սիստեմի ողջ կոմպլեքսի կազմակերպումը լայն մասշտաբներում։ Միայն սոցիալիզմի երկրում հնարավոր է այսպիսի հոյակապ աշխատանքների իրականացումը։ Դոկտուշակե-կոստիչեի—Վիլյամսի կոմպլեքսի վրա հիմնված աշխատանքների անթերի իրականացումը կարճ ժամանակամիջոցում կփոխի մեր երկրի ողջ պատկերը, կրաքրացնի հոգի արտադրողականությունը, կոլխոզնիկի աշխատանքը կդարձնի Ել ավելի արդյունավետ և կամրապնդի սովետական պետության տնտեսական հզորությունը։

Մեզ մնում է այժմ լարել մեր բոլոր ուժերը և մորիլիվացնել մեր բոլոր ստեղծագործական ընդունակությունները՝ մեր ուսապուրիկայի բոլոր կոլխոզներում լրիվ կերպով կիրառելու երկրագործության խոռագաշտային սիստեմը, որը խոստանում է փայլուն ապագա։ Հեռու չէ այդ ապագան, որովհետեւ Դոկտուշակե-կոստիչե-

Վիլյամսի կոմպլեքսն այժմ դարձել է սովորական լայն հասարակայնության սեփականությունը, որովհետեւ այդ կոմպլեքսի իրականացումն իրենց ձեռքն են վերցրել մեր ազատ ու երջանիկ երկրի աշխատավորները, որովհետեւ Դոկուչաևի, Կոստիչևի, Վիլյամսի ազնիվ ձգտումները գործի են վերածում սոցիալիստական դաշտերի աննկուն ստախանովականները, որովհետեւ այդ ամբողջ գործն իրեն ձեռքն է վերցրել մեր հարազատ պարտիան, կառավարությունը և գիտության մեծ կողմինեց ու բարեկամ Ստալինը:

---

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

էջ

Հնդհանուր մաս

5

1. Պաշտպանական անտառաշեղտերի տնկումը չըրաժաններում, ցանքաշըրջանառությունների դաշտերի սահմաններում, ձորակների և հեղեղատների լանջերում, գետերի և լճերի եզրերին, ջրամբարների և լճակների շուրջը, նաև ավագուտների անտառապատումը և ամրացումը . . . . . 25
2. Տեղիտորիայի ճիշտ կազմակերպումը՝ խոստադաշտային դաշտային և կերպային ցանքաշրջանառություններ արմատավորելու և րուր հողատեսքերը ուղղիոնալ օգտագործելու միջոցով . . . . . 47
3. Հողի ճիշտ մշակման և ցանքերի խնամքի սիստեմը, առաջին հերթին ու ցեղերի, ցրտաճերկի և խողանի երեսվարի լայն կիրառումը . . . . . 76
4. Օրգանական և հանրային պարաբռանյութերի ճիշտ սիստեմի կիրառումը . . . . . 100
5. Տեղի պայմաններին հարմարված, բարձր բերք տվող սուրերի ընտրված սերմով ցանք կառարելը . . . . . 113
6. Շուոգման զարգացումը տեղի ջրային ռեսուրսների լայն օգտագործման բաղայի վրա՝ լճակներ և ջրալին ավազաններ կառուցելու միջոցով . . . . . 134
7. Գյուղատնտեսական աշխատանքների, անտառատնկման և լճերի ու ջրային ավազանների կառուցման մեխանիզացիան . . . . . 142



Պատ. խմբագիր՝ Ե. ՂԱԶԱՐՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝ Վ. ԳԱՎՅՅԱՆ  
Կոնսուլ սրբագրիչ՝ Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

ՎՅ 02269

Պատվեր № 892


Տիրաք 6.000

Հանձնված է արտադրության 10/XI 1949 թ.:

Ստորագրված է տպագրության 9/II 1950 թ.:

Տպագրական 9½ մամուլ:

Հայագովառական վայության № 2 տպարան, Կոռնյահի № 3,  
Երևան, 1950 թ.:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0009236

ԳԻՒԾ 5 ՌԱԴԻՐ.

A 17701

17701